

ՈՐԲԱՇԽԱՐՀ

Յուշագրություն Յեղասպանությունէն
Վերապրողի

ՎՌԱՄ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

ՈՐԲԱՇԽԱՐՀ

*Յուշագրություն Յեղասպանությունն և
Վերապրողի*

Խմբագրեց եւ ծանոթագրեց
Դոկտ. Վաչե Դազարեան

Գահիրէ
2020



Հեղինակը՝ Վոսան Սամուելյան

Բովանդակություն

Ներածական	7
Որբաշխարհ (Յուշագրություն)	13
Յաւելուած	
Եօթը Հարիւր Յիսունը	51
Հէնրի Մըրֆի	55
Որբաշխարհ	61
Հայրենիք[ը] Մեզ Կը Կանչէ	79
Ծանօթագրութիւններ	81

Ներածական

Ներկայ թերաւարտ¹ յուշագրութեան հեղինակն է հայութեան բնաջնջման թրքական փորձին հետեւանքով որբացած հայ երախաներու հաւաքման եւ պահպանման նպատակին իր համեստ աշխատութիւնը նուիրաբերած երախտաւոր մը՝ Վոամ Սամուէլեան, որ Շահէ անունով կը ներկայանայ ընթերցողին:

Մեր տրամադրութեան տակ ունեցած ենք յուշագրութեան սեւագիր ու մաքրագիր օրինակներ, առաջինը՝ արելի ծաւալուն: Մաքրագրուած օրինակին մէջ հեղինակը Շահէին պատմութիւնը ականդ ձգեր է երրորդ անձի դէմքով, մինչդեռ սեւագրութեան մէջ առաջին դէմքով շարադրուեր է այս ինքնակենսագրական փորձը: Այս երկու տարբերակներուն գոյութիւնը կը բացատրէ թէ ինչու Շահէ երկու դէմքով կը ներկայանայ այս յուշագրութեան մէջ:

Թէ մաքրագիր եւ թէ սեւագիր բնագրերը ենթարկեր ենք խմբագրումի ու յարմար դատեր անոնց կցել «Որբաշխարհ» խորագրեալ յօդուածը, որ Վոամ Սամուէլեան ստորագրութեամբ լոյս տեսեր է 1952-ին, «Ազդակ»ի 25-ամեակի բացառիկ թիւին մէջ:

Յարմար դատեր ենք նաեւ հատորին աւարտին, իբրեւ յաւելում, տալ կարգ մը առնչակից գրութիւններ:

* * *

Ո՞վ է, սակայն, Վոամ Սամուէլեան, որուն կեանքին միայն մէկ հատուածն է որ յուշագրութեան ընդմէջէն կը յայտնուի մեզի:

Աչքերը բացեր է ան 1903-ին, Թալաս, բոյնին մէջ հայատրոփ եւ հայրենասէր ծնողներու, որոնք իրենց զաւակներուն տալով Վոամշապուհ, Շուշանիկ, Սաթենիկ եւ Հայաստան անունները, ուզեր են անոնց մէջ վառ պահել ազգային ոգին՝ ի հեճուկս ժամանակի թրքախօսական պարտադրանքներուն:

Իր պատանեկան տարիներու անցուդարձերը ինք հիւսիսէ եւ պատկերաւոր լեզուով գրառեր է արդէն իր յուշագրական փորձին մէջ:

1918-ի Նոյեմբերին, Առաջին Աշխարհամարտի ավարտը ավետած Զինադադարէն անմիջապէս ետք, իբրեւ Թալասի Ամերիկեան Քոլէճի թերաւարտ աշակերտ իր անգլերէնի իմացութիւնը նկատի ունենալով, Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի (Նիր Իսթ Ռըլիֆ)² տուեալ շրջանի պատասխանատուները զինք կոչեր են որբահաւաքի եւ ուսուցիչի պաշտօններուն:

1923 Նոյեմբեր 16 թուակիր վկայագիր մը,- որուն տակ ստորագրեր են Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի Կեսարիոյ Գաւառի տնօրէն Ճոզըֆ Պիչ³ եւ որբանոցներու տնօրինուիի Սթեյլա Լաֆրիճ⁴, - կը նշէ թէ Սամուէլեան ակնի քան երեք տարի Նպաստամատոյցին մօտ հերթաբար վարեր է հետեւեալ պաշտօնները՝ ուսուցիչ մանչերու որբանոցին, ապա քարտուղար մանչերու արհեստանոցին, իսկ վերջին երկու ամիսներուն ալ քարտուղար էֆքերէի մասնաճիւղի պահեստանոցին:

Նպաստամատոյցի Թալասի մանչերու արհեստագիտական վարժարանի տնօրէն էտ. Մարթըն⁵ իր 5 Մայիս 1921 թուակիր հաստատագրով կը վկայէ թէ Սամուէլեան 8 ամիս եղեր է իր անձնական քարտուղարը. իսկ Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան (Նիր Իսթ Լիկ)⁶ ընդհանուր քարտուղար Հենրի Մըրֆի⁷ 9 Նոյեմբեր 1929 թուակիրով մը կը յայտնէ թէ ան 1921 Մայիսէն մինչեւ 1922 Թուրքիոյ մէջ գործեր է իբրեւ իր թարգմանիչն ու քարտուղարը:

Երբ Քենալական շարժման հետեւանքով բազմաթիւ հայերու հետ Սամուէլեան ալ հեռացեր է Թուրքիոյ բռնագրաւած հայկական հողերէն, Լիբանան հաստատուելով անմիջապէս ստանձներ է Նպաստամատոյցի Մամըլթէյնի որբանոցային արհեստանոցին վերակացութիւնը:

1924-ին, շուրջ երկու տարիով անցեր է Հալէպ՝ իբրեւ քարտուղար եւ մասնաժամանակեայ հաշուապահ Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան: Այնուհետեւ վերադարձեր է Պէյրութ, ստանձնելու նոյն ընկերակցութեան հաշուապահի պաշտօնը:

Իր այդ պաշտօնին բերումով, 1925-ի Մարտին դարձեր է հիմնադիր-արտօնատէրը «Որբաշխարհի Աստղը» պաշտօնաթերթին, որուն մէջ գրեր է խմբագրականներ եւ կատարեր տեղեկատուութիւններ՝ մինչեւ 1930:

1928-ին փորձեր է Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ հետեւիլ բարձրագոյն ուսման. բան մը՝ զոր երազեր էր երկար աւտեն: Սակայն նիւթական պայմանները պատնէշ բարձրացուցեր

են՝ հակառակ մուտքի քննությունները յաջողությամբ յանձնաժողովում:

Այս փորձէն անմիջապէս ետք, 1928-ի Փետրուար 8-ին, իրեն վստահուել է Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան Պէյրութի մասնաճիւղին քարտուղարութիւնը, զոր վարել է մինչեւ 30 Սեպտեմբեր 1930: Ընկերակցութեան ընդհանուր քարտուղար Սթիւրտ Տ. Ճեսըփ⁸ ցաւով ընդունել է Սամուէլեանի հրաժարականը, քանի որ իր հեռացումով Ընկերակցութիւնը կը զրկուէր պարկեշտ, բարեխիղճ, պարտաճանաչ եւ նուիրեալ պաշտօնեայէ մը:

1929-ին ամուսնացել է Եսթեր Ղազարեանի⁹ հետ եւ ունեցել երեք զաւակ՝ Ալիս, Յակոբ եւ Սեդա:

Որբախնամ գործունէութեան հրաժեշտ տալէ ետք, Սամուէլեան հաշուապահական պաշտօն վարել է քարիւղի անգլիական Շէլ ընկերութեան մօտ մինչեւ հանգստեան կոչուիլը: Այնուհետեւ իր ուշադրութեան առարկան դարձուցել է մինչ այդ իր հաստատած չինական արձանիկներու եւ զարդեղէնի սեփական վաճառատունը:

Սամուէլեանի ազգային գործունէութիւնը շարունակուել է Շէլի իր պաշտօնին առընթեր: 1939–1956 ատենապետել է Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ եւ վարժարանի հոգատարութիւնն ստանձնած թաղական խորհուրդին՝ օգտակար դառնալով նաեւ անոնց շինութեան աշխատանքներուն: Հիմներ է թաղին երիտասարդներէն բաղկացած Կրթասիրաց Միութիւնը՝ նիւթապէս եւ բարոյապէս օժանդակելու վարժարանին: Եղել է, նոյնպէս, հիմնադիրներէն մին եւ առաջին ատենապետը Համազգայինի Էշրեֆիէի մասնաճիւղին: Այդ տարիներուն աշխատակցել է Պէյրութի «Ազդակ» օրաթերթին Վռամ ստորագրութեամբ:

Իբրեւ պարկեշտ եւ ուղղամիտ ազգային, ան յաճախ ապրել է դառնութիւններ, սակայն շարունակել է իր ազգային գործունէութիւնը, յատկապէս ընդառաջելով երջանկայիշատակ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի յորդորներուն ու խնդրանքներուն, մինչեւ որ վրայ հասել են 1956-ի տխուր դէպքերը եւ եղբայրասպանութեամբ յատկանշուած այդ օրերուն, իր քննադատութիւններուն թիրախ դարձած Դաշնակցութեան կողմէ իրեն դէմ արձակուած մահափորձի վճիռէն ետք¹⁰, ամբողջովին հեռացել է ազգային գործերէ՝ հեռուէն խանդավառուելով Հայաստանի վերելքով:

Մահացեր է 27 Հոկտեմբեր 1973-ին, բռնուած ըլլալով անբուժելի հիւանդութենէ:¹¹

* * *

Յուշագրական տողերն ինքնատիպ վկայութիւն մը բերելով կը նպաստեն թրքական հայաջինջ քաղաքականութեան գագաթնակէտը կազմող նախաձեռնութեան՝ ցեղասպանութեան, փաստագրման եւ ուսումնասիրութեան ճիգին:

1952-ին մամուլի յանձնուած «Որբաշխարհ» գրութիւնը կը ներկայացնէ սեղմ ուրուագիծը Ամերիկեան Նպաստամատոյցի որբահաւաք եւ որբախնամ աշխատանքին՝ կարգ մը վիճակագրական տուեալներով մէկտեղ:

Իր ընդհանրութեան մէջ, հատորը հակիրճ բայց յստակ կերպով ցոյց կու տայ թէ Քեմալական Թուրքիոյ հայասպան քայլերը շարունակութիւնն էին թէ՛ Սուլթան Ապտիլ Համիտի օրով թափ առած եւ թէ՛ 1908-ին սուլթանին իշխանութիւնը փոխարինելու եկած Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան կիրարկած քաղաքականութեան:

Սպիտակ ջարդի ստուերը, որ կը յայտնուի յաւելուածի բաժնին մէջ խմբուած գրութիւններուն ընդմէջէն, կը յուշէ թէ ցրօնքի վերածուած տարագիր վերապրողներու մէջ բնաջնջման մանգաղը կը շարունակէ իր կոտորակիչ դերը արեան փոխարէն ձուլման ճամբով ու կը դառնայ համախմբումի, հայրենահաւաքի, եւ այլապէս ալ զգաստութեան կոչ:

* * *

Անհրաժեշտ կը համարենք նշել թէ հոս ներկայացուող գրութիւններու հրատարակութեան առաջին փորձը չէ այս:

1987 թուականի ամրան, Միացեալ Նահանգներ մեր առաջին շրջապտոյտի միջոցին, Նիւ Եորքի մէջ Մարիա Սամուէլեան, արդէն հանգուցեալ Յակոբ Սամուէլեանի կողակիցը, մեր տրամադրութեան տակ դրեր էր պատճէնները բաւական խունացած գրութիւններուն, խնդրելով որ հրատարակութեան տանք զանոնք:

Լիբանան տակաւին բռնուած կը մնար քաղաքացիական պատերազմով ստեղծուած անբնականոն պայմաններու արքանին

մէջ եւ Լիբանան վերադառնալէ յետոյ մեր առօրեայ պարտաւորութիւնները լրացնելէ ետք, երեկոներուն լապտերի լոյսով կը շտապէինք որքան կարելի է արագ խմբագրել եւ տպարան յանձնել գործը, որ իր աւարտին կը հասնէր մեր Մ. Նահանգներ հաստատուելու նախօրեակին:

Տպագրութեան իրագործումը վստահեւր էինք տպարանատէր Մարտիրոս Վարդանեանին, բայց մեր բացակայութեան պատճառով գործը առեր էր դանդաղ ընթացք եւ Վարդանեանի վերահաս մահէն ետք կարելի չէր եղած գտնել հետքը մեր ձեռագիր աշխատանքին:

Պէտք պիտի ըլլար սպասել աւելի քան երկու տասնեակ տարի, որպէսզի ներկայանար առիթը վերստին ձեռք առնելու նիւթը, այս անգամ հիմք ունենալով ո՛չ թէ պատճէները, այլ՝ իսկական բնագրերը, զորս Մարիա բարի գտնուած էր վստահիլ մեզի եւ որոնց արժանատի վերջնակայանը կրնայ ըլլալ Երեւանի մէջ գործող Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Հիմնարկը:

Դոկտ. Վաչէ Ղազարեան



Վոհամ Սամուէլեան իր կողակցին՝ Եսթերի հետ, 1930:

ՈՐԲԱՇԽԱՐՀ

Յուշագրութիւն

Կան բառեր, որոնք ազգերու կեանքի հոլովոյթի ընթացքին պատահած ցնցիչ ու ճակատագրական դէպքերը իրենց հարազատութեամբը պատկերացնելու համար կը ստեղծուին ու իրենց ետին թազնուած բայց միշտ թափանցիկ իմաստովը օժտուած, ժողովուրդներու պատմութեան մէկ շատ կարեւոր հանգրուանը կը տարազեն:

ՈՐԲԱՇԽԱՐՀ: Պատահաբար չընտրեցինք այս խորագիրը: Բայց ւերբ հայը իր սրբազան հայրենիքէն ներս մեծ ու պզտիկ որբաշխարհներ ունեցած չէ: Ակնարկ մը նետենք պատմութեան էջերուն վրայ, յատկապէս այն օրուրնէ սկսեալ՝ երբ թուրքերու նախահայրերը որպէս պզտիկ ցեղախումբ ոտք կոխեցին Հայաստան աշխարհէն ներս, իրենց հետ միասին բերելով ամէն միջոց որ պիտի ծառայէր բնիկ ժողովուրդի ոչնչացման, արտագաղթին եւ յատկապէս թրքացման: Ետ նայինք եւ դիտենք. միթէ սուլթանները հայահոծ շրջաններէն ներս պարբերաբար գործադրուած նենգութեամբ, ջարդերով եւ խժոժութեամբ նոյն նպատակը չէին հետապնդեր: Այսօրուան Թուրքիոյ հիմնադիր Աթաթիւրքը¹² իր ճառը կը վերջացնէր «Նէ մութլու թիւրքիւմ տիլէնէ» («Երանի անոր որ թուրք եմ կ'ըսէ») բացագանչութեամբ: Իսկ նախորդները, յատկապէս Թալաաթի¹³ բերնով, շրջապատէն ներս կը պատգամէին. «Պու վաթանտա թիւրքլէրտէն պաշգասընա եէր եօգ» («Այս հայրենիքէն ներս թուրքերէ զատ ուրիշներու տեղ չկայ»): Այս երկու յայտարարութիւնները բաւական պերճախօս են ու բացատրութեան չեն կարօտիր: Այս բոլորին հանդէպ հայ ժողովուրդը, յատկապէս վերջին հարիւր տարիներու ընթացքին, ինքնապաշտպանութեան համար ի՞նչ միջոցներու դիմած է եւ կամ իրմով մօտէն կամ հեռուէն հետաքրքրուող ազգերը քաղաքական գետնի վրայ ի՞նչ դիրք որդեգրած են, այս բոլորը արդէն մեր նիւթէն դուրս կը մնան:

Արդարեւ, Առաջին Ընդհանուր Պատերազմին,¹⁴ օրուան թուրք իշխանութիւնը, Իթթիհատ եւ Թերաքքը կուսակցութեան¹⁵ պարագլուխներ Թալաաթ, Էնվէր¹⁶, Պէհաէտտին Շաքիր¹⁷, Ճէմալ Ազմի¹⁸ եւ ուրիշներ, պատեհ ատենը եկած նկատեցին իրենց ոճրային ախորժակները գործադրելու եւ բան-թուրանական կայսրութեան երազով տարուած¹⁹, Անատոլիոյ ամբողջ տարածքին եւ յատկա-

պէս Հայկական Նահանգներու հայ ժողովուրդը ոչնչացնելու ծրագիրը գործադրեցին:

Անատոլուէն ներս հայութիւնը կը դադրի շնչելէ:

Ահա՛ այս ահաւոր երկունքէն կը ծնի նոր սերունդ մը... մանուկներ եւ մանուկներ՝ դիակներու տակէն ազատուած, մահուան ծորերուն մէջ մոռցուած՝ արիւնաներկ հողերու վրայ ծլած կարմիր ու ազազուն ծաղիկներ: Անատոլոյի ամէն կողմը դուք կը հանդիպիք անոնց: Փողոցներու անկիւնը ձգուած եւ անապաստան, սովալլուկ ուրուականներ: Ամէն դասակարգի պատկանող թուրքի եւ քիւրտի տան կամ դաշտային աշխատանքի լծուած ստրուկ ծառաներ, հարէմներու մէջ լլկուող հազարաւոր աղջնակներ: Այցելեցէք աւելի հարաւ եւ պիտի հանդիպիք անոնցմէ հազարաւորներու, որոնցմէ ո՛չ ոք պիտի համարձակի իր հարազատ անունով ճանչցուիլ: Ահա՛ւասիկ ձեզի իրենց ծնողաց արեան մէջ մկրտուած մանուկներ ու մանուկներ: Որբաշխարհ:

Ընտանեկան հարազատ օճախէն ու ծնողաց գուրգուրանքէն եւ խնամքէն զրկուած այս մանուկներուն էր վիճակուած իրենց նահատակ ծնողաց յաջորդն ու ժառանգորդը ըլլալու շատ ծանր բայց անխուսափելի պարտականութիւնը: Ուրեմն անոնք պէտք է որ ապահովուէին մահուան, անարգանքի, անօթութեան ու ամէն տեսակ զրկանքներու դէմ: Անոնց պէտք է որ ներշնչուէր վստահութիւն իրենց շրջապատին ու իրենք իրենց նկատմամբ: Պէտք է որ զգային խնամք ու գուրգուրանք, ստանային ուսում եւ դաստիարակութիւն: Մանաւանդ պէտք էր որ իրենց բացատրուէր հայու որդի ըլլալու եւ իրենց նահատակ ծնողաց ճամբով ընթանալու գերագոյն գիտակցութիւնն ու վճռականութիւնը:

Ահա այսպէս ստեղծուեցան որբաշխարհի բնակիչներու տուն-որբանոցները:

Բայց հոս մենք պահ մը կանգ պիտի առնենք եւ որբաշխարհը անմիջապէս նախորդող տարիներու մեր շրջապատի սեմէն ներս պիտի մտնենք:

*

* *

Անատոլոյի կեդրոնը բազմած Արգէոս լեռը վեփօրէն կ'իշխէ իր շրջապատին վրայ, որուն շուքին տակ ու Ս. Բարսեղ Հայրապետի²⁰ անուան լեռան ստորոտը իր բարձր դիրքով՝ Թալասը հեռուէն կը դիտէ հին Կապադովկիոյ գլխաւոր քաղաք Կեսարիոյ մզկիթները:

Ան իր լաւ կլիմային, առողջարար ջուրին շնորհիւ օդափոխութեան ամենալաւ վայրը կը նկատուէր: Բնակչութիւնը մօտաւորապէս 2500 հայ, յոյն ու թուրք ընտանիքներէ կը բաղկանար:²¹ Տուները, քարաշէն, աւելի շքեղ՝ բաղդատմամբ ուրիշ նման վայրերու:

Հայերը ունէին Վերի Թաղի Ս. Աստուածածին եւ Վարի Թաղի Ս. Թորոս քարաշէն գեղեցիկ եկեղեցիները, յարակից տողոց եւ աղջկանց յատուկ վարժարաններով:

Ընտանիքէն ներս կիները սովորաբար գորգագործութեամբ կը զբաղէին, իսկ տղամարդիկ արհեստի կամ առեստուրի գծով դէպի Անատոլիոյ տարբեր քաղաքները, Պոլիս, Չուգուր Օվա (Դաշտային Կիլիկիա), Իզմիր, Գոնիա պանդխտութեան կը դիմէին: Գարնան կը մեկնէին՝ աշնան իրենց օճախները վերադառնալու համար: Սակայն երբեմն ալ օտար ճամբաներու վրայ պանդխտութեան մէջ կառավարական սեղմումներու եւ հալածանքի ենթակայ՝ ժամանակի ընթացքին կը կորսուէին: Անոնք յաճախ ջորիներով եւ խմբովին կը ճամբորդէին:

Ըստ Արշակ Ալպօյաճեանի²² «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» գրքին²³, թալաւցի հայերու նախահայրերը եղած են քաջ եւ զէնք գործածող, ունէին յանդուգն ու առասպելական նկարագիր, բնական հարստութիւն ու ազնուապետական սովորութիւններ: Սակաւախօս, վստահելի, վեհանձն, անծածկամիտ, սակայն նուազ քաղաքավար: Կիները եղած են ճարպիկ ու հիւրասէր:

Ահա՛ այստեղ, 1914-ի Առաջին Ընդհանուր Պատերազմին նախորդող տարիներուն է որ կը հանդիպինք մանուկի մը, մեր անուանումով՝ Շահէին, ու կ'ընկերանանք իրեն եւ իր շրջապատին՝ անոր ծնունդէն մինչեւ անոր պատանեկան շրջանին աւարտիլը, 1918-ի Զինադադարը²⁴:

Վերի եւ Վարի թաղերը իրարու կը միանային Գարաման Պայրըի զառիվար ճամբով, որուն մէկ կողմը տուներ բարձրացած, իսկ դիմացը՝ կը բացուէր ձորակ մը, որմէ յետոյ կը տեսնուէին Վարի Թաղի տուները, յոյներու եկեղեցին, մզկիթը եւ հեռուէն՝ հորիզոնին վրայ՝ քաղաքը շրջապատող լեռնաշղթան: Այս ճամբուն վրայ էր Առաքել անուն պզտիկ փողոցի մուտքը, ուր կը գտնուի Շահէին ծնողներուն հին տունը:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԻՆ ՈՒ ՀԱՄԵՍՏ ՕՃԱԽ

Մուտքի դուռը, ո՛չ շատ պզտիկ եւ ո՛չ ալ մեծ, դուրսէն երկաթէ

խոշոր բանալիով կը բացուէր: Դրան վրայ կախ էր երկաթէ խոշոր հաւկթածեւ թակը: Մուտքը կը բացուէր վրան կիսով գոց բակի մը՝ անտաշ քարերով սալալատակուած: Անոր աջի սենեակը տեղ գրաւած էր ցորենի տախտակէ խոշոր սնտուկը, իսկ մէջտեղը՝ թոնիրը: Ձախին՝ երկու ճերմակ այծերու ախոռը: Բակին մէկ անկիւնը, գետնէն քիչ մը բարձր դիրքով տեղաւորուած էր օճախը՝ փայտով կերակուր եփելու համար. իսկ անոր դիմացը քարէ դարձդարձիկ աստիճաններով դէպի վեր՝ ամարանոց սենեակը եւ տանիք կը բարձրանային:

Օճախին մօտ էր նաեւ գետնի վրայ քիչ մը ցած դիրքով ձեռք լուալու եւ աղտոտ ջուր թափելու մէջտեղը ծակ քար մը: Դրսի դրան մուտքի անմիջապէս ձախին, երկու աստիճաններով վեր կը գտնուէր արտաքնոցը: Քարէ հաստ պատերով շինուած ձմեռուան խոշոր սենեակին փայտեայ մեծ ու հաստամարմին դուռը եւ միակ պատուհանը կը բացուէին դէպի բակը:

Գրեթէ ամէն փողոց եւ քիչ անգամ մեծ տուները եւ եկեղեցւոյ բակը ունէին իրենց ջուրի հորերը, որոնք ամէն աշնան մաքրուելէ յետոյ, կը լեցուէին Արգէոսէն դէպի այդ շրջանը հոսող եւ խմելու ու գործածութեան ծառայող միակ ջուրով: Թաղի կանայք պարան կապուած դոյլերով ջուրը հորէն դուրս հանելով պղինձէ խոշոր սափորներով՝ որոնք կը կոչուէին *կիւկիւմ*՝ տուն կը փոխադրէին:

Ձմեռուան սենեակի մուտքին անմիջապէս ձախին, գետնէն քիչ մը բարձր դիրքով [պահարանը] ահա՛ այս ջուրի սափորներուն, իսկ աջին պատին մէջ բացուած պահարանը՝ պղինձէ կերակուրի ամաններու, սաներու, գաւաթներու, պատառաքաղներու եւ դանակի, դգալներու, եւլն. յատկացուած էին: Ջուրի սափորներու անմիջապէս մօտը բարձրացող պատին միւս կողմը կը ծառայէր որպէս փայտանոց, որուն դիմացի պատէն դուրս ցցուած էր դարակաձեւ քար մը:

Շահէին նախահայրերուն կողմէ պատմուած ու մինչեւ անոր ծնողքը հասած տեղեկութեանց համաձայն, ժամանակին այս դարակ-քարին վրայ կը դրուէր ճրագը, որպէսզի ենիչէրիներու չարիքներուն դէմ պաշտպանուելու համար սենեակը քիչ մը լուսաւորուէր ու պատուհանէն դուրս լոյս չթափանցէր. այլապէս՝ գիշերուան որեւէ մէկ պահուն անոնք դուռը զարնելով «*գաշըղա պինէն*» («դգալի վրայ հեծնող») կը պահանջէին. խմորէ պատրաստուած բարակ թելի պէս կերակուր մը, որ դգալին քովերէն կը կախուի եւ «*էրիշտէ*»²⁵ կը կոչուի: Այս այցելութիւններու ընթաց-

քին նաեւ ծնողաց սարսափահար աչքերուն առջեւ ընտանիքի արու երախան ենիչէրի²⁶ օճախները կը փոխադրուէր: Այս քրիստոնեայ մանուկները ժամանակի ընթացքին կը թրքացուէին ու մեծնալով բանակի մաս կը կազմէին: Ենիչէրիներու կը վերագրուէր նաեւ ամայի ճամբաներու վրայ հանդիպած քրիստոնեային վրայ փորձել իրենց սուրբերուն կարողութիւնը:

Փայտանոցի մօտէն դէպի դիմացի պատը երկարող կամարին տակ Շահէին մօր օժիտի սնտուկը, միայն կողմնակի անցք մը ձգելով, սենեակը երկուքի կը բաժնէր: Սովորութիւն էր ձմեռուան ցուրտ ու ամէն կողմ ձիւնով ծածկուած ամիսներուն համար տունէն ներս պաշար ամբարել: Անոնցմէ գլխաւորներն էին՝ ալիւր, մորթուած կովի միսով պատրաստուած ապուխտ, ցորեն, պանիր, իւղ, աղ, խաղող՝ որմէ կը պատրաստուէր օղի, գինի եւ քացախ, օճառ, եւլն.: Ահա անցքէն դէպի ներս բացուած առանց դուռի ժայռափոր մառան մը, ուր սնտուկներու եւ կարասներու մէջ կը պահուէր ընտանիքին պարէնը:

Մառանին խորքին, ալիւրի մեծ ամբարին ետեւի պատին, աւելի ցածէն կախուած էր ժանգոտած խոշոր սուր մը, որուն ներկայութեան ու անոր հետ կապուած պատմութեան մասին երբեք ակնարկութիւն չէր ըլլար: Դռնէն դէպի դիմացի պատը եւ միւս կողմէ օժիտի սնտուկը երկարող երրորդ եւ աւելի մեծ մասը ընտանիքին ննջարանը, ճաշարանը եւ հիւրանոցն էր միանգամայն: Միայն ամբան երեք ամիսներուն անկողինները վերի սենեակը կը փոխադրուէին: Ճիշդ մէջտեղը թոնիրն էր: Չորս ոտքերով, վրան գոց, տախտակէ քառակուսի սեղանի ձեւ, *խսքէմլէն*²⁷ ոտքերը թոնիրին եզերքը դրած ու անոր վրայ յեցած էր: Բուրդէ ծանր թելերով հիւսուած խոշոր ծածկոցներ զայն ամբողջովին կը ծածկէին: Կօշիկներ հանելու անցքէ մը զատ, *խսքէմլէի* բոլորտիքէն սկսեալ մինչեւ պատերը գոցուած էր խոտով լեցուած *սէպիւրներով*²⁸, որոնց վրայ կապերտներ ու անկիւնները՝ բարակ բազմոցներ: Պատերու երկայնքին շարուած էին բարձեր ու անոնց ետին՝ *խսիւրներ*²⁹: Մէջը ածուխէ հանգած կրակով երկաթէ կրակարանը թոնիրին մէջ կը դրուէր: Ընտանիքի անդամները, յաճախ ալ հիւրերը, *խսքէմլէի* չորս կողմը, բազմոցներու վրայ, բուրդէ խոշոր ծածկոցը մինչեւ իրենց ծունկերէն վեր քաշած ու ոտքերնին տաքնալու համար դէպի կրակարանը երկարած կը նստէին. իսկ հիւր էրիկ մարդիկ՝ անկիւնները, բազմոցներու վրայ: Այն ատեն, ցուրտ օրերուն նաեւ կը վառէր փայտի վառարանը եւ

ընտանիքին կերակուրը անոր կամ թոնիրի կրակարանին վրայ կ'ելփուէր: Ճաշի պահուն, *խքէմլէի* ծածկոցին վրայ գոցուած խոշոր սաւանի մը վրայ դրուած քառակուսի տախտակը ճաշասեղանի դեր կը կատարէր: Պատին, գամէ մը, կախուած էր քարիտի լամբարը: Քիչ հեռուն՝ հայելի մը, Շահէին հօր եւ հօրեղբօր նկարները, Մարիամ Աստուածածինի պատկերը: Պատին մէջ բացուած պահարանի մը մէջ էին Աւետարանը, «Կիլիզարի» անուն հայատառ թրքերէն հայոց պատմութիւնը, հայերէն բառարան մը, ուրիշ մի քանի գիրքեր ու տետրակներ, նաեւ՝ թուղթ, մելան, գրիչ, եւն.: Կառավարական պաշտօնական թուղթերը օժիտի սնտուկին մէջ պահուած ու կղպուած էին:

Տան ամէն կողմի, ինչպէս նաեւ ձմեռուան սենեակին հաստ, ոչ-ողորկ քարէ շինուած պատերը առանց ծեփի էին:

ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Ապրիլեան արեւոտ օր մը, երբ տան դիմացի ծորակին մէջ ջուրի հոսանքը մթնոլորտը հաճելի զովութեամբ կը լեցնէր ու թաղի մանուկները հոն վայրի դեղին ծաղիկներ կը հաւաքէին ու ուռենիի կանաչ ոստերէն սրինգ կը շինէին, մեզի ծանօթ ձմեռուան սենեակին թոնիրին մօտ երախայ մը աշխարհ կու գար՝ դայեակ էպէ Հոռոփին անմիջական օժանդակութեամբ: Երկու մեծ-մայրիկները զայն գրկեցին ու շոյեցին: Անոնցմէ մին արդէն երազ տեսած էր ու միասին գուշակեր էին թէ ան ընտանիքին համար օգտակար եւ մեծ մարդ պիտի ըլլար: Վարժապետին գրած *նուխան*³⁰ եռանկիւն ծալեցին ու կապոյտ կտաւով կարեցին: Չար աչքէ պահելու համար ալ կապոյտ ուլունք ճարեցին ու երկուքը միասին խանձարուրի վրայ անցուցին, յետոյ մանուկին հագուստին վրայ կարելու համար: Ճերմակ քառակուսի կտաւի մը վրայ շատ բարակ, քիչ մը տաքցած սեւ աւազ տարածեցին ու նոյն չափով ուրիշ կտաւ մը անոր վրայ գոցեցին: Երախան մէջքէն վար լաթով մը փաթթելէ ետք, զայն կտաւին վրայ պառկեցուին եւ բոլորը մէկ աւելի խոշոր կտորով մը փաթեցին ու կապեցին: Այս էր խանձարուրը: Մեծ-մայրը կ'ըսէր. «Աւագով մեծցած պզտիկը տարբեր կ'ըլլայ»: Մի քանի օր ետք երախան անհանգստացաւ: Ումպ-ումպ անխոնի տաք ջուր խմցուցին եւ փորը օղիով շփեցին: Վերջապէս, պղինձէ ծակ-ծակ ամանի մը մէջ եռացած ջուրի մէջ հալած կապար թափեցին ու կապարի հատիկներու ձեւէն ստուգեցին թէ խեղճ պզտիկը աչքի եկած էր: Ըստ սովորութեան,

երկու շաբաթ յետոյ մկրտութեան համար Ս. Աստուածածին եկեղեցին տարին: Սակայն պզտիկին համար անուն մը որոշելը շատ դժուար եղաւ: Մեծ-մայրը իր հանգուցեալ ամուսնոյն յիշատակին կը փափաքէր զայն Սարգիս անուանել, իսկ հայրն ալ՝ հին հայ թագաւորներէն մէկուն անունը տալ: Վերջին պարագային, թէ՛ անունը հնչել դժուար էր եւ թէ՛ ալ կառավարութեան մօտ նման կասկածելի անունով արձանագրել տալը կրնար դժբախտութեանց պատճառ ըլլալ: Վերջապէս, մկրտող քահանային՝ Տէր Յակոբի, կարգադրութեամբ եկեղեցւոյ տոմարին մէջ երկու եւ պետական արձանագրութեանց մէջ միայն մէկ անուն գրուեցաւ:

Եկեղեցին հեռու չէր: Կնքահայրը՝ երկու ձեռքերուն վառած մոմեր՝ երախան գրկած հասաւ տուն, ուր իր ձեռքը երախային մօրը համբուրել տալէ ետք, զայն մօրը յանձնեց: Այդ օրը մի քանի մօտիկ ազգականներ, ինչպէս նաեւ քահանան, ժամկոչը, կնքահայրն ու դայեակը ճաշի հրաւիրուած էին: Երախային ծննդեան ուրախ առթիւ, արդէն մի քանի օր առաջ ազգական ու մօտիկ դրացի մանուկներու շաքարով խառն չամիչ, ընկոյզ ու փշատ բաժնուած էր. դայեակ Էպէ Հռոռփն ալ՝ մետաքսէ ծաղկաւոր խոշոր թաշկինակ մը նուէր ստացած: Վերջապէս, երախան «միւռոնէ հանելու» համար զայն լուալէ ետք, աղտոտ ջուրը ալիւրի մեծ ամբարին տակ թափեցին, որպէսզի վրան մարդ չկոխէ եւ առատութիւն ըլլայ: Խանձարուրը փայտէ օրօրոցի մէջ տեղաւորելէ ետք, կապեցին զայն: Իսկ օրօրոցի մէկ ծայրին կապուած երկար գնդիկով մայրը հեռուէն, գորգ աշխատած պահուն ալ, պիտի կարենար օրօրել:

Երախայ Շահէն օրօրոցի մէջ աչքերը բացաւ: Ան այլեւս կրնար շրջապատը դիտել, առարկաներն ու գոյները, խաւարն ու լոյսը իրարմէ՛ գանազանել: Ան կրցաւ տեսնել՝ ձմեռուան սենեակի առաստաղին ծուխէ սեւցած գերաններն ու քարերը. ոչ-շատ մեծ միակ պատուհանը, ուրկէ դուրս դրուած էր փայտի վառարանին ծուխի հաստ խողովակը. քարափոր ու մութ անկիւնները. կոշտ ու անհրապոյր առարկաներն ու պատերը. եւ այն ամէնը որ կրնար: Սակայն իրեն համար բնական էին այս բոլորը: Աշխարհին նոր էր բացած իր անմեղունակ աչքերը ու տեսած մութ ու խաւար, սեւ աշխարհ մը:

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉ

Իր մասին արդէն խօսուած էր դրացի ու բողոքականաց

մանկապարտեզի վարժուհի Միս Արուսեակին: Սեպտեմբերի առաջուտ մը, մաքուր հագուստներ հագած Շահէին ձեռքէն բռնելով մայրը մանկապարտեզ տարաւ ու զինք Միս Արուսեակին յանձնելով վերադարձաւ: Սենեակէն ներս իրեն հասակակից մանուկներ նստարաններու վրայ շարքով նստած, իրենց առջեւի սեղաններուն վրայ զանազան խաղալիքներով կը խաղային: Սուրբ Գիրքէն համարներ կ'արտասանէին ու հոգեւոր երգեր կ'երգէին: Յաճախ սուրբգրային պզտիկ պատկերներ նուէր կը ստանային: Պատերէն կախուած էին Յիսուսին խաչելութեան եւ այլ խոշոր պատկերներ՝ ոչխարներ հովիւ Յիսուսին առջեւ, Յովհաննէս Մկրտիչը շղթայակապ՝ զնտանի մէջ: Շահէն շուտով ընտելացաւ անոնց ու Միս Արուսեակն ալ ամէն օր զինք պատկերով կը քաջալերէր:

Երբեմն դրացի մանուկներ «Փիս Արուսեակ» կ'ըսէին ու Շահէն ջղայնացած «Ո՛հ, փիս (աղտոտ) չէ, այլ՝ Միս Արուսեակ» պոռալով իր վարժուհին կը պաշտպանէր: Սակայն օր մը անոնց յարաբերութիւնները վատթարացան:

Արդարեւ, Սուրբ Գիրքի դասաւանդութեան մը պահուն, Միս Արուսեակը Յիսուսի խաչելութիւնն ու չարչարանքը այնպիսի մանրամասն ու յուզումնալից ոճով մը նկարագրեց, որ բոլոր մանուկները սկսան բարձրաձայն լալ: Շահէն ո՛չ միայն կը խնդար, այլեւ զանազան խաղերով սկսաւ դասարանը խանգարել: Միս Արուսեակին յանդիմանութիւնը արդիւնք մը տուած չըլլալով, զինք սենեակին կից պարտեզին մէջ ձիւնի վրայ բանտարկեց: Շահէն ձիւնագնդակ շինեց ու ո՛չ միայն դէպի պարտեզ բացուող սենեակին պատուհանները սկսաւ հարուածել, այլեւ՝ Միս Արուսեակին պարտեզ մուտքն ալ հարուածներով դիմաւորեց: Երբ զինք պարտեզէն հանեցին, իր մայրն ու ամերիկացի տնօրինուհին հոն էին: Խրատեցին, համոզեցին ու հաշտեցուցին: Բայց Յիսուսին չարչարանքին համար ան չլացաւ:

Յուրտ օր մը, դպրոցէն վերադարձին, Շահէն հանդիպեցաւ գիւղէն եկած, գլուխն ու ականջները գոցած եւ տրեխներ հագած մարդու մը, որ իշու վրայ կաղամբ ու ճակնդեղ կը ծախէր: Անոր պէխին ու մօրուքին, իսկ իշուն ալ քիթի եզերքի մազերուն վրայ շունչի սառած թելեր կախուած էին: Ժամանակ մը ետք ամաւերջի հանդէսի համար պատրաստութիւններ սկսան: Շահէն ալ պիտի արտասանէր՝ նիւթ ունենալով «Թմբուկը»:

Ամերիկեան աղջկանց վարժարանի պարտեզը խոշոր վրան

մը պատրաստուեցաւ: Որոշուած օրը ծնողներէ եւ բարեկամներէ բաղկացած բազմութիւն մը ներկայ էր: Արտասանելու կարգը Շահէին էր: Անոր վիզէն խոշոր թմբուկ մը կախեցին ու բեմ հանեցին: Ան նախ ձեռքի գաւազանիկով քանի մը անգամ թմբուկին զարկաւ ու սկսաւ արտասանել: Հագիւ կէսին հասած՝ պահ մը կեցաւ, իր շուրջն ու ժողովուրդին նայեցաւ եւ սկսաւ լալ: Հանդիսականները ծափահարեցին: Միս Արուսեակն ալ ծափահարեց ու թելէն բռնելով զինք մէկ կողմ տարաւ:

Մանկապարտէզի վերջին տարին էր: Դրացի դպրապետ Մելքոնը իրենց այցելութեան եկած էր ու հետաքրքրուեցաւ Շահէին դասերով: Ան հպարտօրէն պայուսակէն իր գիրքը հանեց ու անոր ներկայացուց: Ան գիրքին մի քանի էջերը դարձնելէ ետք յայտարարեց. «Ինչ օրերու հասանք. Նարեկ³¹ եւ Սաղմոսի³² փոխարէն թոչուն կը թոցնեն ու կատու կը խաղցնեն: Երկինքէն կրակ պիտի տեղայ»:

Ուրիշ շատ մը բաներու կարգին, Շահէն չկրցաւ հասկնալ թէ՝

- Ինչո՞ւ պատժուեցաւ, երբ Յիսուսին չարչարանքին համար չլացաւ:

- Ինչո՞ւ ծափահարուեցաւ՝ երբ արտասանութեան պահուն լացաւ:

- Ի՞նչ էին այդ Նարեկն ու Սաղմոսը, որոնք իր գիրքին մէջի թոչնիկէն ու փիսիկէն անլի գեղեցիկ էին:

- Ե՞րբ եւ ի՞նչպէս երկինքէն կրակ պիտի տեղար, եւ ինչո՞ւ:

ԸՆՏԱՆԻՔԷՆ ՆԵՐՍ

Փեսայ Յակոբին կարած նոր կօշիկներով, ծիւներու եւ ջուրերու մէջէն, Շահէն նախակրթարան գնաց: Ուրքերը թրջած էին ու կօշիկները հանեց: Ան իր ընկերներէն իմացած էր թէ նոր կօշիկները ո՛չ կը թրջուին եւ ո՛չ ալ տաքէն կրնային ազդուիլ: Հետեւաբար, զանոնք վառարանին մօտ տեղաւորեց, որպէսզի չորնան: Արձակման պահուն, երբ հագնիլ փորձեց, կօշիկին այրած երեսը պզտիկ կտորներով թափեցաւ: Անակնկալի եկած՝ ան ուրիշ միջոց չգտաւ, եթէ ոչ ձեւով մը զանոնք ոտքերուն կապել ու տուն վերադառնալ:

Հայրը նախ խոժոռադէմ նայուածք մը նետեց ու խնդաց. իսկ մայրը սաստիկ բարկացաւ ու առարկեց հօրը խնդացած ըլլալուն համար ալ, թէ՛ այդպիսով զինք քաջալերած կ'ըլլար: Տակաւին նոյն օրը մէհիտ մը վճարած էին անոնց համար: Այրած կօշիկ-

ներուն մասին տեղեակ եղաւ նաեւ ուսուցիչ Վարդեվառ Էֆենտին:

Ամէն մարդ թրքախօս էր. նոյնպէս՝ Շահէին ընտանիքն ու շրջապատը:

Երբեմն Պոլսէն կը ստանային հայատառ թրքերէն «Ռահ-նիմա»³³, «Ճէրիտէի Շարգիյէ»³⁴ եւ «Մանգումէի Էֆքետար»³⁵ թերթերը: Առանց բարձր ուսում ստացած ըլլալու՝ հայրը իր պապերէն ժառանգած ու հորմէն սորված, փնտռուած վարպետ,- *գալֆա*³⁶, - էր շէնքերու, կամուրջներու, ճամբաներու եւ հորերու շինութեան: Բայց քանի որ ծննդավայրը գործ չկար, ըստ սովորութեան ծմեռուան երեք ամիսները միայն տունը կը մնար: Պանդուխտի կեանքը դժուար էր, շատ դժուար էր նաեւ դրամ շահիլը: Շինութեանց գործերը մեծ մասամբ կապուած էին կառավարական սպասարկութեանց եւ կամ գիւղապետներու հետ: Ամենապզտիկ անհամաձայնութիւնը, երբեմն ալ դիտմամբ, կը վերջանար ենթակային դէպի ծննդավայր աքսորով ու նաեւ նիւթական կորուստով: Իրենց կեանքը ոչ-բարեկեցիկ էր, եւ ժողովուրդը նմաններուն «*Տէօվլէթ տիւշքիւնիս*»³⁷ կը կոչէր, իբրեւ կառավարական միջոցներով զրկանքի ենթարկուածի կամ տուժածի:

Ընտանեկան, կրօնական եւ ազգային ամենդութեանց ու արժանապատուութեան պահպանման բժախնդիր էին: Շատ զուսպ եւ զգոյշ՝ հայոց պատմութենէն եւ կամ ֆէտայական կեանքէ առնուած հեքիաթներ կը պատմուէին: Ձմրան գիշերները մօտիկ դրացի եւ ազգական ընտանիքներ երբեմն տան ամենախորը, փողոցէն հեռու սենեակի մը մէջ կը հաւաքուէին: Խօսակցութեան միակ նիւթը գրեթէ մօտիկ անցեալի եւ ընթացիկ ոճիրներու, ջարդերու պատկերալից պատմութիւնն ու եզրակացութիւնն է՝ ներկայի եւ ապագայի համար: Ատոնք աւելի լուրջ կերպարանք կ'առնէին պզտիկներու քնանալէն ետք:

Կեսարիոյ ջարդէն հրաշքով փրկուած էին Շահէին հօր մօտիկ ազգականներէն ոմանք եւ ուրիշներ, որոնք Ամերիկա, Ֆրանսա, Պուլկարիա եւ այլուր գաղթած էին: Զարդի ատեն, մէկը աղաչեր է թէ ինք հայ չէ, այլ՝ կաթողիկէ: Ահմէտ աղան զայն սպաննելով յայտարարեր է. «Գոմէշը աղտոտած ու սայլակի անիւը երկուքի բաժնուած, ինչ է տարբերութիւնը»: Ահա՛ *Եաֆթա*-ի դէպքը³⁸, հայդուկ Չէլլօն՝ Թորոսը, Միրիճանը եւ Փանոսը³⁹, որոնցմէ վերջին երկուքը ժամանակ մը Շահէենց տունը պահուրտած ու յետոյ բոլորն ալ ձերբակալուած եւ Անքարա կախաղան հանուած են:

Ամառ օր մը, Շահէն իր մօրաքրոջ տղուն՝ Ղազարոսին [Փեհլիվանեան] հետ պարտէզ գնաց: Սովորութիւն էր լեռնէն իջնող ջուրի հոսանքով շրջանի պարտէզները կարգով ոռոգել: Հոն իրենց ազգական տարեց Սահակ աղային հանդիպեցան ու դրացի Հեքիմ պաշընց Ալին, որ ոճրագործի անուն ունէր, հեռուէն տեսնելով վախցան ու վազելով տուն փախան: Յաջորդ օր Սահակ աղային անշունչ մարմինը իր պարտէզին մէջ գտնուեցաւ: Ալին ձեռքին բահով անոր կոկորդին զարկած ու սպանած էր: Թէեւ ան ձերբակալուեցաւ, բայց շաբաթ մը անց ազատ արձակուած էր:

Յաճախ խօսակցութիւնները տեղի կ'ունենային ցած ձայնով ու զարմացած նայուածքներով: Գիշեր ցերեկ, տան դրան վրայ հարուած մը, թաղէն ներս թուրքերու արտասովոր երթուղարձ, ոստիկանի մը դէպի տուն նայուածքը, եւլն., չարաղէտ գուշակութիւններու կ'առաջնորդէին: Երբեմն հեռաւոր քեռիներու եւ քրիստոնեայ ազգերու վրայ մեծ յոյսեր տածելով կը մխիթարուէին: Թէյի, սուրճի, չամիչի, գաթայի հիւրասիրութիւնները ներկաներու դէմքերուն զարմացած արտայայտութիւններն ու սարսափը չէին կրնար մեղմել եւ անոնք քարիւղի լամբարի տոգոյն լոյսով աւելի խորհրդաւոր կերպարանք կը ստանային:

ՀԱՐԿԱՀԱԻԱՔ ՄՈՒՍԱՆ

Շահէին հայրը հացի ճամբով պանդուխտ էր: Հարկահաւաք Մուսան օր մը իրենց տունը ներկայանալով, ձեռքին բռնած խոշոր տոպրակը բացաւ, մէջքի լայն գօտիէն դեղին պղինձէ երկար թանաքամանը դուրս բերաւ, անկէ ալ եղեգէ գրիչը հանելով մելանի մէջ թաթխեց ու թուղթի վրայ բաներ մը մրոտելէ յետոյ յայտարարեց. «Ձեր այնինչ այգի կալուածի պետական տուրքը տարիներէ ի վեր վճարուած չէ, պէտք է որ կառավարութեան դրամը շուտով վճարէք»:

Պահանջուածը Շահէին համար խոշոր գումար մըն էր: Մայրը անակնկալի եկած՝ պահ մը շփոթեցաւ ու երեսի գոյնը նետեց. բայց անմիջապէս ինքզինք հաւաքելով յուզուած ձայնով մը ըսաւ. «Մուսա էֆենտի, սխալմունք մը ըլլալու է. ես մեր նման կալուած մը ունենալէն երբեք տեղեակ չեմ: Երախտապարտ պիտի ըլլամ եթէ մէկը տեղը կարենայ ցուցնել մեզի»: Հարկահաւաքը լրջացաւ. «Տետրակը չի՛ սխալիր: Ձեզի միայն դիւրութեան համար երկու շաբաթ պայմանաժամ կու տամ՝ պետութեան ունեցած ձեր

պարտքին գոնէ կէսը վճարելու, այլապէս ձեր տունը աճուրդի կը հանեմ»:

Լուրջ վտանգն ու մտավախութիւնը պատեցին ո՛չ միայն Շահէենք, այլեւ՝ մօտիկ ազգական ընտանիքները: Բարեխօսութիւնը օգուտ չըրաւ. միայն տրուած պայմանաժամը շաբաթ մը աւելցաւ:

Վերջապէս ազգականներէ ու բարեկամներէ առնուած պարտքով ու Շահէին մօր միակ ոսկի ապարանջանին վաճառքով, երկրորդ շաբթուան վերջաւորութեան հայթայթուեցաւ հարկահաւաքին դրամը: Սակայն ինչ էր այս տուրքը: Երկու կարելիութեանց առջեւ կը գտնուէին: Կողոպուտի ու կեղեքումի նոր ձեւ մը, եւ կամ իրապէս կար նման կալուած մը, բայց տարիներու ընթացքին Շահէին նախահայրերը դրացի թուրքերու ոտնձգութիւններէն ու նաեւ կառավարութեան մեղսակցութենէն յուսահատած՝ լքած ու մոռցած էին զայն: Ուրեմն թուրքի կողմէ շահագործուող կալուածի մը տուրքը հայը պէտք է վճարէր:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ՄԱՄԻԿԸ

Շահանդոփստ, թէ՛ Սանդուխտ՝ ինք ալ չէր գիտեր իր [բուն] անունը: Թաղեցիները զինք կը կոչէին *Սանդուխտ փուփու*, իսկ տարիքը կը նկատուէր չորս մէճիտէն⁴⁰ աւելի (մէկ մէճիտը քսան դահեկան էր): Իրենց տունը Շահէենց տան առջեւի ծորակին գլուխն էր: Ընտանիքին անդամներն էին իր միակ աղջիկը՝ քառասունը շատոնց անցած Հոռիմսին, - որուն հայրը եւ ամուսինը *ղուրպէթ*⁴¹ գացած եւ չէին վերադարձած, - որ կ'աշխատէր ամերիկացիներու մօտ⁴², իսկ միւսը՝ իրենց կովը: Այս երկուքը Շահանդուփստ մամիկին կեանքի միակ մխիթարութիւնն էին: Պայծառ օրերուն ան կորաքամակ ու դողդոջ քայլերով ծորակ կ'իջներ ու ջուրերու եզերքէն եւ ժայռերու ծերպերէն իր կովուն համար գոգնոցին մէջ կանաչ խոտ կը հաւաքէր: Շահէն եւ ընկերները յաճախ անոր շուրջ կը խաղային եւ ան իրիկուան մօտ անոնց կը հարցնէր. «Ուշախ գամբանա վուրուտու մը»:⁴³

Ականջները քիչ կը լսէին եւ իր շուրջիններուն կը հարցնէր եկեղեցւոյ զանգակին զարնուած ըլլալուն մասին: Երբ հաստատական պատասխան ստանար, դէպի տուն կ'ուղղուէր, գոգնոցին պարունակութիւնը կովին առջեւ կը թափէր, ներսի սենեակ կ'երթար, գլուխը անձեռոց մը կը կապէր, խունկ կը վառէր ու ոտքի վրայ աղօթքի կը կենար:

Սանդուխտ տուտուն պզտիկ եղած ատեն՝ Ա. Բ. Գ.-ի տախտակը կտաւի կարուած ու ձախ վիզէն կախուած կարմիր պայուսակին մէջ՝ կաղ Համբարձում վարժապետին թաղի դպրոցը յաճախած, բայց ծնողքը աղջիկ զաւակը շատ կարդացնելը լաւ չնկատելով, դպրոցէն հանած էին եւ «Աղջիկ զաւակը զգուշանալիք բայց ոչ պահելիք ապրանք է» ըսելով ամուսնացուցած: Ա. Բ. Գ.-ի տախտակը իր մեծութեամբ կրնար մտնել պայուսակի մէջ: Անոր վրայ գրուած էին վերէն, մէջտեղը, խոշոր է գիրը. անմիջապէս տակը՝ *Աստուած* բառը եւ յստակ ու շարքով՝ հայերէնի բոլոր գիրերը:

Ուրեմն Շահէին հետ մանկական հետաքրքրութեամբ մենք ալ հետեւինք Սանդուխտ տուտուին աղօթքին:

«Այբ-ծա՛ ԱԾ. ինի-մէն՝ իմ. Աստուած իմ. այբ, բեն, գիմ, դա...», ամէն անգամ երեսը խաչակնքելով մի քանի անգամ կը կրկնուէր այս ու վերջաւորութեան «Մեզ՝ մեղաւորներուս նկատմամբ փատիշահին սիրտը մեղմացուր» ըսելով՝ իր պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութեամբ դրան առջեւ կը նստէր, սպասելով իր Հոռիմսիին վերադարձին:

Վեց տասնեակ տարիներ անցած էին. թրքախօս բայց աւանդապահ ու բարի հայ մամիկին իր նախահայրերուն խորհուրդով օծուած սրտին ու հոգիին մէջ պապենական ոսկեղինիկ լեզուին մեսրոպաշունչ տառերը սրբութիւններ էին ու բոլոր փորձանքներու դէմ միակ ապաւէնը, առ Արարիչն ուղղած աղաչանքներուն եւ աղօթքներուն հարազատ արտայայտիչը: Բայց ո՞րն էր իր եւ նմաններուն մեղքը, որ Աստուած փատիշահին սիրտը փափկացնէր իրենց նկատմամբ:

Շահէին մայրը եւս իրենց ծմեռուան սենեակին քարայրէն Աստուծմէ կը խնդրէր որ օգնութեան հասնէր յայտնի եւ անյայտ փորձութիւններու, թուրք *զուլում*ին ենթարկուած եւ ամայի ճամբաներու, լեռ ու ձորերու մէջ ձիւնի եւ բութի բռնուած իր հարազատներուն:

ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Շատ հին սովորութեան մը համաձայն, մեծ տղաք՝ իրենց քաղաքի ելքի կամ մուտքի ճամբաներուն մօտ, անցքերու մէջ կամ բաց դաշտի վրայ՝ պարսատիկով գիրար կը քարկոծէին, - Կեսարիոյ մէջ՝ թուրքերը իրարու դէմ, իսկ Թալասի մէջ՝ հայ եւ յոյն, վերջիններուն թաղին մօտ: *Սէլէ* կոչուած այս խաղը յաճախ

կը վերջանար ծանր կամ թեթեւ վիրաւորներով եւ կողմերէն մէկուն փախուստով:

Շահէն, մօրմէն գաղտնի, գորգ պատրաստելու յատուկ գունաւոր դերձաններով պարսատիկ մը հիւսած ու զիրար քարկոծելու «խաղ»ին մասնակցած ատեն, Կեսարիոյ ելքի ճամբուն մօտ, ձեռքերնին խսիրէ խոշոր պայուսակներ, կաշեգործներու համար շան աղտոտութիւն հաւաքող թուրք տղաք, յանկարծ քովնտի արահետներէ դուրս գալով, ճամբէն անցնող Շահէին հայրը սկսած են քարկոծել: Ան անմիջապէս ինքզինք հաւաքելով հնարքի մը դիմած ու ձին դէպի տղաքը քշելով «Մեմէտ, Մեմէտ» կանչած է: Անոնց մէջ անպայման Մեմէտ մը գտնուելու էր: Արդարեւ, Մեմէտ մը խումբէն բաժնուելով յառաջացած է: «Պապա-յիդ բարեւներս հաղորդէ. վաղը անպայման պիտի գամ զինք տեսնելու», ըսած է Շահէին հայրը: Մեմէտ իր ընկերներուն թելադրած է ազատ ձգել *կեաւուրը*⁴⁴, քանի որ ան իր հօրը բարեկամն էր եւ ոտքէն թեթեւ մը վիրաւորուած էր արդէն: Մայրը իմացած էր այս բոլորին մասին:

Այդ օրերուն թուրքերուն հայերը ջարդելու մտադրութեան մասին տարածայնութիւններ շատցած, քաղաքի դուրսի ճամբուն վրայ ոճիրներ գործուած էին: Ժողովուրդին մօտ անստոյգ վիճակ կը տիրէր ու զարհուրած էր: Շուկայ կամ ուրիշ թաղեր երթալու ստիպուած եղողներուն կը պատուիրէին շուտ վերադառնալ եւ ուշադիր գտնուիլ: Ամէն պարագայի տակ, մագործ կոյր Պարհանէն միս չառնել կը պատուիրուէր, որովհետեւ անոր ծնողքը [Գրիգոր] Լուսաւորչին լոյս հաւատքը ուրացած էին ու որպէս պատիժ Աստուած անոր ընտանիքին անդամները կիսով կուրցուցած էր: Անոր խանութին առջեւ, տախտակէ տաշտի մը մէջ, շուները մորթուած ոչխարներու արիւնը եւ աղտոտութիւնը կը լափէին:

Շահէին մայրը այս բոլորին տեղեակ էր ու սարսափած: Հետեւաբար Կիրակի մը, առտու կանուխ, որպէսզի Շահէն տունէն ներս չմնայ ու փորձանքի մը չհանդիպի, զինք իրենց թաղին մէջ բնակող իր եղբօրը՝ [Թփաքպաշեան] Թորոսին հսկողութեան յանձնեց:

Քիչ ետք, թուրք երեւելիներն ու ընտանիքին բարեկամը ճանչցուած Ահմէտ էֆենտին իրենց այցելութեան եկան: Քեռի Թորոսը զինք մեծ յարգանքով ընդունեց ու սենեակ հրաւիրեց: Մարիամ մամիկը իր հագուստները եւ սեւ ծաղկաւոր գլխի լաջակը շտկեց ու հիւրին բարի գալուստ մաղթեց: Իր հրահանգով, քեռի

Թորոսին երիտասարդ հարսը պետք չէ երեւնար ու հիւրասիրութիւնը ինք անձամբ կը կատարէր ու Շահէն ալ երբեմն իրեն կ'օգնէր:

Անուշեղէններ, սուրճ, թէյ, պտուղներ իրարու կը յաջորդէին ու ժամերը արագ կը սահէին. սակայն Ահմէտ էֆենտին երբեմն աչքերը պատուհանէն դուրս կէտի մը յառած, երբեք մեկնելու տրամադրութիւն ցոյց չէր տար:

Մարիամը կասկածելի հիւրին սենեակի մուտքին առջեւ հանած կօշիկներուն մէջ քիչ քիչ աղ թափեց ու երեսը խաչակնքեց, բայց՝ ապարդիւն:

Վերջապէս, համբերութիւնը հատած, սենեակէն ներս խօսքը հիւրին ուղղելով, ըսաւ. «Ահմէտ էֆենտի, դուրսը շուկներ կան՝ որպէս թէ թուրքերը հայեր, իսկ հայերն ալ թուրքեր պիտի ջարդեն. աման, տղաս, այս ինչ լուր է»:

Ահմէտ էֆենտիին դէմքին վրայ թեթեւ ժպիտ մը ուրուագծուեցաւ ու «Այո՛, մայրիկ, ես անոր համար հոս եկած եմ, որպէսզի այս իմ մօրս ու եղբօրս տան վրայ մարդ չկարենայ ձեռք բարձրացնել», ըսաւ:

Պահ մը մեռելային լռութիւն տիրեց: Մարիամ մամիկը Ահմէտ էֆենտիին երկար կեանք մաղթեց ու շնորհակալութիւն յայտնելէ յետոյ սենեակէն դուրս ելաւ: Ան սարսափած էր ու կարծես մահը իր մարմնէն ներս սպրդած ըլլար: Երկու ձեռքով ծունկերուն զարկաւ եւ ըսաւ. «Վա՛խ, վա՛խ, վա՛խ. այս շունը հոս կը սպասէ, որպէսզի մենք իրեն բաժին իյնանք: Ան տղաս եւ մեզ բոլորս պիտի մեռցնէ, տունը պիտի կողոպտէ ու երիտասարդ հարսս եւ աղջիկս ալ պիտի առեւանգէ»:

Խոհանոցը դուրսի դրան քովն էր: Ան բնագոյական մղումով ու ջղային շարժումով մը անկէ ներս մտաւ, փայտ կոտրելիք կացինը, ապուխտի խոշոր դանակը եւ թոնիրին խաչերկաթը քով քովի բերաւ ու Շահէին ալ պատուիրեց որ իր քովէն չհեռանայ:

Կէսօրին Ահմէտ էֆենտին վստահեցուց թէ վտանգը անցած էր: Կ'երեւի ջարդի սպասուած պայմանադրական նշանը չէր տրուած ու մեկնեցաւ: Երթալէն ետք, քեռի Թորոսը՝ այլալլած՝ բարկացաւ անոր «հայեր ալ թուրքեր պիտի ջարդեն եղեր» ըսած ըլլալուն համար, քանի որ այդ խօսքը Ահմէտ էֆենտիին համար կրնար պատրուակ ծառայել ու մեր գլխուն փորձանք բանալ: Մանաւանդ հայեր երբեք նման մտադրութիւն մը չունէին:

Մարիամ մամիկին աչքերէն կրակ կը ժայթքէր ու յուզումէն

շրթները կը դողային: «Թորոս, տղան,- ըսաւ.- ան կը բաւէ. տան փիսիկին անգամ պոչին սխալմամբ կոխենք՝ ինքնապաշտպանութեան կը դիմէ ու ճանկոտել կը փորձէ: Ինչո՞ւ համար միշտ թուրքերը մեզ պիտի ջարդեն. այս խեղճ կատուին չամփ ալ արժանապատուութիւն չունինք: Այս անակնկալ այցելութեան պատճառը գիտնալու համար մարգարէ ըլլալու պէտք չկայ: Բարեբախտաբար բան չպատահեցաւ, այլապէս մենք բոլորս ալ պիտի ոչնչանայինք. բայց ես ալ զինք ողջ դուրս պիտի չհանէի», եւ խոհանոցին անկիւնը դրուածները ցոյց տուաւ:

Բաղդատմամբ Կեսարիոյ եւ այլ շրջաններու, Թալասի թուրքերը հայերու նկատմամբ աւելի բարեացակամ կը նկատուէին: Արդարեւ, Կեսարիոյ ջարդի ատեն ընտանեկան բարեկամ Ահմէտ էֆենտիին հօրեղբայրը իր մարդոց հետ Թալասի հայկական մուտքին մօտակայ գիւղերէն եկող թուրք ոճրագործ ու կողոպտիչ խումբանը ներս չէր ձգած եւ հայերու երախտապարտութիւնն ու իր ազգակիցներէն ալ անարգական «էրմէնի քէշիշի»⁴⁵ անունը շահած էր: Բայց այժմ ժամանակները փոխուած էին. կարելի չէր վստահիլ թուրքին: Մարիամ մայրիկը լաւ կը հասկնար այս բոլորը:

ԹԱՂԻՆ ԹԱԳՍՏՈՅԸ

Հակասական լուրերը իրարու կը յաջորդէին: Սուլթանը գահընկէց պիտի ըլլար, սահմանադրութիւն պիտի հռչակուէր, հայ եւ թուրք հաւասար ու համերաշխ պիտի ապրէին:

Շաբաթներ կ'անցնէին ու ո՛չ միայն այս գեղեցիկ յոյսերը չէին իրականանար, այլ՝ կարծես օդին մէջ անգամ մահուան հոտը կար: Թուրքերու մօտ կասկածելի շարժումներ տեսնուած էին ու արիւնահոսութիւնը անմիջական կը նկատուէր:

Վարի Թաղի հայերը պատրաստութիւններ կը տեսնէին Չոպայի Մաղարա կոչուած երկար ժայռափոր քարայրը ապաստանելու:

Շահէենց թաղին անկիւնը, Ալեքսանենց տան մէջ կար խոշոր քարայր մը, որուն առաստաղին ճիշդ մէջտեղը երկու հոգի անցնելու չափ մեծ ծակ մը աւելի խոշոր քարայր մը կ'առաջնորդէր: Անոր ժայռերուն նեղ ճեղքերէն արեւի բարակ լոյս կը թափանցէր: Վարէն դէպի վեր դրուած տախտակէ աստիճանով մը հոն բարձրանալէ ետք, կարելի էր աստիճանը վեր քաշել ու պատրաստ մեծ քարով ծակը գոցել:

Թաղեցի մի քանի ընտանիքներ արդեն սկսած էին ուտելիք, ջուր, անկողին եւ այլ անհրաժեշտ բաներ հոն փոխադրել: Ահա այս թաղին թագստոցն էր:

Շահէին մեծ հօր, ութսունէն աւելի տարիներու բերան տակ կքած եւ արկածով մըն ալ մէկ աչքը վնասուած Ստեփան պապիկին ննջարանը քեռի Թորոսին սենեակին հետ իր պատուհաններուն երկու կողմովը վարը՝ դէպի ճամբայ կը նայէր, իսկ պատը ճամբուն վրայի խանութի մը տանիքը երկուքի կը բաժնէր: Այդ օր մօտիկ դրացի մը, նաեւ Շահէին մայրն ու անոր ծնողքը, ընտանեօք թագստոց բարձրացած էին: Ստեփան պապիկն ալ տանելու քեռի Թորոսին բոլոր ջանքերը ապարդիւն անցած էին: Նախ ան չէր ուզեր երթալ. երկրորդ՝ իրեն համար մինչեւ հոն քալել ու աստիճաններէն բարձրանալ անկարելի էր: Հետեւաբար, քեռի Թորոսը զինք մինակ չձգեց եւ, հակառակ մօրը պնդումին ու յանդիմանութեան, Շահէն ալ անոնց քովէն չբաժնուեցաւ:

Թուրք դրացի Արիֆն ու անոր փեսայ սափրիչ Մուսթաֆան տանիք եկած էին եւ քեռի Թորոսին թելադրանքով Շահէն անոնց նստելու երկու աթոռ տարաւ ու հոն, պատին կոթնած, երկու զէնք ու երկու կողմը շէղբով եւ երկար կոթով հրացան տեսաւ:

Շահէն, վերադարձին, տեսածները պատմեց: Ստեփան պապիկը ժամանակին Անատոլիոյ զանազան ճամբաներու վրայ մեծ առեւտրականներու ապրանքատար կարաւաններուն ընկերացած ու քանիցս աւազակներու հետ գործ ունեցած էր: Սրտոտ ու զէնք գործածել գիտցող մարդ էր:

Շահէին ստիպեց որ շուտով թագստոց վազէ, իսկ ինքը՝ իր երիտասարդութենէն մնացած ջղուտ շարժումով ու բարկացայտ աչքով՝ անկողնին տակէն երկար հրացան մը հանեց, դողդոջ ձեռքերով պատուհանին երկաթները բռնեց ու մարմինը պատին կոթնեցուց: Իսեղծ ծերունին, մէջքը ծռած, կրցաւ ոտքի կենալ ու քեռի Թորոսին նայելով յայտարարեց. «Թորո՛ս, տղա՛ս, մեր դրացի շուները մեր որպիսութիւնը հարցնելու համար հոս եկած չեն. ես այս պատուհանէն վերի կամ վարի ճամբէն յառաջացողներէն գէթ մէկ-երկու հատ «դրախտ չղրկած» չեմ մեռնիր. արդէն ես ողջ մեռել եմ. դուն շուտով թագստոց գնա՛ եւ ընտանիքին տէր եղիր»:

Քեռի Թորոսին վճռական մերժումին վրայ, «Ուրեմն,- ըսաւ,- դիմացի պահարանին տակի վեցհարուածեան ատրճանակը առ եւ մէջքդ կապէ, տանիք գնա՛, աչքդ լաւ բաց եւ ուշադրութիւն ըրէ.

երբ որ հեռու Կեսարիոյ կողմէն պլալացող լոյսը տեսնես՝ շուտ շարժէ եւ երկուքն ալ առանց վայրկեան կորսնցնելու մեռցուր: Ամենապզտիկ դանդաղութիւնը պատճառ կ'ըլլայ որ անոնք քեզ սպանեն»:

Քեռի Թորոսը եւ դրացի երկու թուրքերը ժամանակ մը միասին սպասեցին՝ առանց նպատակնին իրարու իմացնելու: Բարեբախտաբար գոժկան լոյսը չերեւցաւ: Արդէն ամէն մարդ իր տունը վերադարձած էր:

Ստեփան պապիկը վճռած էր իր եւ իրեններուն կաշին ոչ աժան եւ ոչ ալ դիւրին ծախել: Ան Մարիամ մամիկին ամուսինն էր:

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԲԱՆԵՐ

Իրենց ձմեռուան սենեակին մէջ Շահէն օր մը ուշ գիշերին քունէն արթնցաւ: Լոյս կար: Քարիւղի լամբարը պատէն իջած ու տեղաւորուած էր թոնիրը գոցող տախտակին վրայ, որուն մօտ կը տեսնուէին նաեւ երկու գոյն մելանի շիշեր ու երկու գրիչ, թուղթ, պահարան: Նաեւ՝ փայլեցուած բարակ ու երկու եզերքներով այն տախտակը, ուր հայրը թուղթի վրայ նամակ կը գրէր՝ մէկ երեսը մանիշակագոյն ու միւս երեսը ճերմակ գոյնով անտեսանելի գիրերով: Ան շուտով նամակը գոցեց ու գրպանը դրաւ: Ժամանակ մը անց, ուրիշ երկրէ ու անձանօթ ազգականի մը կողմէ ղրկուած թիթեղէ խոշոր տուփի մը մէջ անուշեղէն հասաւ: Հակառակ Շահէին ու իր պզտիկ քոյրերուն խնդրանքին, անուշեղէնին տուփը իրենց ներկայութեան չբացուեցաւ. թէեւ անոնք յետոյ անուշեղէն ճաշակեցին:

Հայրը երբեմն ուշ գիշերները թերթ կը կարդար ու նկար կը դիտէր. սակայն Շահէն զանոնք երբեք չկրցաւ տեսնել:

Երբեմն ուշ իրիկուան դուռը կը զարնուէր, հայր ու մայր իրարու երես կը նայէին եւ դրան առջեւ բարեկամի մը երիտասարդ տղան կը ներկայանար: Անոր ընկերակցութեամբ Շահէին հայրը կը մեկնէր՝ գիշերը վերադառնալու համար:

Շահէն ծնած ու մինչեւ հիմա մեծցած էր միջավայրի մը մէջ, ուր ոճրագործներ ու զոհեր, կողոպտողներ ու կողոպտուողներ կային, արդարութիւնն ու հաւասարութիւնը բոլորին համար չէին, ինքը իրաւագրկուածներու դասակարգին կը պատկանէր: Այս բոլորը սովորական ու բնական էին, եւ՝ ճակատագիր: Միայն թէ կարգ մը արտայայտութիւններ ու երեւոյթներ, որոնցմէ վերջինն

էին իրենց տան մէջ տեղի ունեցած խորհրդաւոր բաները, իր միտքը կը զբաղեցնէին ու կը ջանար ինքնիրեն բացատրութիւններ գտնել:

Դժուար էր իրեն համար Մարիամ մամիկին, Ստեփան պապիկին, իր ծնողքին ու մեծերուն ներաշխարհին թափանցել եւ անոնց իրական ապրումներուն ու մտածումներուն ծանօթանալ: Բայց հետզհետէ ան եզրակացութիւններ կը հանէր, իր գիտակցութիւնը կը պայծառանար եւ ինքնապաշտպանութեան բնազդը կը համակէր զինք:

Հետագային ան պիտի իմանար թէ պանդխտութեան մէջ հայրը յեղափոխական շարժման յարած ու գործօն դեր կատարած էր:⁴⁶ Անուշի թիթեղով գաղտնի գրականութիւն կը հասնէր ու իրենց տան հաւնոցին մէկ անկիւնը կը պահուէր: Գաղտնի թղթակցութեան մէջ պետութեան եւ յատկապէս Սուլթան Համիտին⁴⁷ պայմանադրական անունը *Թովմաս գալֆա* էր: Ծննդավայրին մէջ ալ պզտիկ խմբակ մը գոյութիւն ունէր եւ գիշերները երբեմն անոնք կը հաւաքուէին:

Վերջապէս, գիշեր մը ան թեթեւօրէն վիրաւոր տուն հասեր էր, սակայն այդ մասին որեւէ ակնարկութիւն չէր եղած:

ԹԱԳԱԻՈՐՍ ՇԱՏ ԱՊՐԻ

«*Փառիշտահիմ չօգ եաշա*»- Թագաւորը շատ ապրի, ազատութիւն, արդարութիւն եւ հաւասարութիւն:

Սուլթան Համիտը գահընկէց եղած եւ անոր յաջորդած էր Սուլթան Ռեշատը⁴⁸ նոր Սահմանադրութեան հռչակումով:

Մունետիկ Ալին, իր կրկնակի բարձրադասակ կանչովը, որուն կը հետեւէր *տաուկ-գուռնան*⁴⁹, հայ, յոյն եւ թուրք երեւելիներ ու ժողովուրդ դրօշակներ պարզած՝ Շահէենց տան մօտակայ փողոցէն կը յառաջանային: Հրապարակային հաւաքոյթներ, շողշողուն ճառեր ողջագործումներ իրարու կը յաջորդէին:

Թուրք պետական մարդիկ ու երեւելիներ հրաւիրուեցան դպրոցական հանդէսներու եւ եկեղեցւոյ բակին մէջ միասին նկարուեցան: Քրիստոնեաներու նկատմամբ շատ սեղմումներ վերացան: Կուսակցութիւնները իրենց գործունէութեան մէջ ազատ էին այն չափով որ համապատասխան էին կառավարութեան քաղաքականութեան: Դպրոցներէ ներս սկսած էին, թէեւ որոշ սեղմումներով, հայոց պատմութեան դասաւանդութիւններ տեղի ունենալ:

Շահէին հօր գործերը շատ անելի լաւ կ'ընթանային: Ընտանիքին նիւթական վիճակը բաւական բարութեամբ էր: Շահէին ու քոյրերուն դպրոցական թոշակին վճարման համար այլեւս դժուարութիւն չկար: Տան համար անելի նոր կարասի ճարած եւ Աւարի ու Թիւրքեի նախշերով կապերտներ գնած էին:

Թէեւ ժողովուրդը վառ գոյներով ու ապագայի գեղեցիկ երազներով կ'ապրէր, սակայն կարծես խորքին մէջ քրիստոնեաները կասկածով ու անվստահութեամբ կը դիտէին անցած-դարձածը. իսկ թուրքերը կը վախճնային ոչ-թուրքերու հետ հաւասար նկատուելէ եւ շատ առանձնաշնորհումներէ զրկուելէ:

Շահէն, մանկապարտէզն ու նախակրթարանը արդէն լրացուցած, այժմ Թալասի Ամերիկեան Քոլէճը⁵⁰ կը յաճախէր:

Ու, ահա, օր մը ոտք կը կոխէին 1914 բախտորոշ տարին:

Համաշխարհային Առաջին Պատերազմը կը պայթէր ու ամբողջ երիտասարդութիւնը զինուորագրութեան կը կանչուէր: Հայ զինուորներէ ընդհանրապէս *ամելէ թապուրու*⁵¹ գունդեր կը կազմուէին ու ամայի ճամբաներու վրայ աշխատելու կը դրկուէին: Բանակին օգնելու համար տաք հագուստեղէնի, ելւն. պետական հանգանակութեան հայերը աշխոյժ մասնակցութիւն կը բերէին: Շահէին մօրեղբայրը, որ իր ծնողքին մահէն ետք ուրիշ քաղաք փոխադրուած էր, կորսնցուցած էր իր ընտանիքը այդ օտար քաղաքին մէջ ու տուն կը վերադառնար եւ՝ իբրեւ զինուորական փախստական՝ պահուրտած կը մնար:

Պատերազմին պատճառաւ ամէն տեսակ կաշկանդումները անելի զգալի ու ճնշիչ մթնոլորտ կը ստեղծէին: Յատկապէս հայերու հանդէպ կառավարութեան վերաբերումը հետզհետէ անելի թշնամական կը դառնար ու բացէ ի բաց դաւաճանութեամբ կ'ամբաստանէին [հայերը]:

Պատրուակներ չէին պակսեր մէկ առ մէկ ամէն դասակարգէ հայ էրիկ մարդիկը բանտարկելու եւ խոշտանգելու: Ամէն օր լուրեր կու գային նորանոր խժոժութեանց ու վերջնապէս աքսորուածներու կամ կախաղան հանուածներու մասին:

Օր մըն ալ ոստիկանները Շահէնց տունը եկան ու հայրը ուզեցին, սակայն ան արդէն մի քանի ամիս առաջ Մարգուանի մէջ արկածի զոհ գացած էր:

Սեպտեմբերին Ամերիկեան Քոլէճը կը վերաբացուի: Թրքերէնի դասատու ազնիւ ու բարի Միհրան Տօնապետեանը, որ շնորհիւ կարգ մը միջամտութիւններու հետագային արտօնուեցաւ զինուո-

րական ծառայութիւնը Թալաս կատարելու բանակի հիւանդանոցին համար եւ օր մը դարձաւ Պէյրութի Հայ Աւետարանական Քոլէճի⁵² ուսուցիչներէն, Շահէին ձեռքէն բռնելով դպրոցի ձրի գիշերօթիկին արձանագրել կու տայ, քանի որ Շահէենք այլեւս դրամ վճարելու ի վիճակի չէին:

Շահէն յաջող աշակերտ մըն էր: Քոլէճին գրաբարի եւ ֆրանսերէնի դասատուն էր Խորէն Քրիզեանը, հայերէնի՝ Ն. Բանեանը, որոնք երիտասարդ ուսուցիչ Նիկողոսեանին հետ նահատակուեցան Կեմերէկի շրջակայքը: Աշխարհագրութեան դասատուն էր Երուանդ Տէր Մարտիրոսեանը, Պոլսոյ Զինուորական Վարժարանէն շրջանաւարտ, որ հետագային Հայաստան անցաւ ու Կովկասեան Ճակատի ընդհարումներուն ժամանակ նահատակուեցաւ: Անգլերէնի դասատուն էր ամերիկացի տնօրէնին կինը՝ Ուինկէյթ,⁵³ հայասէր ու հայերէն ուսած ազնիւ կին մը: Ան մի քանի անգամ Շահէն ու երկու-երեք տղաք իրիկունը գիշերօթիկ աշակերտներու ննջարանը բարձրացած պահուն, դպրոցի ընթերցասրահէն դէպի տնօրէնին բնակարանը բացուող դուռնէն դէպի իր տունը տարած էր: Հոն անոնք կը նստէին սենեակին մէջտեղ դրուած կլոր սեղանի մը բոլորտիքը. տիկինը զիրենք կը խրախուսէր ու կը խրատէր. ապա քարիւղէ լամբարի լոյսով մօտ կէս ժամ երկերէ հատուածներ կը կարդար: Կարելի չէ զանց ընել երաժշտութեան երիտասարդ ուսուցիչ Ռոպինը: Անոր հայրը, առաքելական լաւ ընտանիքի զաւակ ու բժիշկ, յետոյ աւետարանական դարձած ու ամուսնացած է յոյն աղջկայ մը՝ Կալիփիի հետ, որմէ ծնած է Ռոպինը:

Ամառուան արձակուրդներուն, շարժ⁵⁴ աշխատողներու համար սովորաբար պզտիկ քառակուսիներով մասնաւոր պատրաստուած թուղթի վրայ գունաւոր մատիտներով զարդանախշերու օրինակներ կը պատրաստէր Շահէն եւ կամ դրացի ատաղձագործ Յակոբճանին խանութը որպէս աշկերտ կը յաճախէր:

Օր մը, խանութին առջեւ ոտքի վրայ կեցած պահուն, հոնկէ անցնող ծիաւոր թուրք սպայ մը յանկարծ ձիէն իջնելով ձեռքի մտրակով կը սկսի զինք հարուածել: Պատճառը: «Կեաւորի տղան» իրեն համար բարեւի չէ կեցած:

Առաւօտ մը, Եկեղեցի գացողները մեռելի պէս գունատած կը վերադառնային: Եկեղեցւոյ դուրսի դրան վրայ կառավարութեան կողմէ թուղթ փակցուած էր, որպէսզի ամէն հայ ընտանիք պատրաստ ըլլար որոշուած օրը քաղաքէն դուրս ելլելու եւ

կառավարութեան հսկողութեան տակ որոշուած վայրը երթալու: Կարելի էր էշերով կամ կառքերով ճամբորդել: Արդէն տարիքով պզտիկ ու ծեր այր մարդիկ մնացած էին միայն:

Նման հրահանգներ տրուած էին *մուխթարներու*⁵⁵ եւ մունետիկ Ալին ալ թաղերու մէջ բարձրաձայն յայտարարեց:

Արտօնուած էինք ծախել այն ապրանքները, որոնք կարելի չէր միասին առնել, թէեւ տան մէջ ալ ձգել կարելի էր, քանի որ պիտի վերադառնայինք իբրեւ թէ: Ուրեմն սկսաւ կարաւաննիս կազմով: Ամէն ընտանիք կը փափաքէր իր ազգականներուն հետ միասին ըլլալ: Նուազ բարեկեցիկները կ'ուզէին իրենցմէ աւելի ունեւորի ընկերանալ, որպէսզի ճամբու ընթացքին իրարու կարենային օգնել:

Թուրք դրացի եւ ծանօթ կիներ հայ տուներէ ներս սկսան խուժել գնումներ կատարելու համար: Ծախու հանուածները գին չունէին. անոնց խիղճին մնացած էին: Երբեմն ալ կը փափաքէին որ կարգ մը գոյքեր իրենց հայ դրացիներուն կողմէ իրենց յիշատակի նուէր ըլլար:

Եթէ հայը այսինչ կամ այնինչ բանը միասին տանիլ ուզէր, կ'ըսէին. «Ճամբու ընթացքին ուրիշները ձեզ կողոպտելու տեղ, մեզի *նասիպ*⁵⁶ թող ըլլայ. եւ եթէ վերադառնաք՝ մենք ձեզի կը վերադարձնենք»:

Դրացի թուրքը աչքի զարնող մանուկի մը մօրմէն կը պահանջէր որ զայն իրեն խնամքին յանձնէ: «Ինչո՞ւ համար այս գեղեցիկ մանուկին արիւնը պիտի մտնէք: Մեզի վստահեցէք: Մենք իրեն լաւ հոգ կը տանինք ու ձեր վերադարձին՝ ձեզի կը յանձնենք»:

Առաջին կարաւանը ծանօթ ընտանիքներէ կը բաղկանար: Պզտիկները, ծերերը եւ այն բոլորը որ կրնային իրենց հետ առնել էշերու վրայ էին: Ոմանք ալ իրենց բեռները իրենց շալակը առած էին: Անոնք մեր աչքերուն առջեւէն դէպի անծանօթ ճակատագիր կը քալէին: Կը գիտակցէինք թէ մէկ-երկու օր ետք մենք ալ նոյն ճամբով իրենց պիտի հետեւէինք: Արցունքոտ աչքերով ու ճմլուած սրտով հեռուէն կը դիտէինք անոնց երթը մինչեւ որ մեր տեսողութենէն հեռացան:

Ահա՛ դրացի թուրք կիներ մեր տունն ալ լեցուեցան: Նախ ախոռին մեր երկու ճերմակ այծերը, գետինը ձգուած կարպետները, մօրս օժիտի մի քանի հագուստները եւ ինձմէ պզտիկ երեք քոյրերուս [Շուշանիկ, Սաթենիկ եւ Հայաստան] նոր հագուստ-

ները տարին: Չեմ գիտեր ինչ վճարեցին այս բոլորին համար, բայց գումարը էշ մը գնելու անբաւարար էր:

Մեր մեկնումին համար կային կարելորդ դժուարութիւններ: Նախ մօրեղբայրս, տան մէջ պահուրտած, եթէ դուրս ելլէր՝ անոր ձերբակալութիւնն ու հաւանաբար մահը անխուսափելի էին. իսկ զինք մինակ ձգելով մեր մեկնումը անկարելի էր: Կային նաեւ այլ պատճառներ: Մեր ազգականներն ու բարեկամները արդէն գացած էին, իսկ մեր նիւթական վիճակը շատ տկար էր: Երկուերեք օր մօրս ու մօրեղբօրս խորհրդակցութիւններն ու կարգադրութիւնները խնդրին լուծում մը չէին գտած: Ահա՛ այս անելին առջեւ կը գտնուէինք, երբ յանկարծ իմացանք թէ զինուորի ընտանիքներն ու անոնց պաշտպանեալները կրնային մօտակայ թուրք գիւղերու մէջ բնակիլ. իսկ երկրին համար անհրաժեշտ նկատուած արհեստաւորներն ալ առժամաբար աքսորէ գերծ կը մնային՝ պայմանաւ որ կրօնափոխ ըլլային ու «*հազմինէ*»⁵⁷ իրական կրօնը ընդունէին: Ուրեմն այս պայմանները լրացնող կային 15-20 հայ ընտանիքներ, որոնցմէ մէկն ալ մենք էինք:

Ես ունէի երկու մօրեղբայր՝ մէկը իսկապէս զինուոր գացած, իսկ միւսը, որուն արդէն ծանօթ էք, կը մնար տունը պահուրտած, թէեւ պաշտօնապէս զինուոր գացած կը նկատուէր: Եւ քանի որ հայրս կորսնցուցած էի, մեր ընտանիքին պաշտպանը այս երկուքն էին:

Մայրս թուրք կարգ մը կանանց եւ անոնց զաւակներուն, ինչպէս նաեւ Թալասի *միւլիի*⁵⁸ ճաֆէր Սատըզին կնկան հագուստ կարած էր՝ պարտքով առնուած կարի մեքենայի վրայ: Ուրեմն դերձակուի էր: Օր մըն ալ ի բացակայութեան մեր կրօնափոխութեան ձեւակերպութիւնները կատարուած ու առժամաբար աքսորէ գերծ մնալու արտօնուած էինք:

Դպրոցը՝ բացի ամերիկացիներէ՝ տեղական շատ տկար ուժերով հազիւ իր գոյութիւնը կը պահէր: Թալասին շատ մօտիկ ձորակի մը մէջ գիւղի մը աքսորը արդէն մեզմէ առաջ կատարուած էր ու ես ընկերոջս հետ գիւղը շրջապատող բարձր ժայռի մը վրայ ականատես եղած էի անոնց մեկնումին: Վախցած էինք գիւղ երթալու, որովհետեւ կրնային մեզ ալ անոնց հետ քշել:

Ահա՛ այս գիւղի բնակիչ երկու դպրոցական ընկերներ՝ Հայկ Տէր Ստեփանեան եւ Ղուկաս Փապուճեան, յանկարծ օր մը դպրոցի դրան առջեւ ներկայացան: Կարելի չէր մէկ նայուածքով զանոնք ուրուականներէ զանազանել: Ուրքերնին բոպիկ, ցնցոտինե-

րով փաթթուած, փոսը ինկած աչքերով ու դեղնած դէմքով, գլուխնին բաց: Դէմքերնուն վրայ արտայայտութեան նշոյլ իսկ չկար: Ամէն բան հասկնալի էր:

Մինչեւ այդ նման երեւոյթի մը ականատես եղած չէի: Դպրոցի տնօրինութիւնը զիրենք ներս ընդունեց եւ ուրիշ հազուատներ տուաւ: Մինչեւ վերջ անոնք հազուադէպօրէն կը խօսէին ու աչքերնին կէտի մը յառած կը մնային:

Այս դէպքը աշակերտութեան մօտ աւելի յուսալքութիւն պատճառեց ու բնականաբար աւելի շատ կը հետաքրքրուէինք հետզհետէ հասնող ցնցիչ լուրերով ու մեզի ալ վերապահուած ճակատագրով՝ քան մեր դասերով:

Այդ օրերուն Թալաաթ փաշան դէպի Սեբաստիա իր ճամբուն վրայ Կեսարիայէն պիտի անցնէր ու թուրք դպրոցի աշակերտութեան հետ մենք ալ զինք դիմաւորելու պիտի մասնակցէինք: Խումբ մը տղաք դրօշակներ պարզած ու «Երբ տակաւին փոքր ցեղախումբ էինք՝ մեր հոչակը Երուպայի վրայ տարածեցինք» երգելով ընդունելութեան մասնակցեցանք: Սակայն Թալաաթ փաշային ինքնաշարժը մեր առջեւէն սրընթաց անցաւ փոշիի ամպեր տարածելով իր ետին ու մենք վերադարձանք դպրոց:

Վերջապէս Ամերիկան ալ պատերազմի կը մասնակցէր⁵⁹ ու կը սպասուէր որեւէ ատեն դպրոցի գրաւումը կառավարութեան կողմէ ու ամերիկացի անձնակազմին երկրէն արտաքսումը:

Շաբթուան մը ընթացքին երկու անգամ պետական պաշտօնատարներ ու ոստիկանութեան սպան դպրոց այցելեցին եւ տնօրէնին հետ տեսնուեցան: Այս արտասովոր այցելութիւնները մենք կ'ընկալէինք որպէս ծուղակ:

Արդարեւ, առաւօտ մը կանուխ, մենք գտանք դպրոցը ամէն կողմէ զինուորներով պաշարուած: Բոլորս ալ հրաւիրուեցանք մեծ սրահ, ուր ամերիկացի տնօրէնը յուզուած ձայնով յայտարարեց թէ կառավարութիւնը յանձն առած էր մեզ ուրիշ դպրոց փոխադրել, քանի որ իրենք պիտի մեկնէին, ու թելադրեց որ փախչիլ չփորձենք, քանի որ մեր լրիւ անուանացանկը կառավարութեան մօտ կը գտնուէր ու արդէն զինուորներն ալ պիտի չթոյլատրէին որ դուրս ելլենք:

Աղօթեց մեզի համար ու գրասենեակը քաշուեցաւ:

Ներքին հսկիչ ամերիկուհի Պրիսթօլը⁶⁰, որ մեր մեկնումի պահուն մինակը պատին վրայ բարձրացած արցունքոտ աչքերով իր թաշկինակը կը շարժէր ու մեզի ողջերթ կը մաղթէր, իմացուց որ

մեզի հետ տանելու չափ միայն մեր հագուստները կրնայինք ունենալ որչափ որ կ'ուզեինք: Արդէն քիչ ետք կարգ մը թուրքեր ներս խուժած ու չամիչ եւ պաքսիմաթ կողոպտած էին:

Մենք կարգով շարուեցանք եւ զինուորներուն հսկողութեան տակ [ուղղուեցանք] դէպի Քորտոն Պոյու, անկէ ալ՝ աղջկանց ամերիկեան վարժարանին առջեւ կանգ առինք: Հոն, երկու ձիաքարշ կառքերու մէջ նստած Կեսարիոյ հայ կաթողիկէներու մեծաւորին եւ ուրիշ անձերու հանդիպեցանք:

Գերմանական երկու մեծ ինքնաշարժներ վարժարանի աշակերտուհիներու վերջին խումբը կը փոխադրէին ու մենք անոնց վերադարձին պիտի սպասէինք:

Բաւական ատեն ետք ինքնաշարժները հասան ու մեզ ալ փոխադրեցին:

Օրը իրիկուն եղած էր ու չորս-հինգ հոգի մնացած էինք: Ուրեմն մեզ Թալասի ոստիկանատունը յանձնեցին՝ գիշերը անցընելու համար:

Մուխթարին երաշխաւորութեամբ տուն դրկուեցայ ու այլեւս չվերադարձայ:

Մի քանի օր ետք, երբ ոստիկանները եկած էին զիս տանելու՝ արդէն ես ջերմախտով վարակուած ու ինքզինքս կորսնցուցած կը զառանցէի: Կար նաեւ զինուորական բժիշկ Գալփաքճեանի տեղեկագիրը, որուն համաձայն առողջական վիճակս շատ ծանր էր:

Դպրոցէն մեր մեկնումի յաջորդ օրն իսկ ամերիկեան զոյգ վարժարանները գրաման ենթարկուած ու *Շիֆաեուրպու* անունով զինուորական հիւանդանոցի վերածուած էին. ամերիկացիներն ալ՝ մեկնած: Դպրոցական ընկերներէս հետագային միայն մէկ հոգիի հանդիպեցայ: Աղջիկներէն երբեք լուր չունեցայ: Վերապրողներ եղա՞ն արդեօք. չեմ գիտեր:

*

* *

Այդ օրերու պայմաններուն տակ, բժիշկի օժանդակութեամբ կարելի եղած էր զիս խնամել ու բաւական մը ապաքինած էի: Ոստիկանները զիս մոռցած էին: Հաւանաբար արդէն մեռած կը նկատէին: Անօթութիւնն ու թշուառութիւնը հետզհետէ մեր վրայ աւելի ծանր սկսած էին ճնշել:

Ամէն առաւօտ կանուխ, ձեռքս հարիւր փարանոց կարմիր թղթադրամ բռնած, փուռի առջեւ կարգի կը կենայի կտոր մը հաց

ստանալու համար, եւ երբեմն ալ ուրիշներու հետ քաշքշուելով՝ արդէն մաշած հագուստներէս մաս մըն ալ պատռուած՝ ձեռնունայն կը վերադառնայի:

Մայրս որպէս հիւանդապահուիի արձանագրուեցաւ ու ամէն օր երկու կողմէ հաստ դերձանով կապուած կաւէ ամանի մը մէջ (*գարավանա*⁶¹), մէջը խոշոր ոսկորներով, ոսպի կամ ծաւարի ապուր ու հաճարէ ու կորեկէ պատրաստուած հաստ հաց մը «թային»⁶² կը բերէր: Ձիւնին թէ բուքին, ես ամէն օր կոնակս տոպրակ մը շալկած, մէջը կշիռ ու կշռաքարեր, թաղէ թաղ կը շրջէի ու ծիրանի կուտ կը հաւաքէի: Տունէն ներս մօրեղբայրս ու քոյրերս կը կոտրէին զանոնք: Կեղելը կը ծառայէր որպէս վառելիք, իսկ միջուկը քալելով մօտաւորապէս երկու ժամ հեռու Կեսարիա կը տանէի ծախելու համար: Անոր իւղէն օճառ կը շինուէր:

Օր մը, ճամբուս վրայ, Կեսարիոյ Գըլ Գափու փողոցի բաց դրան մը մօտ ու ցած պատի մը վրայ կոնակիս տոպրակը տեղաւորեցի, որպէսզի յօգնութիւնս քիչ մը առնեմ: Դուռնէն ներս կար խոշոր սենեակ մը, ուր ճերմակ փաթեցող *իմամ*⁶³ մը շուրջը տղաք հաւաքած սեւ տախտակին վրայ բացատրութիւններ կու տար. իսկ շուրջիններէն տարիքով աւելի մեծ երեւցող մէկն ալ ոտքի կեցած՝ *իմամ*ին հարցումներուն չէր կրնար պատասխանել: Չեմ գիտեր պատանեկան ինչ զգացումներով տարուած՝ ներս մտայ ու սկսայ *իմամ*ին հարցումներուն պատասխանել: Այս անակնկալ միջամտութիւնը պահ մը ներկաները շուարումի մատնեց ու *իմամ*ը ինծի դառնալով անունս ու իմ ըլլալս հարցուց:

Ես կմկմացի: «Կրօնափոխ ես, *կեավոյր* ես», հարցուց: Չպատասխանեցի: Սպառնալից ակնարկ մը նետեց ինծի ու հայիոյանքներով դուրս վռնտեց: Տոպրակը շալկած երբ կը հեռանայի, արդէն կը լսէի *իմամ*ին լուտանքներն իր աշակերտներուն ուղղուած. «Ձեզմէ պզտիկ *կեավոյր*ի լակոտը ձեզմէ շատ բան գիտէ»:

Ձիւնուորական կարգ մը սպասարկութեանց մէջ աշխատող զինուորները իրենց բաժին հացը (*թային*),- թէեւ արգիլուած,- կը ծախէին ու ես կը գնէի՝ ես ալ իմ կարգիս աւելի սուղի ծախելու համար: Այս առեւտուրը արգիլուած էր ու շատ վտանգաւոր: Յաճախ զինուորական ոստիկաններ (*զանոն չաուշու*) թաղէ թաղ զիս կը հալածէին ու խանութպան Էմին Էֆենտին, որ մեղսակից էր ինծի, զիս կը պաշտպանէր:

Մօրեղբայրս տունէն ներս կը կարդար ու կը գրէր: Օրացոյց կը պատրաստէր: Թուղթի վրայ տեղ-տեղ կէտեր կը գծէր ու անոնցմէ եզրակացութիւն կը հանէր, գուշակութիւններ կ'ընէր:

Մեր տանիքին վրայ իջած աղանի մը բռնելով մորթեցինք ու մօրեղբայրս անոր արիւնով եւ փետուրով դուրսի դրան վրայ խոշոր է մը գրեց ու յայտարարեց թէ գէշ մտադրութեամբ մարդիկ դուռնէն ներս չեն կրնար մտնել: Օր մըն ալ ըսաւ թէ Հայաստանի կառավարութիւնն ստեղծուած էր ու թագաւորին անունն ալ Յովհաննէս⁶⁴ էր:

Սկսած էինք չոր խոտով լեցուած խշտեակներու վրայ պառկիլ ու իմ անկողինս եւ վերմակս մնացած էին Ամերիկեան Քոլէճը: Թէեւ կը մտածէինք անոնց ազատման մասին, ինչ որ պարզապէս արկածախնդրութիւն էր: Մօրեղբօրս գուշակութիւնները այդ մասին շատ վտանգաւոր էին:

Օր մըն ալ թելադրեց որ կրնայի երթալ ու զանոնք առանց վախի բերել: Ուղղուեցայ դէպի դպրոց: Երկու տեղ սովինաւոր պահակ զինուորի առջեւ անցայ: Դպրոցի շէնքէն ներս չորրորդ յարկի ննջարանը բարձրացայ ու իմ անկողինս, վերմակս ու ծածկոցս շալկած՝ շատ զինուորներու աչքին առջեւէն նոյն ճամբով տուն վերադարձայ: Չեմ կրնար հաւատալ որ մօրեղբայրս կրցաւ զիս պաշտպանել, բայց չէի ալ կրնար հաւատալ թէ ինչ համարձակութեամբ ես գացի ու ինչպէս ապահով վերադարձայ:

Հակառակ մաշած հագուստներս չձգելու փափաքիս, անոնք որոշած էին զիս լքել: Մայրս քիչ մաշած բամպակէ տպածոյ բազմոցներուն եւ թոնիրին վրայի բուրդէ կոշտ թելերով հիւսուած ծածկոցին երեսները քակեց, զանոնք իմ այգիներէն բերած ընկուզենիի տերեւներով ներկեց ու ինծի համար զգեստ մը կարեց: Հաստ բուրդէ թելով հիւսուած գուլպայիս ներբանը ամբողջովին փոխուեցաւ: Կը մնային կօշիկներս: Այծի չորցած կաշիներ, իրենց մազերով, տան մէջ որպէս բազմոց կը ծառայէին: Անոնցմէ ոտքիս մեծութեամբ կտրեցի, եզերքին մօտ տեղ-տեղ ծակեր բացի ու անոնց մէջէն դիմացկուն դերձան անցուցի: Այս տոպրականման կօշիկին մէջ ոտքս տեղաւորեցի ու դերձանը քաշելով կապեցի ոտքիս վրայ: Անոնք ոտքերս թէ տաք եւ թէ ալ փափուկ կը պահէին ու ձիւնի կամ սառի վրայ ալ չէին սահեր:

Ձիւնին ու փոթորիկին հետ միատեղ, անօթութիւնը ճնշած էր մեր վրայ: Քանի մը օրէ ի վեր դուրս չէի կրցած ելլել եւ միայն մօրս բերած ապուրն ու հացը երկարատեւի համար անբաւարար էին

մեր բոլորին: Տունին պղինձէ ջրամաններն ալ (*կիւկիւմ*) ծախուած էին եւ օր մը կաւէ խոշոր սափորով հորէն ջուր բերած ատենս ինկած ու գլուխս ալ ճեղքած էի: Տան մէկ անկիւնը մնացած քիչ մը գարիի ալիւրն ու խաղողի անուշը խառնելով «նեվզինէ» շինեցինք: Հակառակ գարիի թեփի փուշերուն, որոնք մեր բերանը կը վիրաւորէին, մօրեղբօրս հետ անհամաձայն էինք այս ուտելիքին բաժանման շուրջ, եւ վերջապէս կշիռով կշռեցինք ու իրեն հետ հաւասար բաժիններ ստացանք:

Կէսօրէ ետք մըն էր. մեր դուռը զարնուեցաւ: Դպրոցի երկաթագործ վարպետ Մկրտիչ աղային կինն էր: Անոնք ալ կրօնափոխ եղած էին: Ամուսինը հիւանդ պառկած՝ տանիքի վրայի ծիւնը շատ դիզուած ըլլալուն, ինձմէ կը խնդրէր որ մաքրեմ: Գլուխս եւ երեսս գոցելէ ետք, ժամ մը ցուրտ հովին դէմ մաքառելով ծիւնը մաքրեցի եւ որպէս վարձատրութիւն ձեռքի մեծութեամբ հաց ստացայ: Զայն ընտանիքով բաժնուեցանք:

Եկած էր գարունը: Մայրս հիւանդ էր: Պղինձէ թաս մը ձեռքս, մածուն գնելու համար շուկայ գացի: Կապոյտ աչքերով, ոչ շատ երկար մօրուքով ու ջղուտ արտայայտութեամբ Մեհմէտ էֆենտին շուկայի պզտիկ մզկիթին *խմամն* էր ու խանութն ալ՝ անոր դիմացը: Անոր քով էր մածունը: Երբ ներս մտայ, «Ա՛հ,- ըսաւ,- լաւ եկար. հիմա մեր Օսմանը (իր տղան) լուացուելու գնաց, շուտով դուն ալ անոր միացիր որ այսօր *ազէն*⁶⁵ միասին կարդանք ու դուն ալ սորվիս»: Մարմնէս պաղ քրտինք սկսաւ հոսիլ: Առանց ինքզինքս կորսնցնելու ըսի. «Շատ սիրով, Մեհմէտ էֆենտի, սա մածունը հիւանդ մօրս տանիմ ու վերադառնամ»:

Այդ դէպքէն յետոյ միշտ կը զգուշանայի աղօթքի ժամերուն շուկայ իջնելու եւ Ահմէտ էֆենտիին խանութին առջեւէն անցնելու:

*

* *

Թալասի մէջ ամէն հայ կրօնափոխ եղած էր, այլապէս՝ պիտի չկարենար աքսորէ գերծ մնալ: Հաւանաբար միակ բացառութիւնը կը կազմէր ծերունի մեծ-մայրս (հօրենական), որուն տակաւին չծանօթացանք: Ութսունը անցած այս կնոջ գոյութիւնն իսկ թուրքերը կրնային մոռցած ըլլալ: Անունը Մարիամ էր, սակայն «Ճիշտ տուտու» կը կոչէին զինք՝ իր երիտասարդութեան ատեն շատ փայլուն ու պճնուած ըլլալուն համար: Այն ատեն մեզի մօտիկ իր մօր տունը կը բնակէր: Ժամանակին մայրը Երուսաղէմ գացած, *հաճի*⁶⁶ եղած ու մեռած ատենն ալ հոնկէ բերած ճերմակ ու

կրօնական նկարներով զարդարուած պատանքի մէջ փաթեթուած էր: Իր ժամանակին խելացի եւ յարգուած կին մը եղած էր: Իր տան կից կար Սուրբը՝ եկեղեցիի սենեակ մը, ուր Սուրբ Աստուածածնի պատկերին առջեւ կանթեղ ու մոմեր կը վառէին եւ միայն կիներ կը յաճախէին հոն: Քահանան տարին մէկ անգամ հազիւ թէ ոտք կը կոխէր հոն: Կանթեղի ձէթն ու մոմերը բարեպաշտուիներու նուիրատուութեամբ կը հայթայթուէին: Պակսածը մեծ-մայրս ինք կը հոգար: Սուրբին մաքրութեան ալ պատասխանատուն ինք էր ու բանալին իր մօտ կը մնար: Ան շատ բարեպաշտ ու բարեսիրտ էր:

Սովորութիւնն էր շաբաթը մէկ-երկու անգամ պղինձէ տաշտի մէջ խմոր պատրաստել ու փուռ տանելով հաց եփել տալ: Այդ օրերը առաւօտ շատ կանուխ ան ինծի համար վրան հաւկիթ քսուած բարակ հաց պատրաստել կու տար ու տաք-տաք կը բերէր: Տունէն հազիւ ներս մտած՝ կը սկսէին իր թելադրանքները՝ դրան ետին աւել դնելու էինք, պղինձէ կաթսաներուն բերանները գոց պահելու էինք, ելն.: Եթէ տակաւին անկողինը պառկած մէկը տեսնէր, «Ինչո՞ւ պիտի ելլես, քանի որ իրիկունը նորէն պիտի պառկիս», կ'ըսէր:

Օր մը, առտուն գնած պտուղները տուն բերաւ: Հօրս հարցումին՝ թէ ինչո՞ւ գնած էր, «Մարդուն խղճացի. ոչ ոք առաւ, ես առի», պատասխանեց:

Ան հօրս կը հարցնէր. «Սերովբէ հայր սուրբէն նամակ կ'այ՞»: Իր հօրմէս պզտիկ որդին՝ Ռուբէնն էր ան, սակայն Երուսաղէմի ժառանգաւորացի Սերովբէ հայր սուրբն էր իրեն համար եւ ո՛չ թէ Ռուբէն որդին:⁶⁷

Ազգականներու եւ մօտիկ բարեկամներու տունէն ներս կ'ուզէր ամէն կերպ օգտակար ըլլալ: Բայց վերջապէս անօթութիւնն ու թշուառութիւնը եւս իրենց դերը կատարեցին ու ան մեռաւ: Քահանայ չկար, թուրք *խմամին* ալ կարելի չէր առաջարկել, քանի որ կրօնափոխ եղած չէր: Ուրեմն չկար մէկը որ խեղճ մեծ-մօրս անշնչացած մարմինը հողին յանձնէր: Վերջապէս քաղաքապետութեան մի քանի թուրք աշխատաւորներ գայն խոշոր ճերմակ սաւանի մը մէջ փաթեցին ու փողոցներէն քաշքշելով հայոց գերեզմանոցը տարին: Յուդարկաւորութեան միայն ես կը հետեւէի արցունքոտ աչքերով ու կոտորած սրտով, եւ մէյ մըն ալ թաղին ճերմակ շունը՝ պոչը շարժելով:

Գերեզմանատան դուռնէն ներս, անմիջապէս ծախին, մեր

ընտանեկան գերեզմանն էր: Ժամանակին հայրս մեծ-հօրս գերեզմանին վրայ անոր գլուխը քանդակել տուած էր, բայց յետոյ այդ արձանը կորսուած ըլլալով՝ խաչ մը տնկուած էր անոր տեղ: Ահա՛ այդ խաչի շուքին տակ, փոսի մը մէջ մեծ-մօրս մարմինը ամփոփուեցաւ:

Ինչ զուգահիւսութիւն. նոյն ժամուն եւ վայրին մէջ մեզի բաւական մօտ ուրիշ փոս մըն ալ փորուած էր: Հայ աւետարանականներու հովիւ պատուելի Նուպար Մնջէրեանը⁶⁸ մոլեռանդ իթթիհատական, կապոյտ աչքերով ու դեղին մազերով Թալասի փոսթ-հեռագրական տնօրէնին բարեկամն էր: Այդ ճգնաժամային օրերուն անոր թելադրանքով ու պնդումով կրօնափոխ եղած ու յետոյ խղճահարութենէն մեռած էր: Ահա այդ փոսին քովն ալ կանանչ փաթթոցով գիրուկ զինուորական *խմամին* աղօթքին մըմունջներով ան ալ հողին կը յանձնուէր:

Ծանօթանանք նաեւ սերունդէ սերունդ մինչեւ մեզի բերանացի փոխանցուած՝ հայ մեռելները թաղելու համար թուրք կրօնական իշխանութեանց կողմէ դարեր առաջ քահանային ուղղուած արտօնագրին... «Կապարէ թագով, սատանայի հագուստով, վատ անցեալով դուն մեծ քահանայ: Ձեր պիղծ ժողովուրդին սատկած ըլլալով, որպէսզի անոր դիին աղտոտ հոտը Մուհամէտի⁶⁹ կրօնքին չագդէ, քաղաքէն երեք նետ հեռաւորութեան վրայ փոս մը փորելով ձեր ունայն կրօնքի սովորութեան համաձայն մէջը կոխել կը հրամայուի»....:

*

* *

Տունէն ներս պաշարի բոլոր մեծ սնտուկները կոտրուած ու որպէս վառելանիւթ գործածուած էին՝ բացի մէկէն, որ տեղաւորուած էր գետնին վրայ բացուած անցքի մը վրայ, ուրկէ քանի մը աստիճաններով կ'իջեցուէր պանիրի պզտիկ մթերանոցը, որ հիմա՝ պէտք եղած ժամուն՝ կը ծառայէր քեռի Թորոսին համար որպէս թագստոց: Սնտուկին երեք բաժանմունքներէն մէկուն յատակի շարժուն տախտակը անմիջապէս կը բացուէր ու անկէ վար սահելով նորէն իր տեղը կը դրուէր: Սնտուկին միւս բաժիններէն կարգ մը ամաններ ալ շուտով հոն կը տեղափոխուէին:

Անհրաժեշտ էր փայտ ճարել: Օր մը, Շահէն իրենց այգին գնաց ու ծառերէն հաստ ճիւղեր կտրեց ու տուն բերաւ: Արդէն թուրքեր մեծ մասը կտրած ու տարած էին: Երկու օր ետք մի քանի ոստիկաններ տուն մտան: Մինչ այդ քեռի Թորոսը կրցած էր իր

թագստոցը իջնել: Շահէն ծեծեցին ու թոնիրին մէջ ձգեցին: Բարեբախտաբար թոնիրը վառած չէր: Ապա զայն ձերբակալելով ոստիկանատուն տարին իր երեք յանցանքներուն համար: Նախ տունը պահած էր ան թէ՛ զինուորական եւ թէ՛ աքսորէ փախստական մը, որուն մասին իմացած էին. ապա՝ առանց հրամանի ծառ կտրած էր. եւ վերջապէս՝ տան մէջ տեսած էին որթատունկի ճիւղերէ պատրաստուած ածուխ, որմէ կարելի էր վառօդ շինել: Իրականութեան մէջ, այս ածուխները քեռի Թորոսը կը գործածէր շաբաթ իրիկուան աղօթքի պահուն՝ խնկարկելու համար:

Օր մը ետք Շահէն Կեսարիոյ բանտը առաջնորդեցին: Բարձր պատերով շրջապատուած բերդ մըն էր: Սենեակէ մը ներս հրեցին զինք ու դուռը կղպեցին: Ներսը, շրջանակաձեւ, մարդիկ նստած էին: Անոնց դէմքերուն վրայ կը կարդացուէր չարութիւն ու հետաքրքրութիւն:

Շահէն պահ մը ոտքի վրայ այլայլած ու սմբած՝ շրջապատը զննեց: Սենեակին ճիշդ կեդրոնը ծալապատիկ նստած էր սեւ *գալփախով*⁷⁰ միջահասակ ու տգեղ մարդ մը, որուն երեսը ծաղկախտի խորշիկներով ծածկուած էր: Ունէր սեւ պեխեր ու ջղուտ շարժումներ:

Մարդը խիստ ձայնով մը հրամայեց որ Շահէն իրեն մօտենայ եւ անունն ու ինչո՞ւ հոն բերուած ըլլալը հարցուց:

«Անունս Մեհմէտ Լութֆի է», ըսաւ [Շահէն]: «Կրօնաւի՞ր՞ն ես», հարցուց: Ան [Շահէն] հաստատական կերպով գլուխը շարժեց:

Դաժան մարդը անակնկալօրէն կամաց մը ժպտեցաւ ու «Եկուր, տղաս, քովս նստէ», ըսաւ: Ապա ինքզինք ներկայացուց իբր *Գարաճեհեննէմ* (Սեւ Դժոխք) Սարգիս:

Պողազլեանի հայ գիւղերու գաղթականութեան ու ջարդի ժամանակ ան՝ լեռները ապաստանած՝ թուրքերու դէմ կռուած եւ կերպով մը անոնց ձեռքը ինկած ու բանտարկուած էր: Ան իր շուրջիններուն նայելով հայիոյեց ու սպառնաց այն անձին, որ պիտի համարձակէր Շահէին ծուռ աչքով նայիլ:

Արդէն ատենէ մը ի վեր իրիկունները պառկելու ատեն Շահէն իր հագուստովը կը մնար: Հոս ալ ո՛չ պառկելու տեղ եւ ո՛չ ալ յարմարութիւններ կային. ուստի, ան զինքը պաշտպանողին քով ոտքերը իրեն քաշած ու կծկուած, մինչեւ առաւօտ կէս-թմրած եւ կէս-արթուն մնաց:

Յաջորդ առաւօտ բանտարկեալները օդ առնելու համար բակը հանեցին: Բերդի պատին վրայէն պահակ զինուորներ կը

հսկէին անոնց: Շահէն ու Սարգիսը սենեակի պատին կոթնած, արեւին դիմաց կը տաքնային, իսկ քիւնն հալած ձիւներու ջուրը կը կաթկթէր անոնց ոտքերուն մօտ:

Քիչ ետք բանտարկեալներուն սեւ եւ կարծր հաց բաժնուեցաւ: Շահէն երկու ձեռքով իր հացը բռնած երբ կը պատրաստուէր բերանը տանելու, ահա հեռուէն ցնցոտիներ հագած եւ մագերը խոնուած բանտարկեալ մը ուրուականի պէս մօտեցաւ իրեն ու ակնթարթի մէջ անոր ձեռքէն յափշտակեց, տարաւ:

Սեւ Դժոխքին բոլոր սպառնալիքներն ու հայիոյանքները մնացին ապարդիւն: Հացին կէսը արդէն բանտարկեալին բերանը, իսկ միւս կէսն ալ ցնցոտիներուն մէջ տեղաւորուած էին: Շահէն յուզուած կը դողար: Իր բարերարը իր բաժին հացին մէկ մասը անոր տուաւ:

Օր մը ետք, Շահէն դրին բերդէն դուրս: Ազատած էր: Իր մօր յաճախորդուի թուրք հանրմներու բարեխօսութիւնը բարերար արդիւնք ունեցած էր:

Շահէին ժամանակակից սերունդը մանկականէն ետք պատանեկան շրջանն ալ աւարտելու մօտ էր: Սարսափն ու կողոպուտը, բանտը, չարչարանքն ու երբեմն ալ ջարդը եւ քստորը, իրենց թեթեւ ու ծանր հետեւանքներով, իրենց եւ իրենց հարազատներուն բաժին ինկած էին: Ամէն վայրկեան կը զգային թէ իրաւագրկուածներ են իրենք: Բայց ինչո՞ւ այդպէս էր աշխարհը իրենց նկատմամբ: Հալածուածի ու ճնշուածի զգացումը բնագոյ մըն էր իրենց համար՝ սկսեալ այն օրէն, երբ իրենց երախայական աչքերը բացեր էին այս աշխարհին: Վաղուան հեռանկարները մութ ու անորոշ՝ խաւար էր կեանքը, սեւ էր աշխարհը: Սեւ աշխարհ:

*

* *

1918-ի վերջին ամիսներն էին: Զինադադար հռչակուեցաւ: Տիրող կառավարութիւնը փոխուած ու որոշ չափով ազատութիւն տիրած էր: Թուրքիան պարտուած էր: Քեռի Թորոսը իր գործն ու բանը կարգի դնելով գնաց այն քաղաքը, ուրկէ եկած էր: Բայց ձեռնունայն վերադարձաւ. ամէն բան կողոպտուած էր: Ամէն օր նոր ու յուսադրիչ լուրեր կը հասնէին: Զինուորականութիւնը ամերիկեան զոյգ վարժարաններու շէնքերը պարպած ու մեկնած էր: Նախկին ամերիկացիներու հետ նորեր ալ հասան ու յանձն առին շէնքերը: Անոնք պէտք է որ մաքրուէին, նորոգուէին ու կարգի դրուէին: Մօտ քսանհինգ հոգի, զանազան անկիւններէ

հաւաքուած, վարպետ Գաբրիէլի հսկողութեամբ գործի լծուեցան:

Շահէին մայրը որպէս արդուկիչ ամերիկացիներուն մօտ գործի անցաւ, իսկ ինք նախ երեք հոգիով գործարաններու աղբը կը մաքրէր ու զայն հողով խառնելով պարտէզ կը թափէր: Տաս օրուան չափ ալ ուսին վրայ թի մը նետած՝ ճամբաներու նորոգութեան համար աշխատեցաւ:

.....



Կեդրոնը՝ Վոսմ Սամուէլեան, կողքին կանգնած իր երեք քոյրերով,
 ծախէն աջ՝ Շուշանիկ (Ուստայեան), Հայաստան (Տեմիրճեան) եւ
 Սաթենիկ (Զրաղեան-Սահակեան), ինչպէս նաեւ մօրեղբօրորդիով՝

Սրբեփան Թովաքպաշեան:

Նստած՝ Կարապետ Ուստայեան եւ Վոսմի մայրը՝ Ագապի, իրենց
 մէջտեղ ունենալով Կարապետի եւ Շուշանիկի երկու դուստրերը՝
 Աշխէն եւ Սիրան, 1926-ին, Պէյրուս:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Եօթը Հարիւր Յիսունը

Թնդանօթներու կրակը դադրած ու Առաջին Ընդհանուր Պատերազմը իր վախճանին հասած էր:

Յաղթականները Թուրքիոյ կարգ մը մասերը գրաւած ու նպաստամատոյց մարմիններ Անատոլիոն ներս կրցած էին թափանցել:

Կեսարիոյ մօտ Թալասի ամերիկեան հաստատութեանց ամերիկացի պաշտօնեաները վերադարձած էին, այս անգամ որպէս նպաստամատոյցի ներկայացուցիչներ՝ որբեր հաւաքելու եւ որբանոցներ կազմակերպելու առաքելութեամբ:

Սկսուած նպաստաբաշխ եւ որբահաւաքի գործը եւ մանաւանդ ամերիկացիներու ներկայութիւնը վերապրող խլեակներու սրտին մէջ նոր յոյսեր կ'արթնցնէր ու ապագայի նոր ու գեղեցիկ հորիզոններ կը խոստանար:

Որպէս Ամերիկեան Քոլէճի նախկին աշակերտ, ամերիկացիները իմ ուսուցիչներս կամ ծանօթներս էին, հետեւաբար շատ չանցած, օր մը զիս կանչելով հաղորդեցին թէ պէտք է Պողազլեանի մէջ հաստատուած որբանոցը մեկնէի որպէս ուսուցիչ ու անմիջապէս պատրաստուելու էի հոնկէ նոր հասած մի քանի անձերու ընկերակցութեամբ ճամբայ ելլելու:

Տակաւին շատ անփորձ պատանի, ինչպէս որ ժողովուրդը կ'ըսէ՝ «իւր մօր տուած անունովը կը մնայ»ի, կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով տունէն պիտի բաժնուէի:

Լսած էինք այդ շրջանին մէջ կատարուած անլուր վայրագութեանց եւ ջարդի պատմութիւնները: Նաեւ, վստահութիւն չունէի որպէս ուսուցիչ իմ ձեռնհասութեանս վրայ: Հետեւաբար խնդրեցի որ ինձի տեղոյն վրայ ուրիշ գործ մը տրուի:

Ամերիկացի ուսուցչուհիս համոզիչ շեշտով մը ըսաւ. «Ուրեմն չե՞ս ուզեր քեզի ազգակից անձնող մանուկներուն օգտակար ըլլալ»:

Չէի գիտեր թէ ինչ պատասխան տալու էր. արժանապատուութիւնս վիրաւորուած էր: Ուստի վայրկեան մը մտածելէ վերջ անմիջապէս ընդունեցի առաջարկը: Ամերիկայէն եկած վերարկու,

կօշիկ, տաբատ, գուլպայ ելն. հագցուցին եւ երկու հատ ալ կիսամաշ փողկապ. ահա՛ պատրաստ էի որպէս ուսուցիչ Պողազլեան մեկնելու:

Դէպի Պողազլեան

Պողազլեանէն եկած անձերու վստահուած էր զիս ապահով տեղ հասցնելու եւ իմ վրայ հսկելու պարտականութիւնը: Իրիկուայ մօտ Կեսարիա մեկնեցանք՝ յաջորդ առաւօտ կանուխ ճամբայ ելլելու որոշումով:

1919-ի հոկտեմբերեան աշնանային առաւօտ մը, երբ մզկիթներու բարձունքէն *միւլէզինները*⁷¹ *Ալլահ էքպէրով*⁷² հաւատացեալները աղօթքի կը հրաւիրէին, մեր ձիաքարշ կառքը կը թաւալէր սալայատակուած փողոցներու մէջէն ու քաղաքէն դուրս կ'ելլէր:

Հետզհետէ Արգէոս լերան ձիւնապատ գագաթէն արելը իր տկար ճառագայթները կը տարածէր չորս դին եւ մենք հեռուէն կը դիտէինք բլրակի մը վրայ բազմած էրթիլէթ գիւղը:

Ճամբու ընթացքին կը հանդիպէինք ծորերու եւ բլրակներու, որոնք կապուած էին ջարդի եւ արիւնի զարհուրելի պատմութիւններով:

Ահա եւ Ճէվիզլի Խանը՝ հարիւրաւորներու սպանդանոցը:

Արելը մայր մտած էր արդէն եւ լուսինը, ամպերու մէջ թագնուած, շատ քիչ անգամ իր երեսը ցոյց կու տար մեզի, երբ հասանք Գզըլ Ըրմազ գետին վրայ ձգուած բազմակամար կամուրջը: Ձորի մը մէջ բարձրաբերձ եւ սեպ ժայռերու մէջտեղէն գետը կը հոսէր օձապտոյտ: Մեր կառքը քարերու վրայէն դէպի վար՝ կամուրջ կը յառաջանար ահագին աղմուկով մը, որուն արձագանգ կու տար անդնդախոր ձորը:

Ժայռերու մէջ փորուած էին քարայրներ, ուր կը բնակէին Սիւրէյա պէյի մօտակայ ագարակի բնակիչներէն ոմանք, որոնք երբեմն կը սնանէին հայու արիւնով ու աւազակութեամբ:

Մեր կառքին անիւը կոտրած եւ ժամանակն ալ ուշ ըլլալով, ճամբուն մօտ ջուրէն հեռու կամուրջի մը տակ աւազի վրայ այն օրը գիշերեցինք: Մեզմէ քիչ հեռու կամուրջի պահակը՝ երիտասարդ թուրք ոստիկան մը, կը շրջագայէր:

Կեսարիայէն հասած ուրիշ կառքով յաջորդ առաւօտ մեր ճամբան շարունակեցինք: Փխրուն եւ կաւճանման քարերով եզերուած փոշեթաթախ ճամբէ մը յառաջանալով հասած էինք Գուրշուն Տաղը շրջանը՝ լայնատարած դաշտի մը վրայ: Կէսօրը

անցած էր. հեռուէն կը տեսնէինք իրենց տաք ջուրի աղբիւրներով ծանօթ թրքական Եազը Չեթմէ եւ Ճավլագ գիւղերու բարտիները:

Մեր ճամբուն վրայ, ուղղակի նայուածքով, հեռուէն կը տեսնէինք գետնի վրայ տարածուած բազմաթիւ ճերմակ կլորակ գունդեր: Աշնանային այս եղանակին արդէն սեխն ու ծմերուկը հաւաքուած, չէի կրնար հասկնալ թէ ինչ կրնային ըլլալ անոնք: Մի գուցէ քարեր են մտածեցի: Հետզհետէ կը մօտենայինք:

Ա՛հ, ահա՛, գանկեր ու գանկեր. մեր կառքը կ'անցնէր անոնց շատ մօտիկ: Սարսուռ մը պատեց մարմինս. տոժունամ էի ու սարսափահար թաղուած խոր մտածումներու մէջ:

Այլանդակ ու սարսռագղեցիկ տեսարաններ գիրար կը հալածէին երեւակայութեանս մէջ: Ես անծնող մանուկներու ուսուցիչ էի. մի գուցէ այդ դժբախտ հայորդիները, թէեւ տակաւին ինծի անծանօթ, այս մեռելներու հոգեհատորներն ըլլային: Կը կարծէի թէ այդ գանկերը մարմին առած, արիւնաթաթախ ու յօշոտուած, պզտիկ մանուկներու ձեռքէն բռնած իմ ետեւէս կը վազէին, հոգեվարքի մէջ ու գետին պառկած կիներ իրենց մանուկները ինծի կ'երկնցնէին: Բազմաթիւ կմախսացած ու աչքերնին փոսը ինկած մանուկներ, կիսամերկ ու անօթի ուրուականներու նման, չորս կողմս պաշարած էին:

Չեմ գիտեր որչափ ատեն խորասուզուած էի այսպէս:

Կառապան Օսմանի ծայնը կը սթափեցնէր զիս: Պողազլեանը կը տեսնուէր հեռուէն եւ Օսմանը իր *պախշիշը*⁷³ կ'ուզէր, քանի որ առաջին անգամ իրեն վիճակուած էր Պողազլեանը հեռուէն ինծի ցոյց տալու առիթը:



Վոսմ Սամուելեան 1928-ին:

Հէնրի Մըրֆի

Հալէպ, Ապրիլ 13, [1]924

Մօտաւորապէս ամիսուկէս առաջ քաղաքս ժամանեց Ամերիկեան Նպաստամատոյցի Սուրիոյ նորընտիր պաշտօնեաներէն Մր. Հէնրի Մըրֆին⁷⁴:

Կ'արժէ այստեղ մի քանի ծանօթութիւններ տալ մեր ազգայիններուն այս կայտառ, խղճամիտ, տաքարիւն, հայասէր երիտասարդ ամերիկացիին մասին:

Մր. Հէնրի Մըրֆին առաջին անգամ ըլլալով Ամերիկայէն 1920-ի Մայիսին Կեսարիոյ Ամերիկեան Նպաստամատոյցի պաշտօնեայ որոշուելով իր գործի վայրը՝ Թալաս հասաւ, [եւ] հոն տղոց կեդրոնական արհեստանոցի եւ որբանոցի տնօրէնութիւնը ստանձնեց:

Ահա թէ հազիւ մի քանի ամիսներ անցան, Գօնիայէն, Պրուսայէն, Էսկիշէհիրէն եւ շրջակայքէն հազարներով գաղթականներու յորձանքը սկսաւ խուժել, վերջին ծայր թշուառութեան մատնուած:

Աւելորդ է անոնց մասին երկար մանրամասնութեան մէջ մտնել, քանի որ գրեթէ ամբողջ հայութիւնը խմած է անոր թարմ քացախը:

Ահա այս անձնուէր երիտասարդին էր որ վիճակուեցաւ անոնց ամէն կերպով օգնել, կարելի եղածին չափ բարութել անոնց ցաւերը:

Ինքը՝ գործունեայ, տաքարիւն, վեհանձն, որոշ ծրագիր մը հետապնդելով նետուեցաւ իր ամբողջ ուժովը այս գործին մէջ:

Ամէն ոք կրնար իրեն վստահիլ եւ մտերիմ ըլլալ: Ամէնուն հետ քաղցրութեամբ, ցաւակից, խրախուսական խօսքերով կը վարուէր ու սփոփել կը ջանար անոնց վիճակը:

Հակառակ տեղւոյն կառավարութեան խիստ ու անհաշտ ընթացքին, ինք յաջողեցաւ ամէն կերպով օգնել եւ պաշտպանել զանոնք, մինչեւ իր յետին իրաւասութենէն ալ անելի:

Կարճ ժամանակի մէջ թուրքերէն լեզուն սորվեցաւ, ամէն գաղթականի խրճիթ կը մտնէր, մեծին հետ մեծ, իսկ պզտիկին

հետ պզտիկ [կ'ըլլար]: Քաջ, անվախ՝ ծիով ամէն գիւղ կ'այցելէր, հակառակ որ ճամբաները շատ վտանգաւոր էին եւ քանի քանի անգամներ ւազակներէ շրջապատուած եւ նորէն ազատած էր:

Իր ամբողջ մտայնութիւնը կեդրոնացուցած էր անգութ գազաններու ճիրաններուն տակ չարչարուող խեղճ մարդկութեան եւ ծնողազուրկ, անպաշտպան հազարներով որբուկներու նիւթապէս թէ բարոյապէս օգնութեան խնդրոյն շուրջ:

Որբանոցի մէջ ամէն տղու հետ իբր բարեկամ, մտերիմ ընկեր էր. անոնց հետ կը խաղար եւ անոնցմէ ամէն մէկուն քշիկ մը յաջողութիւնը տեսնել իրեն մեծ հաճոյք կը պատճառէր:

Որբանոցի մէջ ոչ թէ տնօրէն մը, այլ՝ ամէն մէկուն մտերիմ բարեկամը, ցաւակիցը եւ խորհրդակիցն էր: Միեւնոյն ժամանակ, ան իր որոշ ազդեցութիւնը եւ հեղինակութիւնը կ'ունենար: Ահա՛ ասոր համար է որ մեծ ժողովրդականութիւն շահեցաւ գաղթականաց եւ որբերու շարքին մէջ. ամէն մի որբ, իր որբանոցի պաշտօնեայ եւ գաղթական, իր անունը երախտագիտութեան մի յատուկ շեշտով կը յիշէ եւ իր անունը հոմանիշ է եղած անկեղծութեան, մտերմութեան, կորովի վեհանձնութեան եւ ցաւակցութեան մարմնացումին:

[1]922-ին, որբերուն Անատոլուէն փոխադրման շրջանին, Մէրսինի մէջ իր որոշ դերը ունեցած է նաեւ [անոնց] փոխադրութիւնը դիւրացնելու եւ հազարաւոր որբերու եւ գաղթականներու ապահովութեան եւ պաշտպանութեան գործին մէջ:

Կ'ուզէի հոս մի քիչ ծանրանալ մանրամասնօրէն բացատրելով մարդասէր ու կորովի ամերիկացիին գործունէութիւնը:

[1]922-ի Նոյեմբերի վերջերը, Մէրսինի Պօտօսագի գործարանի շէնքին մէջ լեցուած էին որբեր ու որբուհիներ: Օրերէ ի վեր բանտարկուածի մը վիճակը ունեցող մի քանի 15-16 տարեկան որբեր իրենց հետ Դաւիթ ուսթա անուն իրենց մի հսկիչին առաջնորդութեամբ ծովեզր կ'երթան պտոյտի: Հոն կը հանդիպին մի քանի թուրքերու, որոնք,- վարժուած եւ ամիսներէ ի վեր տիրող խառնակութենէն օգտուելով եւ կամ մասնաւորներու կողմէ դրդուած՝ շատ մը որբեր եւ գաղթականներ կողոպտած, չարչարած, վիրաւորած եւ մինչեւ իսկ եօթանասունի մօտ գաղթականներու հետքերն անգամ անհետացուցած էին,- մօտենալով որբերուն [վրայ] ալ կը փորձեն միեւնոյն սպառնալիքները, բայց նայելով որ վերջինները կը դիմադրեն, իրենց դանակները քաշելով կը յարձակին անոնց վրայ: Կողոպտիչներուն կ'ընկե-

րանայ նաեւ մի զինուոր: Ընդհարումին մէջ, որբերը եւ իրենց առաջնորդը քարերով կը դիմադրեն եւ չափազանց խրոխտաբար իրենց վրայ յարձակող զինուորը վիրաւորելով, կը յաջողին փախչիլ ու ապաստանիլ գործարանը:

Մութը հագիւ թէ կոխած էր, ահա՛ ոստիկան զինուորներ, բօլխներ եւ տեղւոյն ոստիկանապետը առաջնորդութեամբ վիրաւորեալ զինուորին կը մօտենան գործարանի դրան եւ լուր կը հաղորդուի դռնապանին միջոցաւ որ Մր. Մըրֆին դուռը գայ:

Բոլոր որբերը եւ պաշտօնէութիւնը սարսափած [էին], բայց միաժամանակ իրենց արի ամերիկացի տնօրէնին վրայ անհուն յոյս ու վստահութիւն ունէին:

Ան չի հաւանիր անոնց քովը երթալ, բայց կը տեղեկացնէ թէ, եթէ կարելոր գործ մը ունին, կրնան իրեն մօտ գալ:

Ոստիկանապետը մի ոստիկանի եւ վիրաւոր զինուորին ընկերակցութեամբ Մր. Մըրֆիին կը ներկայանայ եւ խօսակցութիւնը կը սկսի հետեւեալ բանաձեւով.

Ոստիկանապետը.- Պ[արոն], ձեր որբերէն եւ պաշտօնեաներէն ոմանք ծովեզրը պտոյտի գացող մեր զինուորներէն մին դանակով չարաչար վիրաւորած են եւ վիրաւորեալը առայժմ հոս է (ցուցնելով զինուորը). մենք կ'ուզենք յանցաւորները ժամ առաջ ձերբակալելով իրենց արդար պատիժը տալ:

Մր. Մըրֆին.- Իրաւ կ'ըսէք եւ կը հաւատամք որ անպաշտպան եւ աննեցուկ որբ մը, որ թուրքի վախը մինչեւ ոսկորները թափանցած, անոր երեսը տեսնելով բոլոր մարմնով կը սարսռայ, համարձակութիւնը ունենայ վիրաւորել թուրք զինուոր մը, եւ միթէ տակաւին անցեալ շաբաթներու մէջ տեղի ունեցած խժդժութեանց թարմ յիշատակները անոնց մտքին մէջ չէն: Անկարելի բան է. բայց եթէ երբեք այս որբերը հոս ժողուելով, անոնց տեսակ տեսակ էնթրիկներով արտասահման ելլելը արգիլելով, թշուառութեան մատնելով ու չարչարելով ոչնչացնելու որոշ գաղափարը ունիք, ան տարբեր է: Եւ [երբ] այս [իբր] բացարձակ ճշմարտութիւնը կը ներկայացնէ ան [վիրաւորեալը- Վ.Ղ.], ուրեմն ես ալ պէտք եղած տեղերուն տեղեկացնեմ ու այս մասին Մուսթաֆա Քէմալ փաշային ալ պիտի տեղեկացնեմ:

Ոստիկանապետը.- Չէ, պարոն, չէ. չէ թէ որբերը վիրաւորեր են, այլ՝ ձեր պաշտօնեաներէն մին, որ որբերուն կ'ընկերանար, եւ կ'ուզենք հիմա ձերբակալել զայն:

Մր. Մըրֆին.- Ինչպէս որբերը, նոյնպէս ալ հոս գտնուող մի

քանի պաշտօնեաները վախկոտ մարդիկ են. եւ արդեօք ինչո՞ւ համար չէք հարցուցած վիրաւոր զինուորին թէ ինքը ի՞նչ ըրած է անոնց, որ վէրք ստացած է անոնցմէ, եւ արդեօք ինչո՞ւ համար անցած շաբթու դէպքերը ձեր ուշադրութիւնը չգրաւեցին՝ որչափ որ այս. եւ անկարելի է որ նպաստ[ամատոյցի] պաշտօնեայ կամ որբ մը համարձակութիւնը ունենայ թուրք զինուորի մը կամ թուրքի մը իր ամէն տեսակ բռնութիւններուն գլուխ ծռելէ զատ բան մը ընել: Ուստի նորէն կը շեշտեմ իմ առաջին ըսածս, որ դուք որոշ գաղափար մը կը հետապնդէք ասոնք պատրուակ բռնելով:

Ուստիկանապետը.- Պ[արոն], վիրաւորեալը մինչեւ իսկ կը ճանչնայ եւ որոշ փաստեր ունի որ ձեր պաշտօնեաներէն մին մի քանի որբերու ընկերակցութեամբ վիրաւորեր է զինքը, ուստի կը պահանջենք որ այդ պաշտօնեան մեզի յանձնէք:

Մի երկար վիճաբանութենէ վերջ, կը յօժարին պաշտօնեաներուն մէջէն վիրաւորին զատել տալ զինքը վիրաւորողը: Ան ուղղակի Դաւիթ ուստան կը մատնանշէ եւ անմիջապէս կը ձերբակալեն զայն՝ առժամաբար բանտը դնելով, որպէսզի դատարան կանչեն:

Մր. Մըրֆիին անդադար դիմումներուն եւ որոշ ազդեցութեան շնորհիւ թէ բանտը եւ թէ դուրսը գտնուող շատ մը շուներ, որոնք ակոյակ կը սրէին թուրք զինուոր մը վիրաւորող *կեալուրին* դէմ՝ ժամ առաջ զայն ծեծել սատկեցնելու, բան մը չկրցան ընել [եւ] տասը օր բանտարկուելէ վերջ անպարտ արձակուելով Սուրիա մեկնեցաւ [Դաւիթ ուստան]:

Այս պզտիկ դէպքը կրնայ գաղափար մը տալ իրեն մասին, որ իր Թուրքիոյ մէջ անցուցած կարճատեւ կեանքը լի է նմանօրինակ դէպքերով:

Մէրսինի մէջ գիշեր ցորեկ առանց հանգիստի կ'աշխատի, որպէսզի որբերուն եւ գաղթականաց վիճակը բարւոքէ: Օրուան մեծագոյն մասը շէնքին մէջ կ'անցնէ նոր նոր դիմումներ ընելու եւ այլեւայլ խժոժութեանց ու չարչարանքներուն առաջքը առնելու համար:

Բոլոր որբերը եւ գաղթականները, ինչպէս Կեսարիոյ, նոյնպէս եւ ա՛լ անլի Մէրսինի մէջ երախտագիտական զգացումով կը դիտեն երիտասարդ ամերիկացիին ընթացքը եւ անոր գոյութիւնը ամէնուրեք յոյս, վստահութիւն ու մտերմութիւն կը ներշնչէր ամէնուն:

Վերջապէս, ըստ կարելոյն, ապահովաբար բոլոր որբերը եւ

գաղթականաց մեծ մասը արտասահման փոխադրելի վերջ, ինք ալ 1923-ի սկիզբը Յունաստան մեկնեցաւ, իոն երկար ժամանակ հանգիստի կոչուեցաւ, որպէսզի իր չափազանց աշխատանքէն խանգարուած ֆիզիքական մեքենան ու մտքի խառնակութիւնը հանգստանան:

Ինքը կը պատմէր թէ ինչպէս գիշերները այն հազարաւոր թշուառ որբերու եւ գաղթականաց ուրուականները զինքը անհանգիստ կ'ընէին, որպէսզի օգնէ զիրենք շրջապատող այլեւայլ թշնամիներէ [փրկուելու] եւ ինքը օգնելու համար հապճեպով արթննալով՝ սենեակի չորս պատերէն զատ բան մը չէ գտած եւ քանի քանի գիշերներ անքուն անցուցած է:

Ան ամիսներով շարունակեց իր գիշերային անհանգստութիւնը: Իր աչքին առջեւ կը պարզուէր այն տեսարանը, որ ինչպէս գիշեր ատեն որբերը կարգով շարած դէպի նաւահանգիստ կ'առաջնորդէր՝ ճամբան ամէն հաւանական յարձակումի եւ չարչարանքի կանխազգուշական միջոցներով միտքը յոգնեցուցած, [որ] զանոնք շոգենաւ փոխադրելու ժամանակ ինչպէս նաւավարները կը սպառնային զանոնք ծովը թափել, եթէ իրենց պահանջած գումարը չտրուի անոնց: [Կը վերապրէր] անոնց հէգ ու թշուառ, պաղատագին դիմագիծը, եայլն, եայլն, եայլն:

Յունաստանի նորակազմ որբանոցներուն մէջ ալ ամէն տեսակ դժուարութեանց երկար ժամանակ կուրծք տալով, վերջապէս ալ աւելի չկրնալով տոկալ, ծանր հիւանդութեան բռնուեցաւ ու մի քանի ամիսներ անկողնի ծառայելէ վերջ ապաքինեցաւ:

Այժմ մեր մէջ տեսնելու պատիւը ունինք այս մարդասէր ու արի երիտասարդը: Ինքը Նպաստ[ամատոյց]ի կողմէ [պաշտօն ստացած] է Սուրիոյ այլեւայլ գաղութներուն մէջ չափահաս եւ ազգական ունեցող որբերը եւ որբուհիները իրենց տիրոջ յանձնելու, [անոնց] գործ հայթայթելու եւ որբերէն բաղկացած Լիկա կազմակերպելու, որպէսզի որբանոցէն վերջ ալ դուրսի այլեւայլ պայմաններու ազդեցութեան տակ իրենց լաւ յատկութիւնները չկորսնցնեն:

Այս գործին յաջողութեան [վերաբերեալ] մենք մեծ վստահութիւն ունինք իր վրայ եւ մենք անշուշտ պիտի չուզէինք տեսնել մեր որբերը մինչեւ վերջը ուրիշներէն ակնկալողներ, թոյլ, անպէտ մարդիկ: Մենք կ'ուզենք տեսնել զանոնք այնպիսի պայմաններու մէջ մեծցած որբեր եւ որբուհիներ, որպէս մեր ազգին յատուկ շինիչ, գործունեայ, ստեղծիչ ձիրքերով ու լաւ յատկութիւններով

օժտուած, ամէն կերպով անկախ ապրելու վարժուած անհատներ:
Քանի որ մեր ապագայ սերունդը կը ներկայացնեն ասոնք, սթա-
փինք, մենք մեր միջոցներով որչափ որ կարելի է զիրար օգնենք,
դադրինք ուրիշներէ մուրալէ:

ՈՐԲԱՇԽԱՐՀ

Բառեր կան, որոնք ազգերու կեանքի հոլովոյթի ընթացքին պատահած ճակատագրական դէպքերը պատկերացնելու համար կը ստեղծուին եւ իրենց ետին թագնուած երեւոյթները հարազատօրէն ցոլացնելու յատկութեամբ պատմութեան մէկ շրջանը կը ներկայացնեն:

ՈՐԲԱՇԽԱՐՀ՝ պատահաբար չընտրեցինք այս խորագիրը:

Այսօրուան թուրքերու հայրերը առաջին ընդհանուր պատերազմին առիթը գտան հայ ժողովուրդը բնաջնջելու եւ իրենց գազանային ծրագիրը իրագործելու:

Ահա այս ահաւոր երկունքէն ծնաւ նոր սերունդ մը:

Մանուկներ, մանուկներ, իրենց ծնողաց արեան մէջ մկըրտուած: Արիւնաներկ հողերու կարմիր եւ ազագուն ծաղիկներ:

Անատօլուն, յատկապէս արեւելեան նահանգներու հայաշխարհը դադրած է շնչելէ եւ անոր յաջորդած անծնող մանուկներու աշխարհը—որբաշխանի:

ԽԻՂՃԵՐԸ ԿԸ ՅՆՅՈՒԻՆ

Կատարուած անօրինակ ոճիրը պահ մը ցնցեց միլիոնաւոր մարդոց խիղճերը: 1915 Ապրիլէն սկսեալ հայ ժողովուրդը կը բնաջնջուէր: Կեդրոնական եւ հարաւ-արեւելեան Անատօլիւն հարիւր հազարաւորներ բռնի ճամբայ հանուած էին դէպի անապատներ եւ Տէր-Ջօր: 1915 Օգոստոսին, ռուսական ուժերու հեռացումով, արեւելեան նահանգներու հայաբնակ շրջաններու վերապրողները, մօտ երեք հարիւր յիսուն հազար հոգի, մեծ մասամբ կիներէ եւ մանուկներէ բաղկացած, կ'ուղղուին դէպի Կովկաս:

16 Սեպտեմբեր 1915-ին կը հիմնուէր Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութիւնը եւ հետզհետէ օգնութեան մարմիններ կը ստեղծուէին եւրոպական կարգ մը երկիրներու մէջ: Սակայն, քանի պատերազմը կը շարունակուէր, անկարելի էր օգնութեան հասնիլ:

1918 Հոկտեմբեր 30-ին Մուտրօսի դաշնագրով զինադադար կը ստորագրուէր:

Յաղթական Դաշնակիցները կը գրաւէին Պոլիսը, Սուրիան, Լիբանանը, Պաղեստինը, Իրաքը եւ Կիլիկիան: Դժբախտաբար սակայն Կիլիկիան եւ Պոլիսը շուտով կը լքուէին: Նպաստամատոյց մարմինները հետզհետէ կը թափանցէին Անատոլիւն ներս: Աւերը աներեւակայելի էր: Արդէն Խարբերդէն մինչեւ հայկական սահման ոչ մէկ վերապրող հայ մնացած էր:

Ամէնուն համար կացութիւնը այլեւս պարզ էր: Հայ ժողովուրդի ապագան հարիւր հազարաւորներու փրկութեամբն էր պայմանաւորուած, իսկ աշխատանքը կախում ունէր նիւթական եւ բարոյական լայն օժանդակութենէ:

Սկիզբը հարիւր հազար տոլար նախատեսողները, ստիպուեցան 115 միլիոն տոլար ծախսելու 1915-1930 նախկին Թուրքիոյ սահմաններէն ներս, Յունաստանի եւ Հայաստանի մէջ: Կատարուած ողբերգութիւնը իրենց քաղաքական հաշիւներուն համար շահագործել փորձողներէն դուրս կային նաեւ նիւթական նկատումներով մօտեցողներ եւ ազնիւ ու խղճահար հոգիներ, որոնք հարց կու տային թէ արդեօք այս գումարները որ կը ծախսուին աւելի լաւ չէ՞ր ըլլար եթէ յատկացուէին դահիճին ձեռքերը կապելու, որպէսզի աղէտը կանխուէր: Բայց այս արդէն ուրիշ հարց էր:

ՈՐԲԱՀԱԻԱՔ

Զինադադարէն ի վեր չորս տարիներ անցած էին: Ո՛չ Անատոլիւն խաղաղած էր, ո՛չ ալ Հայաստանը: Քէմալական շարժումը կը զօրանար, իսկ Կովկասի մէջ պահ մը հայկական կառավարութիւն հաստատուելէ ետք, որ գերմարդկային ջանքեր կը թափէր կացութիւնը դիմագրաւելու համար, խորհրդային կարգեր հաստատուած էին: Ֆրանսա կը քաշուէր Կիլիկիայէն, իսկ պարտուած Յունաստանը կը հեռանար, իր հետ տանելով մէկ միլիոնէ աւելի գաղթականութիւն: Հիմնուած բազմաթիւ որբահաւք եւ նպաստաբաշխ կայաններն ու որբանոցները իրենց գործը շարունակելու համար հարկադրուած էին հասկացողութեան գալ Անատոլիոյ տէր եղող քէմալականներուն հետ: Հայաստանի մէջ հարիւր հազարներու հասնող գաղթականութենէն զատ, Լէնինականի մէջ հաստատուած էր աշխարհի մեծագոյն որբանոցը երեսուն հազար բնակիչներով, իսկ Կարսի մէջ՝ տասը հազար: Հոս ալ աշխատանքը շարունակելու համար կարելի եղաւ համաձայնիլ Սովետ Հայաստանի ղեկավարներուն հետ: Հայաս-

տանի մէջ, պետութիւնը, ժողովուրդը եւ Նպաստամատոյց Ընկերութիւնը գործի լծուեցան : Բայց Անատոլուի մէջ որբահաւաքման գործը կապուած էր բազմաթիւ խնդիրներու հետ: Դահիճները ոչ միայն գրաւած էին անոնց նիւթական հարստութիւններն ու մշակոյթի եւ հոգեկան կեդրոնները, այլ մանաւանդ անոնցմէ ոմանց մէջ մեռցուցած էին հայեցի նկարագիր եւ ոգի: Թուրքը չէր ուզեր իր աւարը բաց թողուլ եւ ստրուկները ազատել: Սարսափահար հոգիներ չէին համարձակեր դահիճներու քովէն հեռանալու եւ անոնցմէ շատերուն հաւատացուցած էին թէ աշխարհի երեսին մէկ հատ իսկ հայ չէ մնացած: Յաղթականներու կողմէ գրաւուած շրջաններու մէջ, թուրք եւ արաբ վախցած, մարդասէրի պատմուճան հազնելով, որբանոց կը վերադարձնէին ծնողազուրկները: Երբեմն ալ իրենց թշուառութենէն եւ զուլումէն ազատուելու համար, տղաքը իրենք կ'ապաստանէին որբանոցները: Ժամանակին հոգեկան եւ մշակութային օճախներ եղող բազմաթիւ հայկական եկեղեցիներ եւ վարժարաններ ապաստան կու տային բազմահազար անտէր հայորդիներու: Ամերիկեան եւ այլ օտար հաստատութիւններ ընդհանրապէս յատկացուած էին այս նպատակին: Հետեւաբար, հետզհետէ որբանոցներ հաստատուեցան Ատանա, Մէրսին, Այնթապ, Գօնիա, Անգարա, Պուրսա, Կեսարիա, Թալաս, Պոլիս, Տիգրանակերտ, Իզմիր, Իզմիթ, Խարբերդ, Մալաթիա, Մարաշ, Մարտին, Մարզիֆան, Սամսոն, Տարսոն, Տրապիզոն եւ Ուրֆա:

1922-ի ձմեռը քէմալականները արդէն բացարձակ տէրը դարձած էին Անատոլուի:

Որբանոցները պէտք է որ թուրքիայէն դուրս հանուէին: Տասնըութ հազար հայ եւ յոյն որբեր ապաստան կը գտնէին Յունաստանի մէջ: Սուրիա, Լիբանան եւ Պաղեստին հաւաքուած հայ որբութիւնը կը հասնէր մօտաւորապէս 12000-ի:

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ

Աշխատեցանք ամփոփ կերպով պարզել այն դէպքերը եւ ստեղծուած պայմանները, որոնցմէ ծնունդ առաւ Որբաշխարհը: Շատ կարճ ակնարկ մը նետեցինք Անատոլուէն ներս եւ պարզ յիշատակութիւն մը կատարեցինք Հայաստանի մասին:

Հայաստան, Յունաստան, թուրքիա, Սուրիա, Լիբանան, Պաղեստին, Միջագետք եւ Պարսկաստան ունեցան հայորդիներէ կազմուած իրենց որբաշխարհները: Սակայն այժմ ամփոփուինք

Սուրիոյ, մանաւանդ Լիբանանի որբաշխարհէն ներս:

Անատօլոյի խորերէն գաղթականական կարաւանները ընդհանրապէս կ'ուղղուէին դէպի Սուրիա եւ Արաբիոյ անապատները, ուր կը հասնէին ցնցոտիներու մէջ, չարչարալից եւ սպառիչ ճամբորդութենէ մը յետոյ կոտորակուած որպէս վերապրող ուրուականներ: Հարիւր յիսուն հազար գաղթականներ կրցած էին վերապրիլ Տէր-Զօրի գեհէնէն եւ երկու հազար որբեր տեղաւորուած էին Հալէպի եկեղեցիներուն եւ վարժարաններուն մէջ: Սուրիոյ ընդհանուր կառավարիչ Ճէմալ Փաշան կարծես աւելի թոյլատու կը գտնուէր վերապրողներուն հանդէպ, սակայն վերջին ծայր բժախնդիր՝ որպէսզի օտարներ որեւէ ձեւով չկարենան օժանդակել անոնց: Այնպէս որ մինչ Լիբանանի մեծ շրջանները սովամահ կ'ըլլային, ամերիկեան ուտեստեղէններով եւ հագուստներով բեռնաւոր նաւ մը Պէյրութի նաւահանգիստէն ետ կը վերադարձուէր: Որբանոցներ ստեղծուած էին Սայտա, Պրումմանա, Թրիփօլի, Զուգ, Համա, Երուսաղէմ եւ մանաւանդ Անթուրա: Այս որբանոցներուն մէջ տեղացի որբերու շարքին կը գտնուէին բազմաթիւ հայ մանուկներ:

Անթուրայի որբանոցէն ներս երկու հազար հայ որբերէն միայն վեց հարիւր յիսուն հոգի մնացած էին, միւսները Ճէմալի հրահանգով թրջացուած: Անատօլոյի մէջ ալ, Սամսոն, Սեբաստիա, Կեսարիոյ մօտ Զէնճի Տէրէ եւ այլ տեղեր հաւաքուած թրջական որբանոցներէ ներս հազարաւոր հայ մանուկներ նոյն բախտին արժանացած էին:

Զօրավար Ալէնպիի բանակները յաղթականօրէն կը յառաջանային: Արարայի ճակատը ճեղքուած էր հայ կամաւորներու կողմէ: Շատ տեղեր բանակը որոշ չափով կ'օժանդակէր աղէտեալներուն: Քիչ յետոյ ֆրանսական հոգատարութիւնը կը հաստատուէր Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: 1922-1923-ին որբերու կարաւաններ Անատօլոյի հարաւարեւելեան նահանգներէն կ'ուղղուէին դէպի Հալէպ եւ անկէ ալ Լիբանան: Գօնիայի, Կեսարիոյ եւ Կիլիկիոյ շրջաններէն Մէրսին հաւաքուելով ծովու ճամբով Պէյրութ ցամաք կ'ելլէին: Անոնք Պէյրութի Քարանթինայէն մէկ-երկու օր ետք կը փոխադրուէին որբանոցներ: Այսպէսով որբանոցներ հաստատուեցան Ճիպէյլ, Նահր Իպրահիմ, Մամըլթէյն, Ճունի, Ղազիր, Զուգ, Անթիլիաս եւ Սայտա: Արդէն գոյութիւն ունէին դանիական եւ գուիցերիական ընկերութեանց որբանոցներ Սայտայի, Ղազիրի եւ Զուգի մէջ: Պէյրութի մէջ հաստատուե-

ցան չափահաս եւ աշխատաւոր երկսեռ որբերու զատ զատ ապաստանարաններ: Հալէպի Ագապա եւ Խանտէք թաղերուն մէջ հաստատուած հայկական որբանոցներն ալ Ամերիկեան Նպաստամատոյցի խնամքին յանձնուեցան: Անոնք մեծ մասամբ աշխատաւոր տղոցմէ եւ աղջիկներէ կը բաղկանային եւ հայ աշխատաւորներու մօտ դերձակութեան, կօշկակարութեան, թիթեղագործութեան, ատաղձագործութեան եւ այլ արհեստներու կը հետեւէին: Աղջիկները կը սորվէին Մարաշի եւ Այնթապի ձեռագործներ եւ դերձակութիւն: Ոմանք հիւանդապահութեան հետեւեցան եւ կամ ուսուցչութեան: Մեծերը հետզհետէ անկախ կեանքի վարժուելով ընտանիքներ կազմեցին, իսկ փոքրերը Լիբանան փոխադրուեցան:⁷⁵

ԼԻԲԱՆԱՆԻ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԸ

Մօտենանք գեղածիծաղ Լիբանանի ծովեզերքին տեղաւորւած որբաշխարհին: Սայտա եւ Պէյրութ, մանաւանդ Պէյրութէն մինչեւ Ճիպէյլ իրարմէ ոչ շատ հեռու ստեղծուած էին հայ մանուկներու բոյներ:

Ահա պատմական Ճիպէյլը: Սուրիայէն փոխադրուած որբերով 1921 Հոկտեմբերին ստեղծուած այս որբանոցին մէջ կը պատասպարուէին նաեւ 1922-ի վերջերը Անատօլուէն հասած որբերէն մաս մը: Այս հաստատութենէն ներս եկած ու անցած հայորդիներու ամբողջ թիւը կը հասներ մօտաւորապէս 9000-ի: Գոցուեցաւ 1925 Յուլիսին:

Նահր Իպրահիմի գետակին մօտ, 1923-ին հաստատուած որբանոցին մէջ կը պատասպարուէին մօտ 1200 հայորդիներ: Դժբախտաբար, անոնցմէ ուր հոգի մալարիայի զոհ տալէ ետք, նոյն տարին հաստատութիւնը կը գոցուէր եւ որբերը Ճիպէյլ եւ Անթիլիաս կը փոխադրուէին:

Մամըլթէյնի նախկին բութարանի շէնքին մէջ, 1921-ին, գլխաւորաբար Ուրֆայէն եւ Խարբերդէն հասած որբերով կազմուած որբանոցը գոցուեցաւ 1923-ին: Այս որբերէն մաս մը փոխադրուեցաւ Ճիպէյլ, իսկ մնացածը՝ 1922-ի վերջերը Անատօլուէն հասած չափահաս որբերով կազմուած Մամըլթէյնի արհեստանոց-որբանոցը:

Մամըլթէյնի մօտ բլրակի մը վրայ, Ղազիրի մէջ 1919-ին տեղացի որբուհիներու համար ստեղծուած որբանոցը կը փոխադրուէր Սայտա եւ հոս կը տեղաւորուէին 1922-ին Անատօլուէն

հասած հայ որբուհիները: Հոն կար նաեւ զուիցերիական ընկերութեան հսկողութեան տակ գտնուող կոյրերու հաստատութիւնը եւ Արփիական որբանոցը: Աչազուրկներու հաստատութեան իրենց աջակցութիւնը բերած էին նաեւ ֆրանսացիներ: Կոյրերու այս բոյնը մինչեւ այսօր ալ կը շարունակուի: Ղազիրի մէջ պատասպարուած հայ որբուհիներու թիւը մօտաւորապէս կը հասնէր 1000-ի:

Ծովեզերեայ Ճիւնիի մէջ, 1922-ին գլխաւորաբար Գօնիայէն եւ Կեսարիայէն հասած որբուհիներով հաստատուած որբանոցը 1925-ին կը փակէր իր դռները: Հոս հաստատուած էր նաեւ Համայէն փոխադրուած Այնթապցիներու հայկական որբանոցը: Ճունիի որբուհիներուն թիւը կը հասնէր մօտաւորապէս 500-ի:

Դանիական ընկերութեան կողմէ հոգացուող եւ շատ փոքրիկներու յատկացուած այս բոյնը հաստատուած էր բլուրի մը վրայ, Զուգի մէջ: 1923-ին ան Սայտայէն փոխադրուեցաւ եւ կոչուեցաւ Թոչնոց Բոյն: 1928-ին այս հաստատութիւնը փոխադրուեցաւ Ճիպէյլի նախկին որբանոցը ու մինչեւ այսօր կը շարունակուի ազնիւ եւ հայախօս տնօրէնուիի մը հսկողութեան տակ: Թոչնոց Բոյնի թոչնիկներուն թիւը միշտ փոփոխութեան ենթարկուած է:

Մանչերու յատկացուած Անթիլիասի որբանոցը հիմնուած էր 1922-ի վերջերը եւ ընդհանրապէս լեցուած էր Անատօլուէն բերուած որբերով: Ան աստորալիական ընկերութեան աջակցութիւնը կը վայելէր: Փակուեցաւ 1929-ին, որմէ յետոյ հոն հաստատուեցաւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոսարանը: Հոս ապաստանած որբերու թիւը կարելի է 2000-է անելի նկատել:

1922-էն սկսեալ Պէյրութի մէջ հաստատուած էին արհեստի հետեւող որբ եւ որբուհիներու ապաստանարաններ Նպաստամատոյցի հսկողութեան տակ: Կիլիկիայէն փոխադրուած էր Հ.Բ.Ը. Միութեան Քէլէկեան որբանոցը: Կային նաեւ անգլիական որբանոցը եւ Պուրճ Համուտի մօտ 1923-ին հիմնուած եւ Անթիլիասէն փոխադրուած Կաթողիկէ Ս. Գրիգոր որբանոցը:

Սայտայի մէջ, բլրակի մը վրայ, 1918-ին տեղացի որբուհիներու համար ստեղծուած որբանոցը 1922-ին ապաստան կուտար նաեւ հայ որբուհիներու, քանի որ տեղացիներու թիւը զգալիօրէն նուազած էր: Նոյնպէս Սայտայի մէջ ծովեզերեայ որբանոց մը կը հաստատուէր 1922-ին հասած հայ որբուհիներու համար:

Այս որբանոցները փակուեցան 1925-ին: Հոս հաստատուած

որբուհիներու թիւը կը կարելի է 2000-է աւելի նկատել:

Յիշենք նաեւ Պաղեստինի մէջ Նազարէթի որբանոց-արհեստանոցը, որ հաստատուած էր 1923-ին եւ գոցուած՝ 1927ին:

ՈՐԲԱՆՈՅՆԵՐԷ ՆԵՐՍ

Մտնենք պզտիկ որբաշխարհներէն ներս: Հաստատուած կարգն ու սարքը եւ սովորութիւնները ընդհանրապէս միօրինակ էին ամէն տեղ: Աշխատանքի, հանգիստի, կերակուրի, մաքրութեան եւ քունի մասնաւոր ժամեր յատկացուած էին: Այս խոշոր ընտանիքին իւրաքանչիւր անդամը ունէր իրեն վիճակուած պարտականութիւնը եւ կը կատարէր զայն: Զանգակին ծայնը կը յիշեցնէր բոլորին դերերը: Նոր հասած որբը, նախ երկչոտ եւ օտար, հետզհետէ կը վարժուէր եւ կը բարեկամանար իր բախտակիցներուն հետ: Ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու վիճակուած դերը ո՛չ միայն կրթական էր եւ մշակութային, այլ անոնք պէտք է ստանձնէին նաեւ ծնողներու պարտականութիւնը այս անձնող բազմութիւններուն համար:

Ծիպէլլի եւ Անթիլիասի շէնքերը Նպաստամատոյցի կողմէ գնուած ըլլալով, հարկ էր նորոգութիւններ կատարել եւ խճուղիներ բանալ: Փոքրիկ աշխատաւորները մեծ եռանդով կը մասնակցէին այս աշխատանքներուն: Կարգապահութեան եւ նկարագրի մաքրութեան հոգ կը տարուէր: Փոխադարձ օգնութեան եւ ծառայութեան ոգին զարգացնելու եւ ձեռներէցութեան վարժեցնելու համար աշխատանք կը տարուէր:

Թշուառութեան եւ սարսափի մէջ ապրած եւ խաթարուած նկարագիրներն ու ոճրագործութեանց ականատես այս խեղճերը դաստիարակել դիւրին գործ չէր: Անոնց մէջ կային նաեւ կարգ մը յոռի ունակութիւններ: Սակայն հայորդիները ընդհանրապէս իրենց բնածին ուշիմութեան չափով կ'իւրացնէին այն ինչ որ բարի եւ լաւ էր, կը վարժուէին նոր պայմաններուն:

ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Վիճակագրութեանց համաձայն, վեց հարիւր ութսուն հոգիի վրայ չորս հարիւր երեսուն հոգի հայերէն երբեք չէին գիտեր, մնացածներն ալ հայերէնի քիչ ծանօթ: Բացառութիւն կը կազմէին հայախօս շրջաններէ եկած պզտիկ թիւով մանուկներ: Ընդհանրապէս երախաներ էին անոնք: Կային նաեւ արաբախօսներ եւ

քրտախօսներ: հետեւաբար ուսուցիչներուն առաջին պարտականութիւնն էր հայերէնը ընդհանրացնել: Քաղաքավար ըլլալու եւ սկսուած դասարաններուն հետեւելու վարժութիւնը կը կարօտէր ուրիշ աշխատանքներու: Թափուած ջանքերը լաւ արդիւնքներ կու տային: Որբաշխարհի բնակիչները մեծ եռանդով կ'իրացնէին իրենց մայրենի լեզուն: Բոլոր որբանոցներու մէջ, մանաւանդ Ճիպէյլ, Անթիլիաս եւ Ղազիր, կանոնաւոր դասարաններ կազմուած էին եւ հայերէնէ զատ կը դասաւանդուէին անգլիերէն, ֆրանսերէն, արաբերէն եւ գիտական դասեր: Կը կազմակերպուէին լսարաններ, ներկայացումներ, զանազան տօներու առթիւ հանդէսներ, եկեղեցական հաւաքոյթներ, ատենամարզանք: Գոյութիւն ունէին նաեւ գրադարաններ: Կարգ մը որբանոցներէ ներս, օրինակ Ճիպէյլ եւ Անթիլիաս, ուսման մակարդակը այս օրուան մեր Ազգային Վարժարաններու վեց կամ եօթներորդ դասարաններուն կը համապատասխանէր: Աշակերտական խմորատիպ պարբերաթերթեր լոյս կը տեսնէին, Ճիպէյլի մէջ՝ Տուն, Նահր Իպրահիմի մէջ, մէկ թիւ միայն, Նոր Դար, Նազարէթի մէջ՝ Պատանեկան Շարժում: Տասնեակ մը խոստմնալից տղաք եւ մի քանի աղջիկներ Ամերիկեան համալսարան հետեւեցան եւ պատուով լրացուցին իրենց ուսումը:

Ճիպէյլի ու Անթիլիասի որբանոցները եւ Ղազիրի կոյրերու ապաստանարանը ունէին իրենց նուագախումբերը, որոնք ոչ միայն Որբաշխարհէն ներս, այլ դուրսն ալ իրենց մասնակցութիւնը կը բերէին զանազան ձեռնարկներու: Նուագախումբին մասնակցող տղաքը յետագային լիբանանեան զինուորական նուագախումբի կորիզը կազմեցին: Երգչախումբեր կազմուած էին աղջկանց կողմէ:

Ուսուցիչներու աւագ պարտականութիւնն էր նաեւ իրենց խնամքին յանձնուած հայորդիներուն սրտին մէջ ազգային ոգին ներմուծել, մեր պատմութիւնը ծանօթացնել եւ զանոնք մեծցնել հայեցի դաստիարակութեամբ եւ ոգիով: Ամէն տեղ այս ուղղութեամբ քիչ թէ շատ աշխատանք կը տարուէր. յատկապէս Ճիպէյլի որբանոցէն ներս մի քանի ուսուցիչներու կողմէ կատարուած աշխատանքը աչքի կը զարնէր:

Դժբախտաբար սակայն ամերիկացի տնօրէններէն ոմանք դժուար կը հասկնային մեզի համար ստեղծուած պայմաններուն հետեւանք եղող այս անհրաժեշտութիւնը: Իսկ կարգ մը հայանուն անձեր, ապազգային միջավայրերու թոյնով սնած, թերեւս ալ

անգիտակցաբար, հաշտ աչքով չէին դիտեր եւ ամերիկացի տնօրէններու մօտ կարգ մը երեւոյթներ եւ ազգային զգացումներ կը ներկայացնէին իբրեւ կուսակցական կամ քաղաքական անբաղձալի գործունէութիւն:

Մարմնակրթանքը յատուկ տեղ գրաւած էր կրթական ծրագրին մէջ: Մարզիչներու հսկողութեամբ կատարուած օրական մարզանքներէն դուրս, կը կազմակերպուէին ֆութպօլի խումբեր, խաղեր եւ մարզահանդէսներ ու միջ-որբանոցային մրցումներ: Սկաուտական շարժումը ուշադրութեան առարկայ էր: Տեղի կ'ունենային նաեւ ամառնային պտոյտներ, ծովեզերեայ լոգանք եւ լողալու մրցումներ:

Օտար բարերարներ կարգ մը ուշիմ տղոց բարձրագոյն ուսման օժանդակել կ'ուզէին: Այս առթիւ յիշենք պզտիկ դրուագ մը, որ Աւստրալիական Օգնութեան Մարմնի ներկայացուցիչին կողմէ պատմուեցաւ: Այս վերջինը Քանատա այցելութեան առթիւ Ճօրճթաունի հայ որբերուն մէջէն կ'ուզէր մէկը ընտրել բարերարի մը յանձնարարութեամբ, իրեն կը ներկայացնեն Վարդանը, նպատակը կը բացատրեն, հայորդին շատ ուրախ եւ խանդավառ էր, սակայնէ կար պայմանը. բարերար տիկնոջ հանգուցեալ ամուսինին անունով Վարդանը պէտք է որ Բիթըր կոչուէր: Վարդան կը գունատի եւ առանց պատասխանի կը հեռանայ: Յաջորդ օր ան ներկայանալով, հետեւեալ ձեւով կ'արտայայտուի. «Ծնողքս, քոյրս եւ ես Խարբերդի մօտակայ գիւղ մը կը բնակէինք: Օր մը քիւրտերը յանկարծ խուժելով քոյրս առեւանգեցին, մեր տունը կողոպտեցին եւ ես անկին մը լքուած մեր գիւղի եկեղեցիին հրկիզման ականատես եղայ: Հիմա հոս եմ, զիս իմ ընտանիքիս եւ հայրենի աւանդութիւններուս միացնող միակ կապը Վարդան անունս է, որ իմ գիւղիս հրկիզուած եկեղեցիին մէջ մկրտութեանս պահուն տրուեր է ինձի: Հիմա դուք կ'ուզէք այդ կապն ալ խզել. Ձեր պայմանը չեմ կրնար ընդունիլ»: Աւելորդ է ըսել թէ ներկաները ամօթահար մնացին: Բայց ղիւր են Քանատացի Վարդանները եւ միւս հայորդիները այսօր: Ժամանակն ու միջավայրը կատարած են իրենց դերերը, իսկ պատասխանատունները: Բայց անցնինք:

Հայ որբերը Միջին Արեւելքի ազգերուն պատկանող իրենց բախտակիցներուն հետ բաղդատմամբ անելի ուշիմ եւ ընդունակ էին: «Նիւ Եօքը Թայմզ»ի խմբագիր եւ ծանօթ մանկավարժ Ժան Ֆինլի իր քննական պտոյտէն վերադարձին իր թերթին մէջ կը

գրեր. «Յատկապէս հայ տղաքը շատ ընդունակ եւ աշխատասէր են, անոնք վաղուան խոստմնալից սերունդը կը ներկայացնեն»:⁷⁶

Կրթական Հարցին յատկացուած այս հակիրճ տողերը կը փակենք ուրիշ մէկ յուզիչ դրուագով: 29 Մարտ 1925-ին, Երջանկայիշատակ Սահակ Բ. Կաթողիկոս Անթիլիասի գետակին մէջ քառասուն եւ երեք որբերու մկրտութիւնը կը կատարէր եւ այս առթիւ հետեւեալ ձեւով արտայայտուեցաւ. «Տասնհինգ դարերէ ի վեր մեր պատմութեան մէջ նման հանդիսութիւն մը տեղի չէ ունեցած: Ասիկա Գրիգոր Լուսաւորչի կողմէ Արածանիի մէջ կատարուած մկրտութեան կրկնութիւնն է»:⁷⁷

ԱՐՇԵՍԱՆՈՅՆԵՐ

Կեանքի մէջ յաջողելու եւ ինքնաբաւ ըլլալու համար անհրաժեշտ էր արհեստ ունենալ: Որբանոցէն ներս, վարպետներու հսկողութեան տակ որբ եւ որբուհիներ կ'աշխատէին եւ արտադրութիւնը որբանոցի պէտքերուն բաւարարելէ յետոյ նաեւ շուկայ կը հանուէր:

Մեր տղոց համար 1922-ին Մամրլթէյնի մէջ բացուած էին արհեստանոցներ, ուր կ'աշխատէին 12-էն վեր տարիք ունեցող տղաք: Կը սորվէին դերձակութիւն, կօշկակարութիւն, ատաղձագործութիւն, հացագործութիւն, երկաթագործութիւն, պարտիզպանութիւն, որմնադրութիւն, եւն.: Հետզհետէ միւս որբանոցները, յատկապէս Անթիլիասն ալ կ'ունենար իր արհեստանոցները: Պէյրութ հաստատուած արհեստաւոր տղոց եւ աղջկանց ապաստանարաններու բնակիչներուն մէջ կային հետեւողներ նաեւ էլեկտրականութեան, ոսկերչութեան, լուսանկարչութեան, գծագրութեան, գուլպայագործութեան, գորգագործութեան, ձեռագործի, խոհարարութեան եւ կարուձելի: Կոյրերը կը հիւսէին կողովներ, աթոռներ, խոզանակներ, վրձիններ եւ զանազան առարկաներ: Արտադրուած գորգեր, նուրբ ձեռագործեր, կարասիներ եւ այլ առարկաներ Դամասկոս եւ այլուր կազմակերպուած ցուցահանդէսներու մէջ իրենց արժանի տեղը գրաւած էին: Յատկապէս Ղազիրի գորգի⁷⁸ գործարանին կատարած դերը գնահատելի էր: Արտադրուած գործերը ընդհանրապէս յաջող եւ շուկայի վրայ փնտռուած էին: Մեծ մաս մը Զուիցերիոյ եւ Ամերիկայի շուկաները կ'արտածուէին: Յիշենք Ղազիրի որբուհիներուն կողմէ հիւսուած Սպահանի տեսակէն այն գեղեցիկ կտորը, որ Միացեալ Նահանգներու նախագահ Քալվին Քուլիճին նուիրուեցաւ եւ ժամանակին

մեծապես գնահատուեցաւ Ամերիկացի ժողովուրդին կողմէ: Չորս որբուհիներ տասը ամիս աշխատած էին անոր վրայ եւ կը պարունակէր չորս միլիոն չորս հարիւր հազար հանգոյց:

ԲԺՇԿԱ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Շատ բնական էր որ աղէտահար մանուկները վարակուած ըլլային զանազան հիւանդութիւններով: Բորոտութիւնը ընդհանուր էր գրեթէ: Աչքի ցաւը, յատկապէս թրաքօման, հարիւրին եօթանասուն համեմատութեան կը հասնէր: Հարիւրի չափ երկսեռ մանուկներ, որոնցմէ 67 բոլորովին կոյր, մնացածներն ալ մասամբ կոյր, հաստատուած էին Ղազիր: Մալարիան Նահր Իպրահիմի մէջ աւեր կը գործէր:⁷⁹ Թուրք կամ արաբ ընտանիքներու քովէն եկածներու մէջ կային ֆրանկախտաւորներ եւ կասկածելիներ, որոնք հարիւրին հինգ համեմատութիւնը կը կազմէին: Կային զանազան տեսակի հիւծախտաւորներ: Այս հիւանդութեանց դէմ պայքար կը մղուէր ամերիկացի բժշկապետին եւ հայ բժիշկ ու հիւանդապահուիչներու կողմէ: Իւրաքանչիւր որբանոցի կից հաստատուած էր դարմանատուն մը: Տարափոխիկ հիւանդները կը մեկուսացուէին, իսկ հիւծախտաւորները Համմանա կամ Տահր էլ Պաշէք կը դրկուէին:

Պէյրութի մէջ հաստատուած էր 70-80 անկողիննոց հիւանդանոց մը, ուր կը կատարուէին գործողութիւններ: Ղազիրի հայ աչազուրկները մնայուն հայ բժիշկի մը հսկողութեան տակ կը գտնուէին: Առողջապահութեան հսկող բժիշկները ոչ միայն կը դարմանէին, այլեւ կը սորվեցնէին կանխարգելիչ միջոցներ եւ երբեմն ալ պարզ լեզուով առողջապահական դասախօսութիւններ տեղի կ'ունենային:

Պէտք է յիշել բերնի առողջապահութեան համար կատարուած աշխատանքը: Վիճակագրութեանց համաձայն, 13.500 բերաններու քննութիւններ կատարուած, 8000 բերաններ դարմանուած, 5000 բերաններու ակոսներ լեցուած կամ մաքրուած եւ մօտ 700 լնտախտներ դարմանուած են: Բերան լուալու եւ մաքրելու սովորութիւնը ընդհանրացնելու համար որբանոցային մրցումներ տեղի ունեցած եւ մրցանակներ բաժնուած են: Բերնի առողջապահութեան գործը չորս տարուան ընթացքին 60 առ հարիւր բարելաւում արձանագրած է:⁸⁰

ԴԷՊԻ ԿԵԱՆՔԻ ՊԱՅՔԱՐ

Ընտանիքներն են որ կը կազմեն ժողովուրդը: Որբաշխարհի բազմահազար մանուկները կղզիացած որբանոցներէ ներս ոչ ընտանիք էին եւ ոչ ալ հասարակութեան մէկ մասը: Անհրաժեշտ էր անոնց մէջ ձեռներէցութեան ոգին մշակել եւ նիւթապէս ալ ինքնաբաւ դարձնել, քանի որ ժողովուրդի մէկ անբաժան մասը ըլլալու սահմանուած էին: Ուրեմն կեանքի պայքարին վարժեցնելու գործը սկսաւ: Ազգական ունեցողները՝ անոնց մօտ, արհեստաւորները՝ գործի, որբուհիներէն մաս մը՝ տեղացի եւ հայ ընտանիքներու մօտ որպէս սպասուի տեղաւորուեցան: Հազար հոգիէ աւելի մասնաւոր քննութենէ անցած քաջառողջ տղաք Ֆրանսա դրկուեցան, խումբ մըն ալ՝ Եգիպտոս: Հետզհետէ որբանոցները կը պարպուէին եւ իւրաքանչիւր որբ կամ որբուհի որ դուրս կը հանուէր, կ'ունենար իրեն յատուկ թղթածրարը գրասենեակին մէջ, ուր իրենց այցելող պաշտօնեաները համապատասխան արձանագրութիւն մը կը պահէին: Արհեստաւորները, մինչեւ որ ինքնաբաւ դառնային, նիւթական որոշ օժանդակութիւն կը ստանային: Օտար հիւրընկալ երկիրներու մէջ անփորձ, երկսեռ մանուկները կեանքի պայքարին վարժեցնել դիւրին գործ չէր: Մանաւանդ հսկող, ամերիկացիներէն ոմանք, որքան ալ անկեղծ, բաւարար չափով ծանօթ չէին մեզի համար ստեղծուած մասնայատուկ պայմաններուն եւ բնականաբար սխալներ գործուեցան: Անփորձ սպասուի աղջնակներու եւ արհեստաւոր տղոց մէջ գայթակղութիւններ պատահեցան, որոնք անծանօթ էին զիրենք շրջապատող պայմաններուն: Օտար ընտանիքներէ ներս տեղաւորուած աղջնակներուն պարագան ընդհանրապէս մտահոգիչ էր: Հեռու իրենց ազգակիցներու ներկայութենէն եւ շունչէն, դատապարտուած էին ուշ կամ կանուխ հայութեան համար կորուստ մը ըլլալու: Ֆրանսա գացող տղոց պարագան այլապէս ողբերգական էր: Յաճախ իրարմէ հեռու, երկրի բարքերուն եւ լեզուին անծանօթ տղաք, տեղաւորուեցան հեռաւոր գիւղերու եւ ագարակներու մէջ: Իրենց վրայ հսկող պատասխանատու մարդիկ թէեւ մեծ ջանքեր կը թափէին օգտակար ըլլալու համար, սակայն վերջապէս անոնց կորուստը հայութեան համար անխուսափելի էր: Ֆրանսացի գործատէրերը զիրենք սիրաշահելու համար մեծ ջանք կը թափէին: Վերջապէս մաս մը տղաք քաղաքներ ամփոփուեցան: Ժամանակին մեկնող տղոցմէ Ե. Կ.-էն նամակ մը ստացայ: Ան իր ֆրանսացի գործա-

տերէն գոհ ըլլալը իմացնելէ յետոյ, անոր աղջկան հետ ամուսնանալու համար իմ կարծիքս կը հարցնէր: Տարիներ անցած են այսօր, իմ կրնայ ըսել թէ այս կայտառ եւ եռանդուն հայորդիներէն քանի՞ հատը հայու ոգի եւ անուն կը կրեն: Բարեբախտաբար, պատկերի սեւ մասը, բաղդատմամբ լուսաւորին եւ պայծառին, հազիւ տեսանելի ըլլալու չափ փոքր է: Անոնք իրենց ընդգրկած զանազան ասպարէզներուն մէջ ոչ միայն յաջողեցան, այլ նաեւ ղեկավար դերեր ստանձնեցին, իրական հայեր դառնալով:

Հոս արձանագրենք 11 տարեկան հայուիի մը պարագան, որ Քէսապի շրջանը հայ ընտանիքներէն մէկուն մօտ հոգեզաւակ դրուած էր: Այցելութեան մը ընթացքին երբ անոր կը հանդիպինք, ոտքը բոսիկ, ձեռքը գաւազան եւ միւս ձեռքն ալ ջուրի կուժը, առջեւ ձգած մի քանի այծեր, այգիէն կը վերադառնար: Մեր հարցումին թէ արդեօք որբանոց վերադառնալ չէ՞ր ուզեր, անվարան պատասխանեց. Ոչ: Ինչո՞ւ, ըսինք. որբանոցը Ամերիկացիներուն կը պատկանի եւ օր մը զիս դուրս կը հանեն, իսկ այծերը եւ այգին ինձի եւ իմ հայ ծնողներուս կը պատկանին, պատասխանեց ան:

ՈՐԲԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ⁸¹

Պարբերաբար որբանոցները ձգելով կեանքի պայքարը նետուող ծնողագուրկները իրենց առաջին քայլափոխին ստիպուած էին զանազան դժուարութիւններ դիմագրաւել: Պէտք ունէին տան մը, ուր անոնք կրնային հաւաքուիլ եւ հետզհետէ որբանոցներէն դուրս եկող բախտակիցներն ալ իրենց միացնել: Դուրսի ապականած վայրերէն հեռու իրենց ժամանակը օգտակար կերպով գործածելու համար ժամադրավայրի մը եւ իրենց ընկերային եւ հասարակական փափաքներուն գոհացում տուող միջավայրի մը պէտք ունէին: Շարժումը ծնունդ առաւ 1924-ի ամառը, նախ որբանոցներու մէջ եւ յետոյ դուրսը: Նկատի առնելով տեղացի որբերու գոյութիւնը, նախ միջազգային եւ շատ կարճ ժամանակ յետոյ զուտ հայկական դիմագիծ ստացաւ այս միութիւնը եւ կոչուեցաւ *Նիր Իսթ Լիկ*: Բառը հայացնել եւ բուն նպատակը ցոլացնող իմաստ մը հազցնել դժուար էր, հետեւաբար ան կոչուեցաւ Մերձաւոր Արեւելքի Որբերու Միութիւն, Մերձաւոր Արեւելքի Որբերու Դաշնակցութիւն, Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութիւն եւ Որբերու Ընդհանուր Միութիւն:

1925-ին ծրագիր-կանոնագիր մշակուեցաւ: Պէյրութի, Հալէպի,

Զահլէի եւ Դամասկոսի մէջ խորհրդատու մարմիններ ստեղծուեցան: Ընդհանրապէս երեք յարանուանութեանց պետերը եւ յայտնի ազգայիններ կը մասնակցէին անոր: Պարտականութիւնն էր որբանոցներէ դուրս կազմակերպութեան վրայ տեսակ մը ազգային հովանաւորութիւն կատարել: Այս մարմնի նիստերուն կը մասնակցէին ընդհանուր վարիչ քարտուղարը, որ կը մնար Պէյրութ եւ տեղական մասնաճիւղերու քարտուղարները, իւրաքանչիւրը իր շրջանին մէջ: 1926-ի սկիզբը ան ունեցաւ իրեն յատուկ ակումբները Պէյրութի եւ Հալէպի մէջ, իսկ Զահլէի, Իսկէնտէրունի եւ այլ վայրերու աշխատաւոր տղոց ապաստանարանները նոյն նպատակին ալ կը ծառայէին:

Անդամներու ընդհանուր ժողովը կ'ընտրէր իր վարչութիւնը, որմէ կը բխէին ընդհանրապէս յանձնախումբերը:

1- Ծառայութեան, որուն պարտականութիւնն էր հետաքրքրուիլ անգործ, հիւանդ կամ որեւէ կերպով դժուարութեան մը մէջ եղող բախտակիցներով:

2- Մարմնակրթական, որ կը կազմակերպէր դաշտահանդէսներ, ֆութպոլի եւ սկաուտական խումբեր:

3- Մշակութային, որուն պարտականութիւնն էր հանդէսներ, լսարաններ, ներկայացում, գրադարան, ընթերցասրահ, նուագախումբ եւ գիշերային դասընթացքներ կազմակերպել:

1926-ին որպէս վարիչ քարտուղար Ամերիկայէն կու գար Թալասի, Հալէպի, Յունաստանի եւ Պէյրութի որբաշխարհին ծանօթ Ամերիկացի Հանրի Մըրֆին, համակրելի եւ եռանդուն երիտասարդ մը: Անոր լայն իրաւասութիւններ տրուած էին եւ մասնաւոր պիտօճէ մը յատկացուած: Որբանոցներէ ներս, Ճիպէյլ, Անթիլիաս, Ղազիր, Սայտա, Նազարէթ եւ Հալէպ, իսկ դուրսը, Պէյրութ, Հալէպ, Դամասկոս, Զահլէ, Իսկէնտէրուն մասնաճիւղեր հաստատուեցան: Փոքր մասնաճիւղեր՝ Ռայաք, Ճիւնի, Ճիպէյլ, Անթիլիաս, Հոմա, Հայֆա, Նազարէթ, Պիքֆայա, Պէյթ Շէպապ եւ այլ վայրեր: Անհատ անդամներ՝ գրեթէ ամէն տեղ արտասահման՝ Ֆրանսա, Եգիպտոս, Պաղեստին, Հարաւային Ամերիկա եւայլն: Կազմակերպութիւնը հետզհետէ կենսունակ կը դառնար եւ կապ կը պահէր բազմաթիւ որբերու հետ:

Շարժումը վարակիչ էր Ֆրանսայի մէջ. կը հիմնուէր Զափահաս Որբերու Միութիւնը, Առաջինը 1927-ին եւ հետզհետէ 1928-1929 եւ վերջինը 1930-ին Պատգամաւորական ժողովներ տեղի ունեցան Պէյրութի մէջ: Կը մասնակցէին Լիբանանի, Սուրիոյ եւ

Պաղեստինի մասնաճիւղերէն ներկայացուցիչներ:

Ստեղծուեցաւ կեդրոնական մարմին մը, բաղկացած ընդհանուր վարիչ քարտուղարէ, խորհրդատու մարմնին ներկայացուցիչներէն եւ Պատգամաւորական Ժողովին կողմէ ընտրուած երեք որբերէ: Այս մարմնին պարտականութիւնն էր Պատգամաւորական Ժողովներ կազմակերպել, ան[ոնցմէ] բխող որոշումներուն գործադրութեան հսկել եւ Նպաստամատոյցը իր օժանդակութիւնը դադրեցուցած ատեն գործը կարենալ շարունակելու համար միջոցներ խորհիլ:

Մասնաւորապէս Պէյրութի եւ Հալէպի ակումբներէն ներս մինչեւ ուշ գիշեր ամէն օր եռուզեռ կը տիրէր: Գիշերային դասընթացքներ, լսարան, գրադարան, նուագախումբի եւ այլ փորձեր ու ժողովներ անպակաս էին:

1931-ի սկիզբները Նպաստամատոյցը իր օժանդակութիւնը կը դադրեցնէր եւ այս գեղեցիկ շարժումը Կիլիկիոյ Կաթողիկոսարանի հովանաւորութեան կը յանձնուէր Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն անուան տակ:

«ՈՐԲԱՇԽԱՐՀԻ ԱՍՏՂ»

Զգալի էր մամուլի մը անհրաժեշտութիւնը, որ պիտի ըլլար Որբերու Ընդհանուր Միութեան հետապնդած նպատակներուն եւ գործունէութեան հայելին եւ կապը ծնողազուրկ հայորդիներու միջեւ: Ժամադրավայրը՝ դողդոջ քայլերով հայ գրի եւ խօսքի մեծ տաճարէն ներս մտնել փորձող վերածնած մանուկներու: Վերջապէս միջոց մը, ուրկէ կարենային եկեղեցական թէ աշխարհական ղեկավարներ ուղղակի խօսիլ եւ խրախուսել այդ հայորդիները, որոնք ցեղին տառապանքն ու կեանքի պայքարին ծանր բեռը շալկած էին իրենց ազագուն ուսերուն վրայ:

Հետեւաբար, երբ 1924 Հոկտեմբերին «Պայքար Կենաց» անուն (մէկ թիւ միայն) առաջին պարբերաթերթը լոյս կը տեսնէր Հալէպի մէջ,⁸² Պէյրութի մէջ ալ «Աստղ» անուն թերթիկներ կը հրատարակուէին: Վերջապէս 1925 Մարտին լոյս կը տեսնէր «Որբաշխարհի Աստղ» թափանցիկ մակագրութիւնը կրող ամսաթերթը, որ կանոնաւորապէս շարունակուեցաւ մինչեւ 1930-ի վերջաւորութիւնը: Պէյրութի մէջ լոյս կը տեսնէր «Ովասիս»ը, իսկ Ֆրանսայի մէջ «Երկունք»՝ օրգան Զափահաս Որբերու Միութեան: Յունաստանի մէջ լոյս տեսաւ խմորատիպ «Աստղ», իսկ Քանաւատայի մէջ «Արարատ»ը: «Որբաշխարհի Աստղ»ը առաջին

ինը թիւերուն մէջ 2-3 էջ յատկացուցած էր արաբերէնի: «Որբաշխարհի Աստղ»ը հանդիսացաւ յատկապէս Սուրիոյ եւ Լիբանանի հայ որբերուն աստղը եւ աշխատեցաւ ցոլացնել անոնց ընկերային կեանքին ու հոգեկան ապրումներուն պատկերը: Մօտաւորապէս եօթանասուն թիւերու մէջ տեղ գրաւած էին մօտ երեք հարիւր յիսուն գրութիւններ նոյնինքն որբերու կողմէ գրուած: Հարիւր քսան եւ հինգ գրուածքներ բարձր դասու եկեղեցականութենէ եւ այլ ազգայիններէ: Յօդուածներ ունէին Սահակ Բ. Հայրապետը, Բաբգէն Կաթողիկոսը, Դուրեան, Գուշակեան եւ Կարոյեան սրբազանները ու Արտաւազդ եւ Եփրեմ վարդապետները: Թերթը ունէր իր առանձին բաժինը զանազան մասնաճիւղերու գործունէութեանց յատկացուած: Կը հրատարակուէին նաեւ բժշկական յօդուածներ եւ գողտրիկ կտորներ Խրիմեան Հայրիկէ, Սիամանթոյէ, Վարուժանէ եւ ուրիշներէ:

Հայ որբաշխարհի հաւաքական ձգտումներուն ու հոգեկան ապրումներուն անկեղծ արտայայտիչն էր ան եւ հայ մամուլի կողմէ քաջալերուած: Բազմաթիւ հայ թերթեր կը [կատարէին փոխանակում] անոր հետ:

«Որբաշխարհի Աստղ»ին միջոցաւ տարածուող շունչը կարգ մը Ամերիկացիներու եւ հայանուն անհատներու հաճելի չէր եւ երբեմն գաղտնի բայց կծու քննադատութեանց կ'ենթարկուէր ան: Ան վրէժխնդրութեան ոգի կը սերմանէր, ինչ որ հակառակ էր կրօնքին: Ազգայնականութիւն կը քարոզէր, ինչ որ քաղաքական եւ կուսակցական քարոզ կը նկատուէր եւ հակառակ էր Միութեան սկզբունքներուն:

Վարիչ քարտուղար Հանրի Մըրֆին, որ տեղեակ էր անոնց բնոյթին, հետեւեալը պատասխանեց.

«Ծնողազուրկներուն կարգ մը բաներ յիշեցնել վրէժխնդրութիւն սերմանել չէ, որովհետեւ անբնական է անոնց մոռցնել տալ այն ինչ որ տեղի ունեցած է: Եթէ անոնց սրտին մէջ վրէժխնդրութիւն տեղ գտած է, պատասխանատուները զանոնք որբացնողներն են: Գալով ազգայնականութեան, անոնք ազգի մը զաւակներն են եւ յաջորդ սերունդը կը կազմեն, հետեւաբար իրենց պատմութեան, աւանդութիւններուն եւ ազգային իղձերուն ծանօթացնել ո'չ կուսակցական եւ ո'չ ալ քաղաքական նպատակ կը հետապնդէ, այլ իրենց անժխտելի իրաւունքը եւ մեր ալ պարտականութիւնը [կը կազմէ]»:

ԱՅՍՕՐ

Հեքեաթ չէ որ պատմեցի: Լիբանանի եւ Սուրիոյ ազատ եւ հիւրընկալ երկնքին տակ Որբաշխարհը գոյութիւն չունի այսօր: Բայց կան նախկին որբաշխարհիցիներ եւ հայ իրականութեան մէջ կարեւոր դեր մը վերապահուած է անոնց: Ճակատագրի ինչ հեգնանք: Մտէք հայ կեանքէն ներս, հոն պիտի հանդիպիք բազմաթիւ առեւտրականներու, արուեստագէտներու եւ արհեստավարներու, կրթական մշակներու, եկեղեցականներու, բժիշկներու, երկրաշափներու, կուսակցական եւ ազգային ղեկավարներու: Առանց որբաշխարհին հայ իրականութիւնը աւեր է եւ ամուլ: Որբաշխարհը գոյութիւն չունի, բայց կայ եւ գոյութիւն ունի որբաշխարհիցիներու ժառանգած կտակը՝ կտակը մէկ միլիոնին:

Որբաշխարհը գոյութիւն չունի, բայց այս հակիրճ տողերով, «Ազդակ»ի քսան եւ հինգ ամեակին առթիւ, նախկին որբաշխարհիցիներու յիշողութիւնը թարմացնելով մոխիրներու տակ ծածկուած կայծերը աւելի քրքրել ուզեցի, որպէսզի հայ կեանքը աւելի բոցավառի ազգային ինքնագիտակցութեան հուրով:



*Վոսմ Սամուէլեանի ուստրն ու դուստրերը, ծախէն՝ Ալիս
(Թոմպագեան), Յակոբ եւ Սեդա (Թէրզեան), 1952-ին, Պէյրուֆ:*

Հայրենիք[ը] Մեզ Կը Կանչէ⁸³

Վեց հարիւր տարուայ պատմութիւնն է որ կանգ առած՝ կը փոխէ իր ընթացքը: Անկիւնադարձի դժուարութիւնն ու խոչընդոտները ժողովուրդ մը տարին մինչեւ Տէր Զօրի կիզիչ անապատներն ու դահիճը մեր արիւնի լիճին մէջ լոգցաւ, առանց մտածելու թէ կրնայ հատուցման վայրկեանը չուշանալ: Ալեհեր Արարատը իր զաւակներուն անօրինակ մարտնչումներու եւ մարտիրոսութեան ականատես եղաւ: Գերեզմանի եզերքը կանգ առաւ հայ ժողովուրդը: Հիւսիսի քեռին ձեռք երկարեց: Ամբողջ ժողովուրդ մը իր պատմական հայրենիքի բարձրաբերձ լեռներուն պէս հսկայ եռանդով եւ լիճերուն պէս վճիտ ու մաքուր սիրով եւ նուիրումով գօտեպնդուած հրաշքներ գործեց:

Քառորդ դարու խաղաղ եւ անխոնջ աշխատանքը սեպ ժայռերու մէջ բոյն դրած արծիւներուն կրակէ թելեր տուաւ եւ անոնք մինչեւ Պերլին սաւառնեցան: Իր հերոս զաւակներուն բռունցքները պողպատեց, որոնց ահարկու հարուածներուն տակ անարգ յափշտակիչներու որջը քանդուեցաւ:

Հայ ժողովուրդի գրիչներն ու գործիչները յաղթանակի եւ պայքարի կամքն է որ դարբնեցին, ազատ պետական կեանքի եւ խաղաղ ու արդար աշխատանքի պատգամը ներբողեցին եւ հոգիներէ ներս հայրենիքի սրբազան հուրն է որ պտտցուցին: Անոնք հայ անուան գովերգը հիւսեցին օտար սիրտերու մէջ:

Ահա՛ վերջին երեք տասնեակ տարիներու պատմութիւնը, ձմեռուայ մրրկալից եւ ցուրտ գիշերներու պէս մահասարսուտ ու խաւար, Արարատի բարձր գագաթին պէս սէզ ու վեհ, Հայաստանի արեւին պէս պայծառ ու կենսատու:

* * *

Յաղթանակները դիւրին չեն շահուիր: Ազգերու դարաւոր իղձերու իրականացումը տքնաջան աշխատանք, ահարկու կռիւներ եւ զրկանքներ կը պահանջէ: Հայրենիքի մեր հարազատներուն գերագոյն զոհողութիւններն են որ հայրենակարօտ հայերու դէպի տուն վերադարձի լուսաւոր ճամբան յարդարած են

եւ այսօր Հայրենիքը մեզ կը կանչէ:

Դարերէ ի վեր իրարու յաջորդող սերունդներու մէջ մեզի կը վիճակուի ազատ եւ անկախ Սովետ Հայաստանը ողջունելու եւ անոր դէպի տուն հրաւերը լսելու բախտը:

Օտար աստղերու տակ հասակ նետած սերունդները իրարու փոխանցեցին հայրենիքի սէրն ու կարօտը: Կարօտի երգերով կրունկէն խապրիկ ուզեցին, ծիծեռնակի թելերով դէպի երկիր սլանալ ջանացին: Հայրենի հովերէն դրախտանման Հայաստանի լեռներու, ջուրերու, այգիներու եւ ծաղիկներու հոտն ու բուրմունքը մուրացին: Մեր պապենական հողին վրայ երդիկ մը ունենալու համար օտար պալատներու սեմերը մաշեցուցին, բայց անոնք մեր դժբախտութիւնը ծաղրեցին, մեր թանկագին զաւակներուն արիւնը անպատկառ կերպով շահագործեցին:

Կրակով մկրտուած եւ արինէ ծնած սերունդ մըն ենք: Մօտիկ անցեալի լուսակերպ եւ նահատակ յեղափոխական առաքեալները եւ պանծալի մարտիկները ունինք: Անոնց միակ պատգամն ու իտէալը եղած է ազատագրել Հայաստանը եւ հայ ժողովուրդը դէպի տուն վերադարձնել: Անոնք բաց աչքերով կը դիտեն մեզ եւ հայրենի հրաւերը կը խայտացնէ անոնց հոգիները:

Ամէն ինչ ըլլալէ առաջ հայ ենք մենք եւ մեր հայրենիքը մեզ կը կանչէ:

Դէպի յաղթապանծ եւ շինարար Սովետական Հայաստան:

* * *

Դարերու յուսախաբութիւնն ու զրկանքները մեր հոգիներէն ներս բոյն շինած են: Գարան մորթով քայլեր մեր թշուառութիւնն ու աննպաստ պայմանները շահագործած են: Վերջին քառորդ դարը մեր հայրենիքի հարազատներուն եւ մեր միջեւ մշուշէ վարագոյրներ բանեց եւ մեզ նախապաշարումներով ու թոյնով կերակրեց: Սակայն այժմ չոր իրականութեան եւ փաստերու լեզուն շատ պերճախօս եւ ապշեցուցիչ է: Բարեկեցութիւնը չի կրնար թուլացնել մեր դէպի տուն դարձի կամքն ու փափաքը: Օտար աստղերու տակ հարստութիւնը մեզի որոշ ժամանակ մը օրօրելու կը ծառայէ: Վկայ պատմութիւնը, մեր դիզած ոսկիները մեր կեանքի եւ հայեցի նկարագրի պահպանման տեսակէտէն որեւէ ապահովութիւն չեն ներշնչեր: Անխուսափելիօրէն պիտի գլտորուինք երկու ճամբով՝ քաղաքական վերիվայրումներու

ատեն յափշտակութեան եւ ջարդի, իսկ խաղաղութեան միջոցին՝ ծուլումի: Աշխարհի չորս հովերուն մեզ ցրուելու քաղաքականութիւնը մի քանի դարերու պատմութիւն չէ: Բագրատունի թագակիրներու շրջանին իսկ հայ իշխանները փայլուն խոստումներէ եւ պատիւներէ հրապուրուած՝ հայրենի կալուածները յոյներուն յանձնելով կը հեռանային ի սպառ օտարանալու համար:

Պապենական հողի վրայ մեր միահաւաքման առիթը հայ ցեղի ապագայ ճակատագրի տեսակէտէն շատ փայլուն եւ կարելոր գործ մըն է եւ Հայաստանի ղեկավարներուն հայրենասիրութեան եւ գիտակցութեան մեծութիւնը՝ ամէն գնահատանքէ եւ երախտագիտութենէ վեր:

Սովետական յաղթական Հայաստանով հպարտ սերունդ մըն ենք եւ Հայրենիքը մեզ կը կանչէ:

Ահա՛ մենք կու գանք օտարութեան փոշին մեր վրայէն մաքրած, գաղթականի ցուպը մէկ կողմ նետած, վստահ քայլերով եւ անկեղծ նուիրումով:

Ահա՛ մենք կու գանք մեր մանկիկները գրկած, որպէսզի անոնց առաջին թոթով լեզուն հայրենի շունչով օծուի ու վտիտ քայլերը հայ հողի վրայ փորձեն:

Ահա՛ մենք կու գանք մեր ալեհեր հայրերով ու մամիկներով, որպէսզի անոնք հայրենիքի մեծութիւնը շօշափեն ու ապա հայրենի հողի մէջ ննջեն:

Ահա՛ մենք կու գանք մեր ջահել աղջիկներով եւ պատանիներով, որպէսզի անոնք իրենց սիրոյ երգը երգեն հայրենի սոխակի եւ պլպուլի գեղգեղով:

Ահա՛ մենք կու գանք մեր մշակներով, որպէսզի իրենց հալալ քրտինքով հայրենի հողը թրջեն:

Ահա՛ մենք կու գանք մեր աշխատաւորներով, որպէսզի անոնց մուրճի հարուածները հայրենի սալի վրայ զնգան:

Ահա՛ մենք կու գանք աշակերտներով, որպէսզի անոնք հայրենիքին ծառայելը եւ միայն անով հպարտանալը սորվին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Մեզի կը թուի թէ յուշագրողը ծրագրեր էր գրառել ո՛չ միայն մինչեւ 1918-ի Զինադադարը երկարող իր յուշերը, այլեւ՝ աւելի ընդգրկուն ծիրով մը՝ իր աւանդը որբախնամ աշխատանքին եւ առ հասարակ մասնակցութիւնը ազգային գործերու, բայց եթէ չէ յաջողած իրական-

նացնել իր այդ մտադրությունը, մատնանիշ պետք է ընել իր վերահաս հիանդությունն ու մահը: Կը տարուինք այսպես մտածելու հիմ բռնելով Սամուէլեանի՝ իր հօր յեղափոխական մը ըլլալուն վերաբերող սեւագիր հատուածը, որ գրուեր է Պէյրուֆի Կանանց Քոլէճին հիմնադրութեան յիսնամեակին առիթով կատարուած դրամահաւաքին համարատուութիւնը ներկայացնող 14 Ապրիլ 1973 թուակիր մեքենագիր տեղեկատուի (Ա. տարի, թիւ 6) առաջին էջին կոնակը, ինչ որ կը յուշէ թէ մաքրագիր օրինակը արտադրուեր է տուեալ թուականէն ետք: Հարկ է նաեւ նշել, թէ առանձին թուղթերու վրայ տարածուող գրառումներ ի յայտ կը բերեն հետաքրքրութիւն մը հանդէպ Պողազլեանի բարբառային նմուշներու, կարգ մը յեղափոխական դէմքերու, եւայլն, որոնք թերեւս մաս պիտի կազմէին յուշագրութեան: Այդպիսի պատահիկներու մէջ ուշադրութիւն կը գրաւեն մանաւանդ «Պողազլեանի Որբանոցը» վերտառութեան ներքեւ թուարկուած 10 կէտերէ հետեւեալները. «7) Կեսարիայէն Էրբիլէթ գիւղի մօտ Ճէվիզլի Խան պառկեցանք: Շատ մարդիկ այդտեղ մեղցուցած են [ցեղասպանները]: 8) Ուլուզլայի կառավարութեան ձեռք անցան այն պատմութիւնները, որոնք գրուած են Պողազլեանի որբանոցի[ն] մէջ»: Տակաւին հարկ է նշել, թէ թերաւարտ յուշերը թերեւս նաեւ ընդգրկէին տեղեկութիւններ Վոսմ Սամուէլեանի եւ իր կնոջ՝ Եսթերի, 1955-ին Թուրքիա կատարած այցելութեան ընթացքին քաղուած տպաւորութիւններ եւ պատահած իրադարձութիւններ: Վակոն Լի գնացքի միջոցով Հալէպէն Թուրքիա ուղևորութեան բուն նպատակն է եղած գտնուիլ Կեսարիա եւ Թալաս, այցելել Վոսմի հօրենական տունն ու ամերիկեան քոլէճը, ինչպէս նաեւ Եսթերի մեծ հօրը պատկանած շէնքը, որ հետագային արեւելեան քաղցրաւենի *լոխումի* գործարանի վերածուեր էր: Այդ ուղևորութեան առիթով ամուլին նաեւ Պոլիս գտնուած օրերուն զուգադիպած են Սեպտեմբեր 6 եւ 7-ի «Սեւ Սեպտեմբերի դէպքեր» անունով ծանօթ հակայունական եւ հակահայկական արարքները՝ սպանութիւն, խոշտանգում, կողոպուտ, հրկիզում, եւայլն:

- ² Մերձավոր Արեւելքի Նպաստամատոյցը (Near East Relief) հիմնուեր էր 1915-ին որպէս հետեւանք Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու դէմ գործադրուած ցեղասպանութեան կապակցութեամբ անմիջական օգնութիւն ցուցաբերելու խնդրանքին, զոր ներկայացուցեր էր Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթաւ: Կազմակերպութեան սկզբնական անունը եղեր է Հայերու եւ Սուրիացիներու Օգնութեան Ամերիկեան Յանձնաժողով (American Committee for Armenian and Syrian Relief): Այնուհետեւ, կարճ պահ մը, ան գործեր է Մերձավոր Արեւելքի Մէջ Նպաստի Ամերիկեան Յանձնաժողով (American Committee for Relief in the Near East) անուան տակ մինչեւ 1919-ի Օգոստոս ամիսը, երբ Միացեալ Նահանգներու Ներկայացու-

ցիչներու Տունը պաշտօնապէս վաւերացնելով այս մարդասիրական կազմակերպութեան կանոնագիրը, անոր պաշտօնական անունը դարձեր է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց: 1930-ին, վերջին անուանափոխումով մը, ան իր գործունէութիւնը շարունակեր է Մերձաւոր Արեւելքի Հիմնարկութիւն (Near East Foundation) անուան ներքեւ:

- 3 Պատուելի Ճոզըֆ Պիչ (1889–1973) Նպաստամատոյցին օգտակար ըլլալու նպատակով Կեսարիա առաքուեր էր 1919-ին: Միացեալ Նահանգներ վերադարձ կատարելէ եւ ամուսնանալէ ետք, 1922-ի Դեկտեմբերին դարձեալ յայտնուեր էր Կեսարիա եւ Թալաս՝ շարունակելու իր ծառայութիւնը Նպաստամատոյցին գծով: Հետագային գործեր է Լիբանան եւ Կովկաս 1923-էն մինչեւ 1926: 1 Մայիս 1921 թուականի համարատուութեամբ Պիչ կը տեղեկացնէր թէ Նպաստամատոյցը Կեսարիոյ մէջ լրիւ կամ էական աջակցութիւն կը ցուցաբերէ 3190 որբերու, 14 զոյգ կով փոխ տրուեր է շրջակայ գիւղերու, 1920-ի Սեպտեմբերին հրկիզուած մեծ հիւանդանոցին փոխարէն կը բանեցնէ արտակարգ իրավիճակի հիւանդանոց մը որբերու եւ զանազան հիմնարկներու անձնակազմերուն համար, ձմեռնային հագուստ բաշխեր է 700 ռազմագերիներու, ճարտարարուեստական վարժութիւն մատուցեր է Թալասի, Չինճիտերէի և Կեսարիոյ աւելի տարեց տղոց եւ աղջկանց, և հակառակ Թալասի ապաստանարանը փակուած ըլլալուն, 105 անձերու օգնութիւն տրամադրեր է իրենց բնակարաններուն մէջ (Near East Relief տեղեկատու, Գ. տարի, թիւ 20, 22 Մայիս 1921, էջ 1): 1940-ականներուն եւ այնուհետեւ Պիչ իբրեւ հոգեւոր հովիւ պաշտօնավարեր է ամերիկեան Մեսէչուսէց նահանգին մէջ:
- 4 Միսիոնարուի Սթելլա Ն. Լաֆրիճ (1871–1963) Միգուրիի եւ Նեպրաքայի համալսարաններուն մէջ ուսումնառութենէ ետք 1901-ին ուղղուեր է Թալաս՝ ստանձնելու տնօրինութիւնը աղջկանց վարժարանին: Ան Թալասի եւ շրջակայքի մէջ ընդմիջումով մը գործեր է մինչեւ 1923: Ընդմիջումը հետեւանքն է եղեր Միացեալ Նահանգներու Առաջին Աշխարհամարտ մուտքին պատճառով ամերիկեան միսիոնարներու Թուրքիայէն արտաքսումին, ինչ որ առիթ դարձեր է Լաֆրիճի համար 1917–1919 տարիներուն ուսման հետեւելու Շիքակոյի համալսարանին մէջ: Ծառայեր է նաեւ Պէյրութ (1925–1927), Ատանա (1927–1930) եւ Իսկիւտար, Թուրքիա (1930–1939): Շրջան մը վարեր է Կեսարիոյ աղջկանց բարձրագոյն վարժարանին տնօրինութիւնը: Օգտակար եղեր է հայ որբերու Աթէնք եւ Պէյրութ փոխադրութեան Մուսթաֆա Քեմալի իշխանութեան գլուխ գալէն ետք: Լաֆրիճ 21 Յունիս 1918-ին տեղեկագրով մը իր ականատեսի վկայութիւնը տուեր է Առաջին Աշխարհամարտի ընթացքին Կեսարիոյ շրջանին մէջ պատահած անցուդարձներու եւ հայերը բնա-

ջնջելու կամ իսլամացնելու ուղղությամբ թուրք պաշտոնակատարներու արտայայտություններուն մասին (*“Turkish Atrocities”: Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917*. Compiled by James L. Barton, Էն Արպըր, Միչիկըն, Կոմիտաս Հիմնարկ, 1998, էջ 116–117): Հարկ է դիտել տալ թէ յիշեալ հրատարակութեան 115-րդ էջով Սթեյլա Լաֆրիճի անունը ճիշդ ներկայացուած ըլլալով հանդերձ, սխալ ընթերցման կամ մեքենագրման հետևանքով 117-րդ էջով իբրեւ տեղեկագիրն ստորագրող ներկայացուեր է Սթեյլա Հ. Լոնկայրիճ մը: Ուղիղն է Սթեյլա Ն. Լաֆրիճ:

- 5 Էտուարտ Ֆ. Մարթըն Նպաստամատոյցին կողմէ Թուրքիա դրկուեր էր 1919-ին, նախ գործելու Ուլու Գըշլայի մթերանոցին մէջ, ապա անցեր էր Կեսարիա, վարելու Մանչերու Արհեստագիտական Ճարտարարուեստական Վարժարանը: 1923-ին կարճ պահ մը Մարթըն վարեր է Ալեքսանդրապոլի Փոխադրութեան վերատեսչութիւնը:

6 Տես էջ 73:

7 Տես էջ 55:

- 8 Սթիւըրտ Տ. Ճեսըփ որբերու ընկերակցութեան ընդհանուր քարտուղարութեան պաշտօնին կոչուելէ առաջ որբեր է իբրեւ Սիտոնի (Սայտա) որբանոցի տնօրէն, մինչ այդ գործած ըլլալով որպէս ամբողջ Սիտոնի շրջանի շուրջ 5000 որբերու պատասխանատու: Այս վերջին պարագան կը պարզուի Նպաստամատոյցի աշխատակիցներէն Ճէյմզ Հ. Նիքոլի 1918 թուականին գրած մէկ նամակէն, ուր նաեւ կը նշուի թէ կը ծրագրուի որբանոցներ հաստատել Սիտոն, Պէյրութ, Պրումմանա, Թրիփոլի եւ թերեւս այլ լեռնային շրջաններու մէջ, միաժամանակ աշխատանք տանելով Անթուրայի հայկական որբանոցին մէջ, ուր «650 երախաներ կը մնան 2000-էն, զորս թուրքերը փորձած են թրքացնել» (James L. Barton, *Story of Near East relief (1915–1930): an interpretation*, Մաքմիլլըն Ընկերութիւն, Նիւ Եորք, 1930, էջ 75): Ճեսըփի նաեւ վստահուեր է Սիտոնի Մանչերու Ամերիկեան Դպրոցի տնօրինութիւնը: Հարկ է նշել թէ Սուրիա ծառայած միսիոնար հօր զաւակ Ճեսըփի մասին արձանագրութիւն մը կը նշէ թէ ան արդէն միսիոնարական աշխատանքի լծուեր էր Սուրիոյ տարածքին 1903 թուականին կամ անկէ առաջ (Henry Harris Jessup, *Fifty-three years in Syria*, Բ. հատոր, Ֆլեմինկ Հ. Ռեվել Ընկերութիւն, Լոնտոն, 1910, էջ 469):

- 9 Եսթեր դուատըն էր 1878-ին Կեսարիա ծնած Հայկ Ղազարեանի, որուն յուշերը «Կեսարիոյ Նախճիրները – Էջեր Օրագրէս» խորագրով տպուած է նախաձեռնութեամբը իր թոռնուհիին՝ Սօսի-Ղազարեան Գեւորեանի (հրատարակութիւն ՀՀԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի որպէս Մեսրոպ Արք. Աշճեան Մատենաշարի 101-րդ

հատոր, Երեւան, 2014):

- 10 Վոսման Սամուէլեան մօրս մօրեղբայրն ըլլալուն, մեր տան մէջ երբեմն կը խօսուէր այն մասին, թէ ինչպէս մահափորձին յաջորդ օրը Վոսման ընտանեօք ապաստանած է Դամասկոս մինչեւ անհետացումը մահացու վտանգին: Իր դուստրը՝ Գահիրէաբնակ Սեդա Թէրզեան, կը պատմէ թէ իրենց մեկնումին յաջորդ օրն իսկ զինեալներ փորձ մը եւս կատարել են իրենց ոճրային դիտաւորութիւնը իրականացնելու համար, բայց տունը գտել են դատարկ: Սամուէլեան ընտանիքը վերադարձեր է եղբայրասպան ալիքը հանդարտելէ ետք: Հետագային, անոնք իմացել են թէ իրենց բնակարանին վրայ կրակած երիտասարդը, որ որդին էր թաղի հայ կաթնամթերանոցին տիրոջ, փամփուշտով մը զգետնուել է իր պատկանած թաղային ակումբին մէջ ծագած վէճի մը ընթացքին:
- 11 Բացի վերոնշեալ վաւերաթուղթերէն, կենսագրական տեղեկութիւններուն համար օգտուած ենք նաեւ «Ազգակ» օրաթերթի 22 Դեկտեմբեր 1973-ի համարով հրատարակուած մահախօսականէն, զոր ստորագրել է Հայկազ Եափուճեան: Սամուէլեանի կենսագրականին կը հանդիպինք նաեւ Սիսակ Յակոբ Վարժապետեանի *Հայերը Լիբանանի Մէջ* աշխատութեան Ե. հատորին մէջ (Պէյրութ, 1983, էջ 373–75):
- 12 Մուրթաֆա Քեմալ (1881–1938) յատկանշականօրէն 24 Ապրիլ 1920-ին Թուրքիոյ նորահաստատ Ազգային Մեծ Ժողովի նախագահը դառնալէ ետք, 29 Հոկտեմբեր 1923-ին պիտի հռչակուէր Հանրապետական Թուրքիոյ հիմնադիր նախագահը: Կարգ մը աղբիւրներու համաձայն, ան Սելանիկ կամ Թեսաղոնիկէ բնակած թուրք ընտանիքի զաւակ էր, մինչ ուրիշ աղբիւրներ զինք կը նկատեն իսլամութիւն ընդունած հրեայ նախահայրերու շառաւիղ:
- 13 Մեհմէտ Թալաաթ (1874–1921) իբրեւ ամենաազդեցիկ անդամը Առաջին աշխարհամարտի ընթացքին Օսմանեան Կայսրութիւնը ղեկավարած եռապետութեան, ստանձներ էր վարչապետի (Մեծ Վեզիր) եւ ներքին գործերու նախարարի պաշտօնը: Ան կը նկատուի հայոց բնաջնջման նախագիծի գլխաւոր հեղինակներէն մին: Թալաաթ պիտի զգետնուէր 15 Մարտ 1921-ին Պերլինի մէջ Սողոմոն Թեհլիրեանի արձակած գնդակով:
- 14 Առաջին Համաշխարհային Պատերազմը պաշտօնապէս սկսաւ 28 Յուլիս 1914-ին եւ աւարտեցաւ 11 Նոյեմբեր 1918-ին: Թուրքիա 2 Օգոստոս 1914-ին Գերմանիոյ հետ դաշնակցելով պատերազմական գործողութիւններուն գործնապէս մասնակից դարձաւ նոյն տարուան Հոկտեմբեր 29-ին:
- 15 Իթթիհատ վէ Թերաքքը կամ Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէ (նաեւ՝ Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութիւն) անուամբ ծա-

նոթ շարժումը իբրեւ գաղտնի կազմակերպություն հիմնուել էր 6 Փետրուար 1889-ին՝ Օսմանեան Կայսրութեան մէջ բարեփոխումներ կատարելու միտումով: Պէհաէտտին Շեքիր զայն վերածեր էր պաշտօնական կուսակցութեան 1906-ին եւ Երիտասարդ Թուրքերու իրագործած 1908-ի յեղափոխութիւնը Օսմանեան Կայսրութեան ղեկին բերեր էր այդ կուսակցութեան պարագլուխները:

- 16 Իսմայիլ Էնվէր (1881–1922) Առաջին Աշխարհամարտի շրջանին անդամ էր Օսմանեան Կայսրութիւնը ղեկավարող եռապետութեան եւ ստանձներ էր պատերազմական նախարարութեան ղեկը: Թալաաթի հետ հայոց բնաջնջման գլխաւոր ճարտարապետներէն մին նկատուող Էնվէր զգետնուեցաւ 1922-ի Օգոստոսին Թուրքիստանի մէջ, իր հակապոլշեիկեան գործունէութիւնը կասեցնելու նպատակով կարմիր-բանակային Յակոբ Մելքումեանի գլխաւորած յարձակման ընթացքին:

- 17 Պէհաէտտին Շաքիր (1874–1922), որ Առաջին Աշխարհամարտի տարիներուն կը գլխաւորէր հայերն իրենց բնօրրանէն տարագրելու եւ ոչնչացնելու նպատակին ծառայող Յատուկ Կազմակերպութիւնները (*Թէշքիլաթը Մահսուսա*), 17 Ապրիլ 1922-ին նախ պիտի վիրաւորուէր Արշաւիր Շիրակեանի արձակած գնդակով եւ նոյնհետայն իր վախճանը գտնէր Արամ Երկանեանի փամփուշտով Պերլինի մէջ:

- 18 Ճէմալ Ազմի (1868–1922) Տրապիզոն նահանգի կառավարիչի հանգամանքով Առաջին Աշխարհամարտի ընթացքին հրահանգեր էր ոչնչացնել նահանգին հայութիւնը եւ ծովամոյն ընել տուեր՝ շուրջ մէկուկէս տասնեակ հազար հայեր: Ան իր անարգ վախճանը պիտի գտնէր 17 Ապրիլ 1922-ին Պերլինի մէջ Արշաւիր Շիրակեանի ձեռքով:

- 19 Բան թուրանական երազը կամ գաղափարախօսութիւնը, իր զանազան նրբերանգներով թէ զարգացումներով, ըստ էութեան կը ներկայացնէր ձգտումը թուրք-թուրանական ծագում ունեցող բոլոր հաւաքականութիւնները մշակութապէս եւ քաղաքականապէս միաւորելու Թուրքիոյ գլխաւորութեամբ: Ձգտումը թագնապէս թէ յայտնապէս կը շարունակէ յամենալ Օսմանեան Կայսրութեան փլատակներէն ծնունդ առած հանրապետական Թուրքիոյ մէջ:

- 20 Կեսարիա ծնած Սուրբ Բարսեղ (329 կամ 330–379) մէկն էր Ուղղափառ Եկեղեցւոյ ամենաազդեցիկ աստուածաբան հայրերէն:

- 21 Յեղասպանութեան նախօրեակին, պատմական Փոքր Հայքի Կեսարիա նահանգին պատկանող Թալաս գիւղաքաղաքի ընդհանուր բնակչութիւնը նկատուել է 20,000, իսկ հայերու թիւը՝ 7,000 (Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան եւ Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Բ. հատոր, Երեւան, 1988, էջ 392):

- 22 Արշակ Ալայոյան (1879–1962), բանասեր, խմբագիր, պատմաբան, ազգային-կուսակցական գործիչ, ծանօթ՝ առաւելապէս հայկական գաղթավայրերու եւ կարգ մը հայկական բնակավայրերու նուիրում իրատարակութիւններով:
- 23 Արշակ Ա. Ալայոյան, *Պատմութիւն Հայ Կեսարիոյ*, իրատարակութիւն Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութեան, Ա. և Բ. հատորներ, Գահիրէ, 1937:
- 24 Առաջին Աշխարհամարտին աւարտը պաշտօնապէս կ'ազդարարուէր 11 Նոյեմբեր 1918-ին հռչակուած զինադադարով, երբ Գերմանիա զայն ստորագրելով՝ վերջ կը գտնէին բոլոր ցամաքային, ծովային թէ օդային պատերազմական գործողութիւնները:
- 25 Դիմած:
- 26 Սկզբնապէս իրենց քրիստոնեայ ծնողներէն առեւանգուած փոքր տարիքաւորներու յատուկ մարզումով ստեղծուած եւ *Ենիշէրիներ* վախազդեցիկ անունով ծանօթ Օսմանեան Կայսրութեան ընտրանի հետեակագործին կազմութիւնը կը վերագրուի Սուլթան Մուրատ Ա.ի (1362–1389): Անոնք քով քովի կը բերուէին մանկահաւաքի (*տեւ-շիրմէ*) դրութեամբ:
- 27 Փայտաթոռ:
- 28 Նստարան:
- 29 Փսիաթ:
- 30 Որպէս յուռութ ծառայող թուղթ:
- 31 Գրիգոր Նարեկացիի (951–1003) *Մատեն Ողբերգութեան* երկը:
- 32 Աստուածաշունչի Հին Կտակարանի *Սաղմոսներու Գիրքը*:
- 33 Յովհաննէս Գ. Գրիգորեանի արտօնատիրութեամբ 1911–14 տարիներուն Պոլիս իրատարակուած կրօնական, բարոյախօսական, արուեստներու եւ քաղաքական շաբաթաթերթ (Ա[մալիա] Կիրակոսեան, *Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւն (1794–1967)*, Հայկական ՍՍՀ Մշակոյթի Նախարարութեան Ալ. Միասնիկեանի Անուան Հանրապետական Գրադարանի իրատարակութիւն, Երեւան, 1970, էջ 460 եւ Մ. Ա. Բաբլոյեան, *Հայ Պարբերական Մամուլը – մատենագիտական համահաւաք ցուցակ (1794–1980)*, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1986, էջ 320):
- 34 1885–1921 տարիներուն Պոլիս իրատարակուած սկզբնապէս քաղաքական, ապա նաեւ ազգային, վաճառականական, սեղանաւորական եւ գիտական օրաթերթ, զոր հերթաբար խմբագրեր են Տիգրան Ճիվէլեկեան (նաեւ արտօնատէր), Յակոբ Վարժապետեան, Աբիկ Մուպահեաճեան եւ Օննիկ Պալզճեան (Մ. Ա. Բաբլոյեան, *Նշ. աշխ.*, էջ 320 եւ Հ. Վահան Յովակիմեան, «Վիեննայի Մխիթարեանների Թերթերի Հաւաքածոյն», համացանցային հասցէ՝ <http://ical.asj-oa.am/47/1/Vienna.pdf>, 27 Մայիս 2019-ի դրութեամբ):

- ³⁵ Հայատառ թրքերէն այս օրաթերթը հրատարակուել է Պոլիս 1866–1919 տարիներուն, արտօնատէր խմբագիր ունենալով Կարապետ Փանոսեանն ու յաջորդական խմբագիրներ՝ Երուանդ Տէր-Անդրէասեանը, Միսաք Գօշունեանը (Քասիմ), Յակոբ Տէր Յակոբեանը, ապա նաեւ Սմբատ Բիւրատն ու Արամ Անտոնեանը: 1890-ականներուն իբրեւ ազգային, քաղաքական, գիտական եւ տնտեսական օրաթերթ լոյս տեսնող լրագիրը 1902-ին դարձել է «Հայաթերթ առաւօտեան» ըստ Ա. Կիրակոսեանի: Մ. Բաբլոյեան զայն կը ներկայացնէ իբրեւ թէ՛ հայերէն եւ թէ՛ հայատառ թրքերէն օրաթերթ 1901 թուականէն սկսեալ, աւելցնելով թէ վերջաւորութեան հրատարակուել է իբրեւ ազատական անկախ պատկերազարդ օրաթերթ (Ա. Կիրակոսեան, *նշւ. աշխտ.*, էջ 132 եւ Մ. Ա. Բաբլոյեան, *նշւ. աշխտ.*, էջ 55):
- ³⁶ Ճարտարապետ:
- ³⁷ Պետութեան կողմէ հարեալ:
- ³⁸ Եաֆթայի կամ, հայերէնով, Ազդագրի ցուցական դէպքը հետեւեալն է: 25 Դեկտեմբեր 1892-ի գիշերը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնին անհեռատես որոշումով, Փոքր Հայքի զանազան քաղաքներու եւ գիւղաքաղաքներու մէջ կը փակցուին յեղափոխաշունչ թրքերէն որմազդեր, որոնք պատճառ կը դառնան Սուլթան Համիտի կարգադրութեամբ հարիւրաւոր հայոց ձերբակալման եւ խոշտանգման, ինչպէս նաեւ տակաւին Փոքր Հայքի մէջ իր հիմնաւորումը լրումի չհասցուցած Հնչակեան Կուսակցութեան մասնաճիւղերու քայքայման (Արշակ Ալպօյաճեան, *նշւ. աշխտ.*, Ա. հատոր, էջ 1356–1361):
- ³⁹ Ժողովուրդը հայդուկներուն կամ ֆետայիներուն յղում կը կատարէր որպէս *չէլլօ*: Կիւրինցի հայդուկ Թորոս Ծառուկեանի (ծանօթ որպէս *Մեծ Չէլլօ*) կեանքին եւ գործունէութեան, ապա նաեւ անոր եւ թալասցի հայդուկներ Միրիճան Խանապախեանի եւ Փանոս Եաղուպեանի ձերբակալման ու կախաղանի դատապարտման պարագաներուն համար տեսնել Ալպօյաճեան, *նշւ. աշխտ.*, էջ 1364–1381, ինչպէս նաեւ Պետրոս Մինասեան (պատասխանատու խմբագիր), *Պատմագիրք Կիւրինի*, հրատարակութիւն Կիւրինի Հայրենակցական Միութեան, Պէյրութ, 1974, էջ 313–363:
- ⁴⁰ 1844-ին օսմանեան պետութիւնը կը թողարկէր 20 ղուրուշի համազօր արծաթեայ դրամ մը, որուն գնողական արժէքը հետագային պիտի տարուբերէր շրջանէ շրջան:
- ⁴¹ Արտասահման գացած, պանդխտացած:
- ⁴² Յուշագրութեան սեւագիր օրինակը կը նշէ թէ Հոռիմսին լուացք կ'ընէր ամերիկացիներու մօտ:
- ⁴³ Լա՛ճ, եկեղեցիին զանգակը զարկա՞ծ է արդէն:

- 44 Անհաւատ: Թուրքերու համար սովորութիւն էր ոչ-մահմետականներն անհաւատ նկատել:
- 45 Հայ քահանայ:
- 46 Օսմանեան Դրամատան գրաման (14 Օգոստոս 1896) հետեւանքով իբրեւ յեղափոխական փախուստ տալով կը հասնի Եթովպիա, ուր շրջան մը աշխատելէ ետք կը վերադառնայ Թալաս՝ ամուսնանալու նպատակով:
- 47 Հայ գրականութեան մէջ սովորաբար արինկզակ, արինարբու եւ կարմիր ածականներով ներկայացուած սուլթան Ապտիլ Համիտ Բ. (1842–1918) հեղինակն էր 1895-96 տարիներուն շուրջ 300,000 հայերու կոտորածներուն Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան տակ հեծող հայկական նահանգներուն մէջ:
- 48 Սուլթան Մեհմետ Ե. Ռեշատ (1844–1918), նախաձեռնելով օսմանեան սուլթանը, 27 Ապրիլ 1909-ին յաջորդեց Սուլթան Ապտիլ Համիտ Բ.-ի՝ Երիտասարդ Թուրքերու յեղափոխութեամբ վերջինին գահընկէցութենէն ետք, ունենալու համար պարզապէս անուանական ներկայութիւն մը, որովհետեւ Օսմանեան Կայսրութեան ղեկը ձեռք առեր էր Թալաթ, Էնվեր եւ Ճէմալ եռապետութիւնը:
- 49 Թմբուկ եւ փող:
- 50 Թալասի Ամերիկեան Քուլէճը հիմներ է ամերիկացի միսիոնար Ճէյմզ Լ. Ֆաուլ 1871-ին: 1889-ին գայն երկրորդական գիշերօթիկ վարժարանի վերածեր է ուրիշ միսիոնար մը՝ Հենրի Ք. Ուինկէյթ: 1906-ին նորակառոյց շէնք մը տեղ տուեր է թէ՛ տղոց եւ թէ՛ աղջկանց երկու անջատ դպրոցներու: Քուլէճը իր ուսումնական գործունէութիւնը շարունակեր է մինչեւ 1968:
- 51 Աշխատանքային գումարտակ կամ ջոկատ:
- 52 1923-ին հիմնուած եւ տակաւին գործող բարձրագոյն վարժարան:
- 53 Ուիսքանսըն ծնած եւ Միննետոթա մահացած Հենրի Ք. Ուինկէյթի (1865–1944) կողակիցը՝ Ճէյն Քերոլայն Սմիթ, ծներ էր Կեսարիա: Նախնական կրթութիւնը Մարգուանի կամ Մարգիֆունի մէջ գործող միսիոնարներու աղջկանց գիշերօթիկ դպրոցին մէջ ստանալէ ետք, բարձրագոյն կրթութիւնը աւարտեր է Իլլինոյ նահանգը 1885-ին, այնուհետեւ լծուելու կրթական գործունէութեան, նախ Ուիսքանսըն, ապա Մարգուան, Կեսարիա եւ վերջապէս Թալաս: Թարգմաներ է հայկական ժողովրդական բանահիւսութեան նմոյշներ եւ Սր. Ներսէս Շնորհալիի «Յիսուս Որդի» գործը, որ հրատարակուած է Նիւ Եորք, 1947-ին (<https://wendyelliott.ca/recognize-missionaries-relief-workers/> եւ http://www.armeniapedia.org/wiki/Jane_Wingate, 29 Մայիս 2019-ի դրութեամբ):
- 54 Գլխաշոր:
- 55 Թաղապետ:

- 56 Բաժին, վիճակ:
- 57 Ճշմարտապես:
- 58 Կառավարիչ, քաղաքապետ, վայրի մը ծայրագոյն իշխանաւոր:
- 59 Ամերիկայի Միացեալ Նահանգները Առաջին Աշխարհամարտին սկսաւ մասնակցիլ 6 Ապրիլ 1917-ին՝ պատերազմ յայտարարելով Գերմանիոյ դէմ: Կարգ մը հեղինակներ Միացեալ Նահանգներու չէզոք դիրքին այս փոփոխութիւնը կը բացատրեն որպէս հետեւանք ամերիկեան հանրային կարծիքի բորբոքումին, երբ կը բացայայտուի թէ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Արթիւր Յիմմերման փորձեր է Մեքսիկոյի գերման դեսպանին միջոցով դաշինք կնքել մեքսիկական կառավարութեան հետ եւ զայն մղել ամերիկացիներու դէմ պատերազմի՝ վերատիրանալու Թեքսաս, Նիւ Մեքսիքո եւ Արիզոնա նահանգներուն, եթէ ամերիկացիները փորձուէին պատերազմ յայտարարել Գերմանիոյ դէմ:
- 60 Ամերիկայի Ուիսքանսըն նահանգէն Էլսի Լոիս Պրիսթլ (1863–1932) Սոֆիա Լուիս Մէյնի հետ 1929-ին համահեղինակեր է Ուիլիամզ ընտանիքի ազգաբանութիւնը (Sophia L. Main, assisted by Elsey L. Bristol, *Genealogy of a Williams Family*, Մատիսըն, Ուիսքանսըն, 1929): Գրքոյկին 57-րդ էջին մէջ կը նշուի թէ Էլսի Պրիսթլ Ուիսքանսըն Համալսարանէն շրջանաւարտ եղեր է 1886-ին եւ մի քանի տարի ուսուցչութեամբ զբաղելէ ետք, աշխատեր է միսոնարական դպրոցի մը մէջ, Թալլաս, ապա հինգ տարի ալ գործեր է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին հետ Թուրքիա եւ Յունաստան:
- 61 Ընդհանրապէս՝ մեծ կաթսայ:
- 62 Ռոճիկ, օրապարէն, մթերաբաժին:
- 63 Մահմետական կրօնաւոր:
- 64 Շատ հաւանաբար ակնարկութիւն Յովհաննէս Քաջազնունիի (1867–1938), որ 1918-ի Յունիսին ստանձներ էր Հայաստանի Հանրապետութեան վարչապետութիւնը:
- 65 Մզկիթի աշտարակէն կամ մինարէէն արձակուող երգածայն աղօթքի հրաւեր:
- 66 Ուխտի նպատակով Երուսաղէմ այցելած հաւատացեալ, մահտեսի:
- 67 Սերովբէ վարդապետ Սամուէլեան ծներ է Թալլաս 1871-ին: Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան միաբան ձեռնադրուեր է 1898-ին եւ այնուհետեւ ունեցեր՝ հետեւեալ պաշտօնավարութիւնը մինչեւ իր վախճանումը 27 Հոկտեմբեր 1917-ին.- Տեսուչ Դամասկոսի 1902–1904, առաջնորդական տեղապահ ի Պաղտատ, 1904–1907, Յոպպէի (Եաֆա) տեսուչ Պաղեստինի մէջ մինչեւ 1910, տեսուչ Ժառանգաւորաց Վարժարանի 1910–1914 եւ տեսուչ Բերդեհէմի 1914-էն ետք: 1904-ին Պոլիս հրատարակուեր է իր *Ծրագիր Կենաց* խորագրեալ գիրքը: Աղբիւր՝ Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն Հայ*

Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937, էջ 2028, քաղուած՝ Մկրտիչ Եպիսկոպոս Աղանունիի *Միաբանք եւ Այցելութ Հայ Երուսաղէմի* գիրքէն, Երուսաղէմ, 1929, էջ 468: Հոս հարկ է դիտել տալ երկու պարագայ: Մինչ Ալայօյաճեան առաջնորդական տեղապահի դեր կը վերագրէ Սերովբէ վարդապետի Պաղտատի մէջ, Աղանունի 1904–1907 տարիներու ընթացքին անոր կը վերապահէ Տրապիզոնի եւ Պաղտատի առաջնորդական պաշտօններ. ապա նաեւ, մինչ զոյգ աղբիւրներն ալ *Ծրագիր Կենաց* հատորը հրատարակուած կը նկատեն 1904-ին, Ազգային Գրադարանի գրացանկը կը նշէ թէ գիրքը լոյս տեսեր է 1903-ին:

68 Ալայօյաճեան կը յիշատակէ «սարսափի օրերուն տկարութեան վայրկեանի մը իսլամութիւն ընդունած» պատուելի Միպար Յ. Մնգիրեան մը, յաւելուածաբար նշելով թէ ան ծներ է 1870-ին: Ուսումնառութիւնն աւարտելէ ետք Այնթապ Գօլէճի եւ Մարաշի Աստուածաբանական Ճեմարանին մէջ, լծուեր է կրթական եւ հովուական աշխատանքի: 1905-ին հովուական պաշտօնով հրաւիրուեր է Թալաս, ուր մնացեր է մինչեւ իր վախճանը: Ըստ Ալայօյաճեանի, միսիոնարներէն մեծապէս յարգուած այս հովիւը հեղինակեր է *Աստուծոյ Գոյութիւնը* եւ *Համաձայնութիւն Չորս Աւերարաններու* հայատառ-թրքաբարբառ գիրքերն ու նախագահեր է «բողոքական կեդրոնական միութեան (Ալայօյաճեան, նշւ. աշխար., Ա. հատոր, էջ 747–748): Յստակ է թէ Նուպար Մնջէրեանը գրաշարական սխալի հետեւանքով դարձեր է Միպար Մնգիրեան, որովհետեւ *Պաղտութիւն Հայ Կեսարիոյ* ծաւալուն աշխատութեան երկրորդ հատորի անուանացանկին մէջ (էջ 2407) անունը ճիշդ ներկայացուեր է որպէս վերապատուելի Նուպար Յ. Մնջէրեան:

69 Իսլամ կամ մահմետական կրօնքի հիմնադիրը (մօտաւորապէս 570–632), որուն հետեւորդները զինք կը նկատեն Աստուծոյ կողմէ առաքուած վերջին մարգարէն:

70 Մորթէ գլխարկ կամ փափախ:

71 Մահմետական հաւատացեալները աղօթքի հրաւիրողներ:

72 Աստուածամեծարութիւն կամ փառաբանութիւն՝ *Աստուած մեծագոյնն է* հաստատումով:

73 Ձեռածիր:

74 Հենրի Ռ. Մըրֆի ծներ է Մեսէչուէց նահանգի Լորընս քաղաքը 1898-ին: Մահուան թուականը անձանօթ կը մնայ մեզի: Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի պաշտօնաթերթին երկու տարբեր համարներու մէջ կը հանդիպինք Մըրֆիի յիշատակութեան: Առաջինը, «Էֆքերէի Որբանոցը Վանքի Մը Մէջ» խորագրով, կը ներկայացնէ մէջբերումներ «Թալասի միաւորին պատկանող Հ. Հ. [ուղղել՝ Հ. Ռ.- Վ.Ղ.] Մըրֆիի մէկ նամակէն»: Հատուածը կը սկսի յայտնելով.

«Կեսարիոյ մեր մեծ որբանոցը արդէն փոխադրուեր է Էֆքերէ եւ ես շաբաթը չորս օր հոն կը գտնուիմ որբանոցային, ճարտարարուեստական և ընդհանուր բնոյթի նպաստամատոյց աշխատանք կատարելու համար:

«Շէնքը 1600 տարեկան վանք մըն է – Պէտք է տեսնէք զայն: Մարդ մուտք կը գործէ երկաթեայ շերտաւոր դուռներէ, որոնք ամրացուած են զանգուածեղ խաչածեւ ձողերով: Վանական կեանքը խիստ հետաքրքրական եղած ըլլալու է, շրջելով հսկայ բակերուն մէջ կամ քալելով բազմաթիւ երկար միջանցքներն ի վեր կամ վար: Ներքին անցքերէն կը ճիւղաւորուին վանականներու խուցերը, շատ փոքր, շատ մերկ և տհաճօրէն շատ ցուրտ ու խոնաւ...:

«... Կան մղոններով ստորգետնեայ անցքեր եւ քարայրներ, բոլորն ալ վանքապատկան բլուրներուն ընդմէջէն, եւ շատ հաճելի է զանոնք հետազօտելը: Հոն կան հսկայ քարեր, զորս կարելի է գլորել փակելու համար նեղ միջանցքները, որպէսզի ոչ ոք կարենայ մուտք կամ ելք գործել: Կախարդականօրէն միջնադարեան չի՞ հնչեր սա...» (Near East Relief տեղեկատու, Դ. տարի, թիւ 1, 7 Յունուար 1922, էջ 3–4):

Երկրորդ հրապարակումը, «Վանական Կեանքը Կեսարիոյ Մէջ» խորագրեալ, Մըրֆին կը ներկայացնէ որպէս տնօրէն Նպաստամատոյցի Կեսարիոյ որբանոցին, ուր պատսպարուած որբերուն թիւը կը կազմէ 3000: Որբանոցի վերածուած վանքին մասին Մըրֆի կը գրէ. «Մի քանի ամիս առաջ, Կեսարիոյ մեր մեծ որբանոցը իր երախայ բնակիչները փոխադրեց լեռնակողին գտնուող այս հին վանքը: Ես հոս կը բնակիմ շաբաթը չորս օր և ժամանակին մնացեալ մասը կ'անցնեմ մօտակայ Թալաս աւանին մէջ:

«... Անցեալին, վանականներն ունեցած են ընտիր պարտէզներ եւ խոշոր լողաւազան մը: Պարտէզները լքուած են, բայց մենք վերանորոգեր ենք լողաւազանը՝ ի մեծ ուրախութիւն երախաներուն...:

«Ինչ կը վերաբերի որբանոցային գործին, ես շատ կը սիրեմ զայն: Յարաբերութիւնս որբանոցի տղոց հետ հոյակապ է և երբ Թալաս կը վերադառնամ Էֆքերէ անցուցած չորս օրերէս ետք, անոնք իրար կ'անցնին զիս ողջունելու համար: Մենք շատ հպարտ ենք մեր աւելի քան 3000 երախաներու ընդարձակ ընտանիքով» (Near East Relief տեղեկատու, Դ. տարի, թիւ 20, 20 Մայիս 1922, էջ 4): Պոլիս, «Գաղտնի Շրջանառութեան» համար հրատարակուած Տեղեկատուին խմբագիրն է եղած Նիւ Ճըրգիի Փրինսթըն քաղաքը ծնած օրիորդ Քերիս Միլզ, որ 1922-ի ամրան իր գործունէութեան դաշտը փոխադրեր է Ազգերու Լիկային հովանաւորութեամբ գործող Չէզոք Տուն, որ 1918-ի Չինադադարէն ետք լծուեր էր, ի միջից այլոց, իսլամ ընտանիքներու մօտ գտնուող որբերու ազգային ինքնութիւնը

ճշդելով հայ որբերը հայ ազգին վերադարձնելու աշխատանքին:

Ուրիշ աղբիւր մը կը տեղեկացնէ թէ Մըրֆի Թուրքիայէն Լորընսի բնակիչներուն կոչ ուղղեր է որբերուն մէջ իր կատարած աշխատանքին օժանդակելու նպատակով 3000 տոլար հանգանակելու: Առետուրի Պալատը Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին համար ձեռնարկեր է 20,000 տոլարի նուիրահաւաքի և քուէարկեր է հասոյթէն 3000 տոլար տալ Մըրֆիին (The Universalist Leader, 104-րդ տարի, նոր շրջանի ԻԵ տարի, թիւ 16, 22 Ապրիլ 1921, էջ 21):

75 Ներկայ յօդուածին սեւագիր օրինակին մէջ այս նախադասութեան կը յաջորդէ հետեւեալ ջնջուած պարբերութիւնը. «Հոս պիտի յիշեմ դրուագ մը: Թուրքի հետ ամուսնացած կին մը, իմացած ըլլալով որ իր զաւակը անապատի մէջ գտնուած ու որբանոց փոխադրուած է, իր ամուսնոյն հետ կը ներկայանայ եւ կ'ուզէ որ զաւակը իրեն յանձնուի: Դժուար էր զոհողութիւններով փրկուած հայորդին դարձեալ թուրքին յանձնել: Հետեւաբար պզտիկը Ազգ. առաջնորդարան յանձնուեցաւ եւ վերջէն իմացայ որ զաղտնի Լիբանան փոխադրուած է»:

76 Սեւագիր օրինակն ունի ջնջուած երկու պարբերութիւն: Սամուէլեան հոն կը նշէ. «Կրօնական դաստիարակութեան հարցի նկատմամբ Նպաստամատոյցի հիմնական ծրագրին մաս կը կազմէր որբերը մեծցնել իրենց ծնած դաւանանքին մէջ: Արդէն տեսանք թէ Կաթողիկէ եկեղեցւոյ զաւակ շատ փոքրաթիւ տղաք զատուած ու ուրոյն որբանոց մը կազմուած էր:

«Մնացածը ընդհանրապէս Լուսաւորչականներ էին, որոնց մէջ կային նաեւ փոքր թուով Բողոքականներ: Հետեւաբար մասնաւորապէս որոշուած հայ քահանայ մը, Տէր Դիոնիս քահ. Տրէզեան, որբանոցներէ ներս արարողութիւններ կը կատարէր եւ կրօնական դաստիարակութեան կը հսկէր: Բարձրաստիճան հայ եկեղեցականներ ալ երբեմն կ'այցելէին»:

77 Սեւագիր օրինակին մէջ այս պարբերութիւնը շարադրուեր է այսպէս. «Կը յիշեմ յուզիչ արարողութիւն մը, որ տեղի ունեցաւ Անթիլիասի որբանոցին մէջ: 1925 Մարտ 29-ին երջանկայիշատակ Սահակ Բ. հայրապետը Տէր Խաղ, Սուրէն եւ Խաչատուր վարդապետներով եւ քահանայ հայրերով շրջապատուած որբանոց ժամանեց: Յատկապէս պատրաստուած բացօթեայ եկեղեցւոյ մէջ պատարագելէ յետոյ, մեծ թափօրով ուղղուեցաւ դէպի որբանոցի քովէն հոսող Անթիլիասի գետակը, ուր քառասուն եւ երեք մօտ տասը տարեկան հայորդիներ պիտի մկրտուէին: Տեսարանը շատ յուզիչ էր, աւագանածեւ ջուրին մէջ վշտակիր Հայրապետը զանոնք սուրբ միտոնով օծելէ յետոյ արտասուաթոր աչքերով հետեւեալ յատկանշական խօսքերը ըրաւ. «Մեր պատմութեան մէջ տասնհինգ դարերէ ի վեր մկրտութեան նման հանդէս տեղի ունեցած չէ: Ուրեմն Ս. Գրիգոր

Լուսաւորչի կողմէ Արաճանիի մէջ կատարուած մկրտութեան մէկ կրկնութիւնն է այս: Որք մանուկները մայրերու, սակայն [նաեւ] մեր հինաւորց ու պանծալի եկեղեցոյ զաւակներն են, հիմա հոգիով ալ ծնած՝ ձեզի կը յանձնեն այն հաւատքով թէ մինչեւ վերջն ալ այսպէս պիտի պահէք»»:

78 Գրաշարական սխալով տպագրուեր է *գործի*:

79 Սեւագիր տարբերակին համաձայն՝ «Նահիր Իպրահիմի մէջ մալարիան աներ կը գործէր եւ ութը մանուկներ զոհելէ վերջ որբանոցը կը քանդուէր եւ որբերը Ճիպէյլ եւ Անթիլիաս կը փոխադրուէին»:

80 Սեւագրի տարբերակը կը նշէ. «Բերնի առողջապահութեան գործը չորս տարուայ ընթացքին 60 առ հարիւրէն 90 առ հարիւրի բարձրացած էր: Այս հայորդիներու առողջապահութեան հսկող ամերիկացի բժիշկներն էին Տոքթօրլներ Կէնէվէր, Տիփ եւ Տատ, հայ բժիշկներ՝ Տոքթ.ներ Խ. Գրիգորեան, Ա. Պէգճեան, Մանուկեան, Հատիտեան, ակնաբոյժ Ա. Գալփագեան եւ ատամնաբոյժ Տոքթ. Յ. Սրապեան»:

81 Սեւագիր օրինակին հետեւեալ տեղեկութիւնները կը բացակային տպագիր օրինակէն.- Նպաստամատոյցի ընդհանուր քարտուղար Չարլս Վիքրին էր որ առաջին անգամ յղացաւ նման կազմակերպութեան մը անհրաժեշտութիւնը եւ զայն կոչեց Near East League ... եւ սկսան որբանոցներու մէջ եւ դուրսը մասնաճիւղեր հիմնուիլ: ... Ֆրանսական հոգատարութիւնը բարեացակամ էր Նպաստամատոյցին հանդէպ: 1924 Օգոստոսին, Նպաստամատոյցի նոյն ատենաւայ տնօրէն Չարլս Ֆաուլ Բարձր Քոմիսէրութեան դիմելով Որբերու Միութեան վաւերացումը ձեռք կը ձգէր: Ահա Բարձր Քոմիսէրութեան 1924 Օգոստոս 16 թուակիր պաշտօնագրէն յօդուած մը:

«Near East League-ի կազմութիւնը երկու պայմաններու տակ շատ նպատակայարմար կը գտնենք: Ա. Խստի արգիլուած է քաղաքականութեամբ եւ բրօքականտով զբաղուիլ: Բ. Անհրաժեշտ է որ տեղական կառավարութեան օրէնքներն ու պաշտօնեաները յարգուին:

«Այս հիմերուն վրայ Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ ուր անդամներ կան կրնան կազմակերպուիլ:

(Ստոր[ագրութիւն]) Քօլօնէլ Տէլմաս»:

... Պէյրութի ակումբին բացումը 1926 Փետրուարին մեծ շուքով տեղի ունեցաւ: Ներկայ էին բազմահարիւր որբեր եւ մեծաթիւ ազգայիններ: Երջանկայիշատակ Սահակ Բ. հայրապետ խօսք առաւ: Ներկայ էին ֆրանսական Բարձր Քոմիսէրութեան ներկայացուցիչները, Նպաստամատոյցի տնօրէնն ու ամերիկացի պաշտօնեաներ: Խորհրդատու մարմնին կողմէ խօսեցաւ տիար Մ[իհրան] Տամատեան: Նման շուքով նաեւ տեղի կ'ունենար Հալէպի ակումբին բացումը:

- ⁸² Մերձավոր Արեւելքի Որբերու Միութեան 14 էջերէ բաղկացեալ եւ Հալէպի Արաքս տպարանի գլաններէն անցած «Պայքար Կենաց» պարբերականին մէջ յայտարարուած է թէ բոլոր թղթակցութիւնները հարկ է յղել ուղղակի Վոամ Յ. Սամուէլեանի հասցէին (Near East Relief, Beyrouth-Syrie): Մեր տրամադրութեան ներքեւ գտնուող օրինակին «Մերձավոր Արեւելքի Միութեան Նպատակը» խորագրեալ հայերէն եւ անգլերէն առաջնորդող գրութիւններուն աւարտին գտնուող Յ. Ա. Պաղտիկեան ստորագրութիւնը սև մելանով ջնջուեր եւ ի փոխարէն վերնագրերուն վերելը գրուեր է *Խմբագրական*: Այս միակ համարին մէջ կը հանդիպինք գրութիւններու ստորագրուած Համբարձում Պէրպէրեանի, Հենրի Ռ. Մըրֆիի, Գ. Գապպէնճեանի, Ողիմպոսի եւ Վոամ [Սամուէլեան]ի կողմէ:
- ⁸³ Այս գրութեան սեւագիր տարբերակը կը կրէ «Դէպի՛ Երկիր» խորագիրը: Երկու տարբերակներն ալ գրի առնուեր են քարիւղի Շէլ Ընկերութեան համարակալական թուղթերու վրայ: Գրութենէն կարելի է ենթադրել թէ Վոամ Սամուէլեան կը ծրագրէր Հայաստան ներգաղթել, ինչպէս արդէն ներգաղթեր էր Յակոբ Տեմիրճեանի հետ ամուսնացած իր քոյրը՝ Հայաստան: Յակոբ Տեմիրճեան Լիբանանի մէջ եղեր է ակնառու վարպետ երկաթագործ, որ իր յաջող հաստատութիւնը նախընտրեր է փակել ու մեկնիլ Հայաստան: Երեւանի մէջ իր վարպետ երկաթագործի հետքերը թողուցած է Ծածկած Շուկայի դարպասին, Մատենադարանի եւ խորհրդարանի (նախկին Կեդրոնական Կոմիտէի) շէնքի բոլոր երկաթեայ դուռներուն եւ պատուհաններուն, Հրազդանի կամուրջի բազրիքներուն եւ այլ կառոյցներու վրայ, ինչպէս նաեւ հասցուցեր է իրենց ընդգրկած մարզերուն մէջ նկատելի յաջողութիւն արձանագրած երկու մանչ՝ Վահագն եւ Բաբգէն, եւ երեք աղջիկ՝ Անահիտ, Էլիզ եւ Սոնա, զաւակներ, որոնցմէ մասնագիտութեամբ բժիշկ Վահագն շրջան մը վարեր է առողջապահութեան փոխ-նախարարի պաշտօնը: Կը թուի թէ Սամուէլեանի հայրենադարձութեան ծրագիրը չէ իրագործուած՝ նախատեսուած հերթական կարաւանին ջնջման հետեւանքով, ինչպէս էր պարագան տողերս գրողին հօր, որուն Եղիսաբեթ անուն քոյրը վերջին կարաւանով հաստատուեր էր Հայաստան իր ամուսնոյն՝ պաղտատաբնակ Մարտիրոս Երանոսեանի հետ:



*Վռամ Սամուելեան իր երկու թոռնուհիներուն, ծախէն՝ Մարալ եւ Անի
Թոմպագեաններու հետ, 1967-ին, Պէյրուս:*

Sehr geehrte Herr Herrmann, ich habe heute die Ehre, Ihnen meine herzlichsten Grüße zu übermitteln. Ich hoffe, Sie befinden sich wohl und sind mit Ihrer Arbeit zufrieden. Ich habe heute einige Gedanken über die Zukunft unserer Bewegung geäußert. Ich finde, wir müssen uns mehr auf die praktische Arbeit konzentrieren und weniger auf theoretische Diskussionen. Ich hoffe, Sie finden das auch so. Ich werde Sie in Kürze wieder kontaktieren. Mit freundlichen Grüßen, Herrmann.

Ich habe heute auch einige Gedanken über die Zukunft unserer Bewegung geäußert. Ich finde, wir müssen uns mehr auf die praktische Arbeit konzentrieren und weniger auf theoretische Diskussionen. Ich hoffe, Sie finden das auch so. Ich werde Sie in Kürze wieder kontaktieren. Mit freundlichen Grüßen, Herrmann.

x x x

Sehr geehrte Herr Herrmann, ich habe heute die Ehre, Ihnen meine herzlichsten Grüße zu übermitteln. Ich hoffe, Sie befinden sich wohl und sind mit Ihrer Arbeit zufrieden. Ich habe heute einige Gedanken über die Zukunft unserer Bewegung geäußert. Ich finde, wir müssen uns mehr auf die praktische Arbeit konzentrieren und weniger auf theoretische Diskussionen. Ich hoffe, Sie finden das auch so. Ich werde Sie in Kürze wieder kontaktieren. Mit freundlichen Grüßen, Herrmann.

Ich habe heute auch einige Gedanken über die Zukunft unserer Bewegung geäußert. Ich finde, wir müssen uns mehr auf die praktische Arbeit konzentrieren und weniger auf theoretische Diskussionen. Ich hoffe, Sie finden das auch so. Ich werde Sie in Kürze wieder kontaktieren. Mit freundlichen Grüßen, Herrmann.